Կնոնց բնաւորութիւնը այնչափ դէշ է որչափ որ կընայ ըլլալ , անոնք Մտուածոյ ու մարդոց դէմ կը պատերազմէին : Կնոնք աս աշխարհը կու գան մեղ փորձելու ու մեղքի առաջնորդելու , և աս պատճառաւ կը կորսնցնուեն մեր հոգիները յաւիտեան : Սատանան՝ որ Տէր Յիսուսը փորձեց , կ'երեւայ թէ կ'ուզէր կորսնցնուիլ Մտուածոյ մեր փրկութեան համար ունեցած գաղափարը , և երկինքին վրայ մեր ունեցած բոլոր յայտերը : Իր անօրէնութեանը մէջ ինքն համարձակ է . բայց բոլոր իր մեղքերը և իր հրեշտակներուն մեղքերը իրենց զլուռն վրայ պիտի իյնան . յաւիտենական կրակ պատրաստուած է իրենց համար , և կը դողան երբոր կը խորհին գալու գատաստանին վրայով :

Մ . Բարի հրեշտակներուն իյնալէն ստրկեցէր որ բարի անձ մը սուրբ վիճակի մէջ անգամ կընայ մեղք գործել ,

թէ որ անիկայ շատ զգուշութիւն չընէ , ու Մտուած ալ չպահպանէ զինքը : Սատանան և իր հրեշտակները մեղանչեցին երկինքէն մէջը . Եղամ ու Կրան ալ դրախտին մէջը :

Բ . Դարձեալ ստրկեցէր թէ մեղաւոր մը կընայ ապականել շատ բարի մարդիկներ ու շատերը մեղքի մէջ ձգել : Սատանան մեղանչեց և շատերն ալ իրեն հետեւեցան . զգոյշ կեցիր չար ընկերներէն՝ որ ինքզինքը չկորսնցնուեն , և զգոյշ կեցիք ուրիշները չարութեան մէջ ձգելէն՝ որ դուք չկորսնցնուէք անոնք :

Գ . Սեղաւոր մը չպիտի թողուի երկինքէն մէջը մինչև անգամ թէ որ հրեշտակ մըն ալ ըլլայ :

Սատանան երկինքէն դուրս ձգուեցաւ և իր հրեշտակներն ալ :

Դ . Յիշեցէր որ դուք մեծ թշնամի մը ունիք՝ սատանան , որ խորամանկ ու զորաւոր է փորձութեան մէջ : Չար մարդոց սիրտերուն ինքը կը տիրէ . համարձակ կը փորձէ ամէն մարդ , բնաւ մէկն ազատ չէ իր փորձութենէն : Ինքը մեր բարձրացեալ և սուրբ Փրկիչն ալ փորձեց :

Ե . Բայց իրմէն աւելի մեծ մեկը կայ՝ մեր Տէր Յիսուսը , որ կընայ կորսնցնուել սատանան և անոր ամէն գործքերը . անիկայ աս դիտաւորութեան համար աշխարհ եկաւ . և աս դիտաւորութիւնը բուն իր ստերը պիտի կաւտարէ և բոլոր աշխարհ Յիսուսին իշխանութեանը տակ որ պիտի ըլլան :

Օ . Օրձներ Մտուած իր մեր վրայ ունեցած սիրոյն ու մեղի պէս մեղաւորներուն տուած Փրկչին համար , որ մեղանչող հրեշտակներուն չտուաւ : Կնոնք փրկուելու պատճառով ինչ չուին , բայց մենք ունինք . ձեռք ձգելու անիկայ սիրով . ապաշխարներ և հաւատանք Տէր Յիսուսին , ու ինքը պիտի տայ մեզի զօրութիւն ու շնորհք առեւ և դէմ կենալ սատանային և անոր ամէն գործերուն . և ան ատենը անիկայ պիտի փախել մեզմէ , և ան թշուառ բազմութեան մէջ չպիտի ըլլանք որոնց պիտի ըսէ վերջն օրը , “Մեկըի՛ գացէք ինձմէ անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը , որ պատրաստուած է սատանային ու իր հրեշտակներուն” :

ՄԵՍՆ Գ

ՄԵՐԴՈՒՆ ՎՐԵՅ

ա . ԷՍՏՈՒՑՈՒՅ ԱՍԵՂՆՕՆԵՂՆՈՐՑՈՒԹԵՆԵԸ
ՎՐԵՅ :

Չձնոր . ա . 24-31 : ա . 1-7 , 18-25 :

Հ . Քանի՞ օրուան մէջ ստեղծեց Մտուած երկինքն ու
երկիրը :

Պ . Վէջ օրուան մէջ : Չձնոր . ա . 26-31 :

Հ . Ո՞ր օրը ստեղծեց մարդը :

Պ . Վէջերորդ օրը : Չձնոր . ա . 26-31 :

Հ . Ո՞վ էր առաջին մարդը :

Պ . Ադամ : Չձնոր . բ . 18 : ա Սորնի . ժԷ . 45-47 :

Հ . Ո՞վ էր առաջին կնիկը :

Պ . Եւա : Չձնոր . գ . 20 :

Հ . Ինչէ՞ն ստեղծեց Մտուած մարդը :

Պ . Երկրի հողէն : Չձնոր . բ . 7 : ա Սորնի . ժԷ .

47 :

Հ . Ինչէ՞ն ստեղծեց Մտուած կնիկը :

Պ . Ադամին կողէն : Չձնոր . բ . 21 , 22 :

Հ . Երբոր Ադամ ու Եւան ստեղծուեցան , շահահաս
մարդի՞կ էին :

Պ . Ե,յո՛ , կատարեալ մարդիկ էին :

Հ . Տերը անոնց բանական ու անմահ հոգի տուա՞ւ :

Պ . Հրամարեա :

Եւ Տէր Մտուած զեանի հողէն շինեց մարդը , և անոր քիթին ծակերուն կենդանութեան շունչ փչեց , մարդը կենդանի հողի եղաւ : Օձնոր . ք . 7 : Եւ ասոնք հողը երկիրը պիտի դառնայ՝ առջի եղածին պէս , ու Հողին Մտուծոյ պիտի դառնայ , որ անիկայ տուաւ : Ժող . Ժք . 7 :

Հ . Եղամ՝ ու Եւան որո՞ւն պատկերին նմանութեանը ստեղծուեցան :

Պ . Մտուծոյ պատկերին նմանութեանը : Օձնոր . ան . 26 , 27 : Պող . ք . 9 , 10 :

Հ . Մտուած ի՞նչպէս ստեղծեց մարդը :

Պ . Ուղեղ : Ժող . ք . 29 :

Հ . Կնիկը ինչ՞ով համար ստեղծեց Մտուած :

Պ . Սարդուն օգնելու ու անոր ընկեր ըլլալու համար : Օձնոր . ք . 18 : ան Կորնթ . Ժա . 7-12 : Եփես . ք . 23-25 : Պող . ք . 18 , 19 :

Հ . Մտուած եօթներորդ օրը ի՞նչ ըրաւ :

Պ . Հանգստացաւ : Օձնոր . ք . 2 , 3 :

Հ . Մտուած որո՞ւն տուաւ աշխարհը :

Պ . Մտուած բոլոր աշխարհը մարդուն տուաւ , ու զինքն անոր վրայ տէր ըրաւ : Օձնոր . ան . 26-28 : Թ . 2 : Սող . ք . 5-8 :

Հ . Եղամքն առաջին անցուցած օրը որո՞ն էր :

Պ . Շարափօրը :

Սեց օրուան մէջ Տէրը երկինքն ու երկիրը ստեղծեց . վեցերորդ օրը իր ուրիշ գործերը ընցունելէն ետքը մարդն ստեղծեց արու և եղ : Եւ աջին մարդուն անունն Եղամ էր , և առաջին կնկան անունը Եւա էր : Եղամ՝ երկրի հողէն ստեղծուեցաւ , և Եւան Եղամին մէկ կողէն : Տէրն անոնք կատարեալ մարդիկ ստեղծեց , բանական ու անմահ

հողիներով , և իր պատկերին նմանութեանով : Եւնոր արդար ու սուրբ էին , բոլոր բարիին հակամտելով : Եղեկ չէր մարդուն որ միանկ ըլլար , և կնիկը ստեղծուեցաւ իրեն օգնական ըլլալու համար , և Մտուած անիկայ Եղամին կնիկ ըլլալու տուաւ , ու ետքը Մտուած պատուերեց անոնց որ աճին ու բազմանան և երկիրը լեցունեն , ու երկիրն անոնց ձեռքը յանձնեց ժառանգութեան համար որ իշխեն անոր : Հետեւեալ եօթներորդ օրը , սուրբ հանգստութեան օրն էր , և Մտուած իր գործերէն հանգստացաւ ու մարդն ալ իրեն հետ հանգստացաւ :

Ե . Մտուծոյ վերջին և ազնիւ գործն է մարդը՝ որ կանգուն անձ ունի՝ և դաշտերուն անասուններէն աւելի զեղեցիկ է , և բանական ու անմահ հողի ալ ունի , որ անիկայ անասունները չունին :

Ի . Մտուած մարդն իր պատկերին նմանութեանը ստեղծեց զիտութեանով ու ճշմարիտ սրբութեանով և երկրի իշխողութեան ունենալով : Մտուած մարդն արդար ստեղծեց . անիկայ մարդը գլուխ ու ուղեղ սիրտ մը ունէր . անիկայ կատարեալ էր : Մտուած նայեցաւ իր գործերուն ու ըսաւ որ բարի է : Փառաւորեալ ու սուրբ եակ մին էր մարդը , երբոր Մտուած ստեղծեց անիկայ :

Պ . Սարդն ստեղծուեցաւ արու և եղ . ամուսնութեան վիճակի մէջ : Կնիկը երկի մարդուն համար եղաւ : Եւնոր՝ համար երկիր կնկանը գլուխն է . և աս առաջին ամուսնութիւնը որ մեր նախնիքներուն մէջ եղաւ , բոլոր իրենց տղայներուն վայելուչ հարսանեաց օրինակն է :

Պ . Մտուած աշխարհքը մարդուն տուաւ իր ժառանգութեանը պէս . անոր համար մեք բոլոր կենդանիներուն վրայ կ'իշխենք : Եւնոր մեզմէ կը վախնան բայց մեք որդմութեանով տիրելու ենք անոնց վրայ , և աշխարհ ու անոր մէջ եղած բաներն անանկ կեցով մը գործածելու ենք , ինչպէս որ Մտուծոյ համակն է :

Ե . Եղամքն երկրի վրայ անցուցած առաջին օրը Շարափն էր . անիկայ ան օրը Մտուծոյ հետ անցուց . ասով Մտուած Եղամքն կը ստիպուցուէ թէ մարդու առաջին և բարձրագոյն և ամենաբարի պաշտօնը Մտուծոյ սէր ունենալ և իրեն ծառայութիւն ընելն է :

Բնանկ մենք երկրպագութիւն ընելու (ենք Տերոջը մեր Ստեղծողին, և մեր առաջին և բարձրագոյն ու լուսաղոյն գործն է զինքը սիրել ու պաշտել :

Է. ԴԻՄԻՏԻՆՆԵՐ ՍԵՐՄՈՆ :

ՆՊՈՒՆՆԵՐ . Է . 8-15 :

Ճ . Բստուած մարդը ստեղծելէն ետքը ի՞նչ ըրաւ ա- նոր համար :

Պ . Ճ աճելի պարտեղ մը անկեց անոր համար՝ զրախ- տը՝ որ հոն բնակի : ՆՊՈՒՆՆԵՐ . Է . 8 :

Ճ . Բդամին ու Եւային համար ուտելու ի՞նչ բուսաւ պարտեղին մէջը :

Պ . Բմէն պատուական պտուղները : ՆՊՈՒՆՆԵՐ . Է . 9 :

Ճ . Բս դուարձալի պարտեղը ի՞նչպէս կը ջրուէր :

Պ . Գետով մը : ՆՊՈՒՆՆԵՐ . Է . 10 :

Ճ . Տէրը անոնց ի՞նչ գործ տուաւ որ պարտեղին մէջ գործեն :

Պ . “ Գործել ու պահել անիկայ ” : ՆՊՈՒՆՆԵՐ . Է . 15 :

Ճ . Տէրը վար իջաւ ու խօսեցաւ Բդամին հետ՝ դէմ առ դէմ :

Պ . Ճ րամերես : ՆՊՈՒՆՆԵՐ . Գ . 8 :

Ճ . Բդամ՝ ու Եւան ի՞նչ վիճակի մէջ էին :

Պ . Սուրբ ու երջանիկ վիճակի մէջ էին, ու ինչ որ կ'ուզէին՝ ունեցան : ՆՊՈՒՆՆԵՐ . Ը . 31 :

Քարդը ստեղծուելէն ետքը Բստուած ինքիբնէն պար- տեղ մը անկեց, և աճեցուց հոն ամէն ծառ որ հաճելի էր տեսնելու՝ և բարի ուտելու . և առատօրէն կը ջրուէր զե-

տով մը . և հոն դրաւ իր ստեղծած մարդը որ վայելէ աս զեղեցիկ և առատ պարտեղը . մարդուն գործը պարտեղը գործել ու պահելն էր . և Տէրն ինք վար կ'իջնէր ու անոնց հետ կը խօսէր :

Ե . Քարդուն առաջին վիճակը սուրբ ու երջանիկ էր . Բդամ՝ ու Եւան Բստուածոյ հետ էին . և տեսան ու սիրեցին և պատուեցին զինքն ամէն բաներէն աւելի : Բնոնք Բս- տուածոյ անկած պարտեղին մէջը բնակեցան . անոնք անօ- թուութիւն չէին դիտեր . ոչ ալ ծարուծութիւն, ոչ չի- ւանդութիւն, ոչ ալ ցաւ, ոչ մեղք, ոչ ալ մահ : Բնոնք երկիրի հրեշտակներուն պէս սուրբ ու երջանիկ էին : Բս էր մարդուն առաջին և խիստ լաւ վիճակը . սըր- բութիւնն ու երջանկութիւնը միշտ մէկ տեղ կ'երթան :

Բ . Բստուածոյ մեծ բարութիւնն էր որ Բդամն ու Եւան այնչափ առատութեամբ լեցուց . և անոնք պարտաւոր էին զինքը սիրել ու շնորհակալ ըլլալ իրեն՝ իր անթիւ բա- րեղարութիւններուն համար : Բստուածոյ մեծ բարութիւնը չպակսիր Բդամին տղաքերուն . ինքն է որ մեզ կը նախա- ինամէ, ու կու տայ կեանք և կերակուր ու հանդերձ և ան ամէնը որ կը վայելնէր երկրի վրայ, և պարտաւոր ենք սիրելու զինքն ու շնորհակալ ըլլալ իրեն՝ իր բարու- թիւններուն համար :

Գ . Թե՛ որ ուզենք երջանիկ ըլլալ և Բստուածոյ բա- րութիւնն ու սէրը և իր տեսութիւնը վայելիլ, պարտինք սուրբ ըլլալու ջանալ : Բստուած պիտի չձգ մեզ երկրի վրայ պարտեղի մը մէջ, հապա երկիրն եղած պարտեղը պիտի տանի մեզ յաւիտեան իր հետը բնակելու համար : “ Բարութիւն մը պիտի չպակսեցունէ ուղղութեամբ քա- լողներէն ” : ՍՊՈՒՆՆԵՐ . ԼԳ . 11 :

Դ . Քարդը ստեղծուեցաւ թիր և գործունեայ ըլլալու համար՝ գործելով ու պահելով պարտեղը : Բն պարտեղին զեղեցիկութիւնը և առատութիւնը բուն իր հոգ տանելէն կախում ունէր . ասանկ ալ՝ մենք ժրջանն ու ճարտարա- միտ ըլլալու ենք, և կրնանք բակ թէ՛ ան որ շատ աշխա- տասեր է՝ ուրիշներէն աւելի յաջողութիւն կը գտնէ : Գատարկակեաց կեանքի մէջ յաջողութիւն ու երջանկու- թիւն չկրնար ըլլալ . դատարկութիւնը դէպի մեզքը՝ և

Թշուառութեան կը տանի մարդը . Թէ որ մարդս ընկեր-
բան մը շունենար , հազար անդամ աւելի գէշ պիտի
ըլլար :

Է . ՄԵՐՄՈՒՆ ՓՈՐՁՈՒԹԵԱՆԵՐ ԱՐԵՅ :

Չանդ . Է . 15-17 :

Հ . Ի՞նչ էին ան երկու մասնաւոր ծառերուն անուն-
ները , որոնք դրաւ Մտուած պարտեզին մէջը :

Պ . Չառ կենաց , ու ծառ գիտութեան բարոյ և
չարի :

Հ . Տէրը աս ծառերուն որմէ՞ն շուտե՛լ հրամայեց
մարդուն :

Պ . Բարիի ու չարի գիտութեան ծառէն : Չանդ .
Է . 16 , 17 : Գ . 2 , 3 :

Հ . Ինչո՞ւ Տէրը աս ծառը պարտեզին մէջը տնկեց ու
հրամայեց մարդուն որ շուտէ անկեց :

Պ . Ընկից փորձելու համար որ նայի Թէ իր պատուի-
րանքները պիտի պահէ :

Հ . Թե՛ որ մարդը սիրէր Մտուած և անոր պատուի-
րանքները պահէր , ու ան ծառէն շուտեր , ի՞նչ շահ
պիտի ունենար Մտուածմէ :

Պ . Մտուածոյ բարեկամութիւնը :

Հ . Եւ Թէ որ Մտուած չսիրէր և անոր պատուի-
րանքները չպահէր , հապա աս ծառէն ուտեր , ի՞նչ
պիտի շահէր :

Պ . “Մահը” . քանզի Տէրն ըսաւ , “Ընկե կերած
օրդ անշուշտ պիտի մեռնիս” : Հարմ . Է . 12 : Գ . 23 :
Յո՛ւ . Գ . 14-36 : Է . 24 : Եւ Կորնթ . Գ . 9 : Յով .
Եւ . 15 :

Հ . Աղամ ու Եւան կարծի էին Մտուած սիրել և
սա պատուիրանքը կատարեալպէս պահէլ :

Պ . Հրամարես : Դար . Է . 29 :

Հ . Տէրը մեր առաջին ծնողքը միայն իրենց համար
փորձութեան մէջ ձգեց , Թէ իրենցմէ ետքը եղած տղաք-
ներուն համար ալ :

Պ . Իրենց տղաքներուն համար ալ : Չանդ . Է . 1 ,
2 : Հարմ . Է . 12-19 : Եւ Կորնթ . ԺԷ . 15 , 21 :
Գարձ . ԺԷ . 29 :

Հ . Թե՛ որ մեր առաջին ծնողքը իրենց փորձութեանը
մէջ սուրբ ու երջանիկ մնային , անոնց տղաքները ի՞նչ
պիտի ըլլային :

Պ . Ընոնք ալ սուրբ ու երջանիկ պիտի ըլլային

Հ . Բայց Թէ որ անոնք մեղաց ու թշուառութեան մէջ
իյնային , մենք ալ ի՞նչ պիտի ըլլայինք :

Պ . Սենք ալ անշուշտ մեղքի՛ ու թշուառութեան մէջ
իյնալու էինք . ինչպէս որ եղաւ :

Հ . Մտուած բարի ծնողքերուն որդւոյը որդմութիւն
կը ցուցնու՞ն :

Պ . Հրամարես , մինչև անոնց հազար ազգը : Եւց
Ի . 6 :

Հ . Եւ չար ծնողքներու չարութիւնը անոնց տղոցը կը
հատուցանու՞ն :

Պ . Այո՛ . մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը :
Եւց Ի . 5 :

Աղամին ու Եւային պարտնէն կը Մտուած սիրել ու
իրեն նազանդիլ կատարեալպէս՝ որ ստեղծեց անոնք ու
բոլոր ունեցածնին ինքը տուաւ անոնց : Եւ Մտուած
փորձեց անոնք Երախտին մէջը , գիտալու համար Թէ

արդեօք պիտի սիրե՞ն ու ֆազանդի՞ն իրեն՝ թէ չէ : Անոնց մէկ պարզ ու դիւրին պատուէր մը տուաւ որ պահեն . և Մատուծոյ կամայր սահմանադրութիւնն էր փորձել աւանդը՝ չէ՛ թէ միայն իրենց համար , հապա իրենցմէ ետքը եղած իրենց տղաքներուն համար ալ : Մատուած ծնողքները իրենց տղոցը տեղը դրաւ . աս յայտնի կը տեսնենք , ինչու որ երբոր ծնողքներն ինկան , բոլոր տղաքներն ալ ինկան . որպէս թէ Տէրն ասանկ ըսած էր Ադամին ու Իւլային . « Իս կը հաստատեմ աս բարույ ու չարի գիտութեան ծառը պարտեղին մէջ , որ փորձեմ ձեզ թէ արդեօք պիտի սիրե՞ք ու ֆազանդի՞ք ինծի : Թե՛ որ աս ծառէն չուտէք՝ հապա զի սիրէք ու ինծի ֆազանդիք , անտանը ձեզի ու ձեզմէ ետքը ձեր տղաքներուն ալ : Աստուած ես պիտի ըլլամ : Այ՛ չար՝ ո՛չ ալ անոնք ընաւ չար բան մը պիտի գիտնան , հապա բարի ու միայն բարի : Իսց թէ որ աս ծառէն ուտէք և անանկ ինծի ֆազանդիք , ու իս ձեր Մատուածը մէկ դի ձգելու ըլլաք , ես ոչ ձեզի՛ ոչ ալ ձեզմէ ետքը եղած ձեր տղաքներուն Մատուած պիտի ըլլամ : Իմ շնորհքս պիտի հեռանայ ձեզմէ . դուք և անոնք պիտի կորսնցունէք բոլոր ձեր բարութիւնները և երջանկութիւնները , ու շարունակ չարը պիտի գիտնաք : Չեր՛ բոլոր սերունդը մեղք , աշխատութիւն , տրտմութիւն , ցաւ , մահ պիտի ունենան թէ՛ աս աշխարհիս մէջ՝ ու թէ՛ դայու աշխարհիս մէջ . ես ձեր առջև կը դնեմ կեանքն ու մահը ձեզի ու նաև ձեր տղաքներուն համար՛ » :

Աս էր մեր առաջին ծնողացը փորձութիւնը , և անոնք բոլորովին կարող էին անոր համբերել : Անոնք կարող էին կայնելու , բայց թէ որ ուղիքն՝ կրնային իյնալ . ուստի անոնք որ ինկան՝ իրենց յանցանորմն էր :

Ե . Ադամն ու Իււան փորձուցան , և չէ թէ միայն իրենց համար , հապա իրենց տղայոց համար ալ , այսինքն՝ մարդոց ցեղին ամենուն համար : Թե՛ որ անոնք կայնէին , մենք ալ անուշտ պիտի կայնէինք . թէ որ անոնք իյնային , մենք ալ անուշտ պիտի իյնայինք , ինչպէս որ եղաւ : Այսպէս մեր առաջին ծնողքներուն հետ մենք ալ փորձուցանք : Իււ անոնք փորձուցան բոլորովին բաց ու յայտնի

զիւրին փորձութիւնով մը՝ որ մեծ ու երևելի փորձ մըն էր ան . ինչու որ չէ թէ միայն իրենց երջանկութիւնը երկինքին մէջ կամ թշուառութիւնը դժոխքին մէջ անկէց կախուած ունէր , հապա իրենցմէ ետքը եղած իրենց միլիոնաւոր տղաքներուն ալ ևրջանկութիւնը երկինքին մէջ՝ ու թշուառութիւնը դժոխքին մէջ :

Ի . Մատուած ասանկ հաճեցաւ որ անոնք փորձուին իրենց համար՝ ու մեզի իրենց տղաքներուն համար . ինքը մեզի հարցոյց . անտանը մեր ծնած չէինք . բայց թէ որ ծնած ըլլայինք , անուշտ պիտի ընդունէինք աս բանը . ուրեմն զգանք որ Մատուծոյ կամբը անչափ իմաստուն ու արդար է , և թէ ամէն բաները շտակ ըրած է :

Գ . Մատուած ան ատենն մինչև հիմա միշտ այնպէս կ'ընէ , այսինքն ծնողքները իրենց զաւկներուն տեղը բռնել կու տայ աւելի կամ նուազ աստիճանով մը . ինչպէս որ ծնողքներն են , անանկ ալ ընդհանրապէս տղաքները պիտի ըլլան . թէ որ ծնողք ենք՝ բարի ըլլանք , որ մեր տղաքներուն ալ բարի ըլլայ . թէ որ բարի ծնողաց զաւկներ ենք՝ աշխատինք անոնց նմանիլ . և թէ որ չար ծնողաց զաւկներ ենք , լանք Մատուծոյ առջևը անոնց չարութեանը համար , և ազօթեք իրեն որ մեզ արդաւարացունէ ու յաւիտեանիս կեանաց արժանի ընէ :

Վ . Տէրը փորձեց Ադամ ու Իււան՝ Վրախտին մէջը . անոնք Մատուծոյ տեղծուածներն էին , և պարտաւոր էին Վրիլ Մատուած ու անոր ֆազանդիլ . մենք ալ անոնց տղաքները՝ Մատուծոյ կը մերարեիրք և պարտինք զեքը սիրել ու իրեն ֆազանդիլ . մենք ալ փորձութեան մէջ ենք , բայց մեր փորձը տարբեր է անոնց առաջին փորձութեանէ : Աս է մեր փորձութիւնը . Մատուած կը սպասէ մեզի ամէն օր՝ տեսնելու թէ պիտի դառնանք իրեն ապաշխարելով ու հաւատարով իր Որդւոյն Յիսուսի Վրախտի : Աւտի լաւ գործածէք աս փրկութեան պատահու թիւնը որ ունինք :

Գ • ՄԵՐԴՈՒՆ ԵՈՒԵՉՈՒՆ ՄԻԶՂՅՐՆ ՈՒ ԻՅՆԱԼԸ :

Չանոթ • Գ • 1-13 :

Ն • Տէրը փորձեց Մարամ ու Լուան Գրախոսին մէջը • անոնք ինկան թէ չէ :

Պ • Լանկան :

Ղ • Կանոնք ճշտօտ ատեն կեցան պարտեղին մէջ իրենց մեղանքէն ու կոխակէն առաջ :

Պ • Չենք գիտեր ճշտիւ , բայց կ'երկայ թէ քիչ ատեն :

Ն • Ի՞նչ էր անոնց մեղքը :

Պ • Երգելեալ պտուղէն ուտելն էր :

Ն • Կանոնք ճիշտ առաջ կերաւ :

Պ • Լուան :

Ն • Լուան ի՞նչպէս կերաւ ան :

Պ • Սատանայէն փորձուելով : Յօհ • ք • 44 :

Ն • Սատանան ի՞նչ կերպարանքով ցուցուց ինքզինքը

Եւայլն՝ Երբոր փորձեց անկայ :

Պ • Օձի կերպարանքով : Չանոթ • Գ • 1-5 •

Ն • Մարամ ի՞նչպէս մեղանքեց :

Պ • Եւայլն փորձուելով : Չանոթ • Գ • 6 :

Ն • Կանոնք արգելեալ պտուղն ուտելէն ետքը շուտով գիտցան որ մեղանքեցին :

Պ • Նրամերես • և ամէցան ու վախցան : Չանոթ • Գ • 7 :

Ն • Երբոր Տէրոջը դալը լսեցին , ի՞նչ ըրին :

Պ • Ինքզինքնին պահեցին : Չանոթ • Գ • 8 : Երբ • Ի Գ • 24 :

Ն • Տէրն ի՞նչ ըսաւ Մարամին :

Պ • “ Ո՞ւր ես ” :

Ն • Մարամ ի՞նչ պատճառ բերաւ Տէրոջը անկեց պահուողներուն համար :

Պ • “ Վախցայ , ինչու որ մերկ էի ” : Կ • Գ • 20 : Գ • 18 :

Ն • Երբոր Տէրն անոնց մեղքը դորձելուն վրայով հարցուց , խոստովանեցան եթէ ինքզինքնին արդարացուցին :

Պ • Ինքզինքնին արդարացունել ուզեցին : Չանոթ • Գ • 11-13 :

Ն • Մարամ որո՞ւն վրայ ձգեց յանցանքը :

Պ • Լուային վրայ : Չանոթ • Գ • 12 :

Ն • Լուան որո՞ւն վրայ ձգեց յանցանքը :

Պ • Օձին վրայ : Չանոթ • Գ • 13 : Կ • ՏԻ՛ • Խ • 14 :

Խ Պրոբլ • Ժ • 3 :

Ն • Կանոնք ինքզինքնին արդարացունելը Տէրը ընդունեց :

Պ • Չէ , չընդունեց :

Ն • Ի՞նչ պետք էր որ ընէին :

Պ • Մեղքեղնին խոստովանելու էին : Ղ • Ժ • Ժ • 13 : Կ • Գ • 9 :

Ն • Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիորջը անոր վրայով որ էր մեղքերը կը ծածկէ :

Պ • “ Իր յանցանքները ծածկողը յաջողութիւն չգրաներ • բայց զանոնք խոստովանողն ու մէկզի ձգողը որը մուծիւն կը դանկ : Ղ • Ժ • Ի • 13 :

Մէկը չկրնար ճշտիւ հաստատուել թէ Մարամ ու Լուան Գրախոսին մէջը դրուելէն որչափ ատեն ետքը արգելեալ պտուղէն կերան , և սրբութեան ու երջանկութեան վե-

ճակէն՝ մեղքի ու թշուառութեան վիճակի մէջ ինկան . բայց կը կարծուի թէ շատ երկար աստի պիտի չըլլայ :

Ես իշխարուն առաջին դրողը Սատանան էր , որ պատեհութեան գտնելով՝ ինքզինքը օձի կերպարանքով ծածկեց և փորձեց կնիկը երբոր մինակ էր : Եւան անոր փորձութեանը մտիկ ըրաւ . ծառին վրայ նայեցաւ՝ որ պտուղը գեղեցիկ էր տեսնելու , և ուտելու բարի կը թուէր . կը փախքէր անիկայ ուտելու , և մանաւանդ անիկայ ուտելով կը կարծէր որ խնաստուն պիտի ըլլար , իր աչքերը պիտի բացուէին , և Եստուծոյ պէս պիտի ըլլար և բարին ու չարը պիտի զիտնար : Երաւ պտուղէն ինք կերաւ և իր երկամն ալ տուաւ , և ան ալ կերաւ : Երամ կերաւ անիկայ զիտութեամբ , խորհրդածութեամբ , կամու , ինչու որ « խաբուած չէր » : Կըք իր կնկանը խօսքին աւելի մտիկ ըրաւ , քան թէ Եստուծոյ պատուիրանքին . մեղք գործածունս պէս աչքերն ըրացուցան . զիտցան յանցանքնին : Խիղճներն տանջեց իրենք , ամէցան . և չէ թէ միայն ամբշցան , հապա փախցան ալ . անոնք Եստուծոյ ներկայութենէն ստակացին , և իրմէն փախան . բայց անօրուտ էր անոնց փախիլը : Եստուած կանչեց անոնք իր առջև . անոնք ինքզինքնին արդարացունելու ջանք ընելով՝ աւելի շատցուցին իրենց մեղքերը : Ենոնց պարտաւորութիւնը իրենց ըրած մեղքը խնարհաբար խոտովակնին ու ինքզինքնին Եստուածային ողորմութեանը յանձնելն էր . Եստուած չընդունեց անոնց ինքզինքնին արդարացունելը , ինչու որ մեղքը չկրնար արդարանալ :

Մ . Կուր հիմա հակըցար թէ ինչպէս մեղքը աս աշխարհքը մտաւ մեր բոլոր ստաւպանքներովը . մեղքը ստանային ձեռքովը բերուեցաւ՝ որ անիկայ ամէն արդարութիւններուն թշնամին է : Ենքն աշխարհի սկիզբէն մարդասպան է . երկնից ու երկրի մէջ մեղքին հայրն ինքն է . և ինկած հրեշտակներուն ու մարդոց չարութիւններուն համար՝ որ ինքն ըրաւ և կ'ընէ , պատասխան պիտի տայ դատաստանին օրը : Ենչպէս որ մեծագոյն մեղաւորը ինքն է , անանկ ալ բոլոր արեղբայրի մէջ ամենաթշուառ էակն ինքը պիտի ըլլայ :

Բ . Օգոյն կեցիք որ մէկու մը մտիկ չընէք երբոր կը

փորձէ մեղ զէշութիւն ընել տայու : Եւան մտիկ ըրաւ ու ինկաւ . թէ որ դուք ալ փորձութեան հետեւելու ըլլաք , դուք ալ պիտի իշխար : Սէկ զի՛ ձգեցէք չար փորձից , ո՞վ որ ըլլայ թող ըլլայ , ձեզմէ հետու թող կենայ , կամ դուք ինքզինքնիդ հեռացուցէք անկէց . մեր փրկչին օրինակին հետեւեցէք : Մատթ . գ . 1-11 : Ժդ . 21 , 33 :

Գ . Կուր բուն մեր զօրութեանը մի՛ սպաւնիք . և թէ Երամ ու Եւան սուրբ վիճակին մէջն ըլլալով ինկան , մենք որչափ դիւրութեամբ պիտի իշխանք մեղանչական վիճակի մէջ ըլլալով . աղօթեցէք Եստուծոյ ըսելով , թէ « Տէր , մեզ փորձութեան մէջ մի՛ ձգէր , հապա չարէն փրկէ մեզ » :

Կ . Եւայն Երամը մեղք գործելու փորձելը կը ցուցնէ թէ ինչպէս մեծ ազդեցութիւն կրնայ ունենալ մէկը մէկալին վրայ : Երեկներն ու իրենց կնիկները մեծ ազդեցութիւն ունին իրարու վրայ՝ բարի կամ չարի : Անք շատ մտո ու սիրելի բարեկամները և ազգականները շատ անամ մեր ամենայնոց փորձիները կ'ըլլան . աղօթեցէք Եստուծոյ որ ոչ մէկը փորձէ մեզ , ոչ ալ մենք մեկէ մը փորձուինք . այլ ջանանք որ մենք ամէն մարդիկ զէպի՛ Եստուած առաջնորդներ և չէ թէ Եստուծմէ հեռացունենք : Գ թուգ . ին . 25 : ՀՅԺ . թ . 9 :

Ե . Եստուծոյ դէմ մեղանչող մարդ մը չկրնար երջանիկ ու բարեխաղ ըլլալ : Ստանան և իր հրեշտակները երկնքին մէջ մեղանչըունս պէս՝ շուտ մը ամօթով ու վախով լեցուեցան Եստուծոյ առջևը , և յախտնական դատասպարտութեան տակ ինկան : Եսանկ ալ մենք մեղքին համար կ'ամբշանք ու կը փախանք , և թէ որ չապաշխարենք՝ միտքերնիս հանդարտութեան մէջ պիտի չըլլայ , և խորունկ արտմութեան մէջ պիտի թաղուինք յախտեան :

Օ . Սեղք մը չկրնար ծածկուիլ . զուր տեղը պիտի փախչինք Եստուծմէ , կամ մեղքերնիս իրմէն պաճենք : Ենքն ամէն տեղ ներկայ է , և ամէն բաները դիտէ ու կրնայ կանչել մեզ իր առջևը ամէն ըրպէ :

Ե . Սեղքը չկրնար անդատապարտ մնալ . մէկ մեղքը

մեկալէն մեծ կրնայ ըլլալ, բայց մեղքը թէ՛ մեծ կամ թէ՛ պզտիկ՝ չկրնար անպատիժ մնալ :

Ը . Եւ մեր պարտաւորութիւնն ու ապահովութիւնը մեղքերնիս խոստովանելէն ու մեկ դի ձգելէն կախում ունի : Թռէ որ մենք խոնարհաբար խոստովանինք մեր մեղքերը և աղաչենք Մատուած որ Վրիստոսի համար թող զուժիւն շնորհէ մեզի, ինքը պիտի շնորհէ : Հոյս չկայ անոնց համար՝ որ չեն ուզեր խոստովանիլ ու մեկ դի ձգել իրենց մեղքերը :

Է . ՍԵՐ ԵՌԱՆՊԻՆ ԿՆՆԱՆԵՐԻ ԻՅՆԵՆՈՒՄԻՆ ՍԵՐՅԱՆ :

1 . Կնոնք անիծուեցան ու Գրիստէն դուրս ձգուեցան :

Ծանոթ . Գ . 1-24 :

Հ . Տէր Մատուած բարկացաւ Մարմին ու Կայսին իրենց մեղանչելուն համար :

Պ . Հրամարես :

Վանդի Մատուածոյ բարկութիւնը երկինքէն կը յայտնուի մարդոց բոլոր ամբարշտութեանը և անիրաւութեանը վրայ, որոնք ճշմարտութիւնը անիրաւութեամբ բռնեցին :

Հումբ . Թ . 18 : Մատուած արդար դատաւոր է . ու Մատուած Գրիստոսին ամէն օր բարկացած է : Սորձ . Է . 11 : Եւնց ԼԳ . 6 , 7 :

Հ . Երաջ որժև ցուցցոց Մատուած իր բարկութիւնը, սատանայի՞ն՝ Եւայի՞ն՝ թէ՛ Մարմին :

Պ . Մեծնէն առաջ մեղանչող սատանային :

Հ . Տէրը ի՞նչպէս անիծեց անիկայ :

Պ . “Մեծն անատուններէն և դաշտին ամէն զազաններէն անիծեալ ըլլաւ” : Ծանոթ . Գ . 14 , 15 :

Հ . Տէրը միայն ճճն անիծեց թէ՛ օձի կերպարանը մտած սատանան ալ :

Պ . Երկուքն ալ :

Հ . Եւ ի՞նչ ըսաւ Մատուած կնկանը :

Պ . “Վու յղութեանդ ցաւերը խիստ պիտի շատցունենմ” : Ծանոթ . Գ . 16 :

Հ . Եւ ի՞նչ ըսաւ մարդուն :

Պ . “Երկիրը բու պատճառովն անիծեալ ըլլայ” : Ծանոթ . Գ . 17-19 :

Հ . Երկիրն ի՞նչ պիտի բուցցունէր :

Պ . “Փուշ ու տատասկ” :

Հ . Մարմ ի՞նչպէս պիտի ստանար իր հացը :

Պ . “Երեսին քրտինքովը”

Հ . Եւ ի՞նչ բանի պիտի դառնար :

Պ . Հողն . “Հող էիր դուն ու հող պիտի դառնաս” :

Հ . Տէրը անատներ ի՞նչ խոստմունք ըրաւ :

Պ . Տէրը անատներ որդմութեամբ Պրկիւ մը խոստացաւ Մարմին ու Կայսին և բոլոր իրենց կորսուած տղաներուն :

Եւ բուկին ու կնկանը մէջ տեղը, և բու սերունդիդ ու անոր սերունդին մէջ տեղը՝ թշնամութիւն պիտի դնեմ .

ան բու գլուխդ պիտի ջախջախէ, և դուն անոր գարշապարը պիտի խայթես : Ծանոթ . Գ . 15 :

Հապա Վրիստոսի պատուական արիւնովը որպէս թէ ամբիծ ու անարատ դատի մը . որ առաջուց ճանչցուած էր աշխարհիս սկիզբէն առաջ : Թ . 19 , 20 :

Կնոնք երկրպագուեցան անոր ընդ կրկնի վրայ բոլոր բնակողները, որոնց անունները աշխարհիս սկիզբէն ՚ի վեր մորթուած Գառնուկին կենաց զբքին մէջը զրուած չեն : Հոյս .

ԺԳ . 8 :

Հ . Տէրը Թ՛նչ տեսակ հանդերձ շինեց Աշամին ու Եւային հաղցունելու համար :

Պ . “ Կաշիէ հանդերձ ” : Օճնոր . Գ . 21 :

Հ . Տէրը Աշամն ու Եւան Դրախտին մէջը կենալու Թողըց , ուր որ կենաց ծառէն պիտի ուտէին ու յաւիտեան ապրէին :

Պ . ՀԷ . այլ դուրս վունտեց անոնք : Օճնոր . Գ . 22-24 :

Հ . Եւ Աշամ ապրելու համար Թ՛նչ պիտի ընէր :

Պ . “ Երկիրը պիտի գործէր ” :

Հ . Դրախտին մէջ Թ՛նչ դրաւ Աստուած կենաց ծառէն անոնք հետո պահելու համար :

Պ . “ Վերսկզբներն ու բոցեղէն սուր ”

Տէրը բարկացաւ Աշամին ու Եւային և իր բարկութիւնը ցուցուց անոնց . բոց կարգաւ սկսեց . առաջ խիտո հին ու շար մեղաւորին . և ամէն մէկը անիծելէն ետքը , Աշամին ու Եւային կաշիէ հանդերձներ հաղցուց , և ետքը անոնք Դրախտէն դուրս վունտեց Կենաց Օճառէն շուտելու համար . անոնք կորսընցուցին Աստուծոյ շնորհքը և Կենաց Օճառին համար ունեցած իշխանութիւնին , և բնաւ չկրցան նորէն հոն դառնալ հրեղէն սուրբով պաղտպանող քերորէին համար , որ Կենաց Օճառը պահելու կեցեր էր : Մարդը հիմն երկիրը գործելու վայ էր իր ապրուստը ճարելու համար , և Աստուած ալ հետաքուցեց Աշամէն իր բարեկամութիւնը :

Ե . Սեղանէլէն ետքը միշտ գիտցէք որ Աստուած պիտի բարկանայ ձեզի , և անշուշտ պիտի պատժէ ձեզ , թէ որ չպպաշխարէք :

Բ . Եւ նախկին ու մեծ մեղաւորները թող խիտ վախնան , ինչու որ Աստուած ընդհանրապէս առաջ անոնք պատժել կը սկսի . ու շատ սաստիկ կը պատժէ :

Գ . Երբոր կը տեսնէք օճին երկրի վայ սողալը , որ

ատելի է մարդուն ու անասուններուն , որ ամէն մէկը անոր զուգար ջանջախել կուզէ մեռցունելու համար , և անիկայ ալ կը ջանայ անոնք խայթել , անասունը յիշեցէք որ Աստուած անիծեց սատանան օճով : անէծքը վնասեց օճին՝ անոր մէջէն սատանային անցնելով :

Դ . Աստանան անիծուեցաւ բոլոր էակներէն ցած ու անարգ՝ խիտ անզունելի և ատելի ըլլալու , և վերջնապէս իր զուգար ջանջախուելու ու ոտքի տակ կոխուելու համար : Ի՞նչ որ տիեզերքը պիտի տեսնէ անէծքին կատարուելը . ասանկ՝ սատանան և բոլոր իր շար գործքերը սուկայի վախճան մը պիտի ունենան . ուստի հրաժարիք իրմէն ու իր բոլոր գործքերէն . թէ որ իր կողմը դառնալու ըլլանք , մենք ալ իր հետը պիտի իյնանք :

Ե . Մարդը ինչպէն կտրուի Աստուծոյ որդրմունքից փրկիւ մը պատրաստուեցաւ , որ Յիսուս Վերխոսու է . անիկայ կարող եղաւ սատանային զուգար ջանջախել և անոր գործքերը փճացընել . մենք պարտիք նայիլ իրեն մեր Ազատիչն պէս , և իր զօրութիւնովն ու օգնութիւնովն մեզքն ալ , և սատանան ալ պիտի յաղթենք : Ար կարծուի որ մեր ստաշին ճնողքը ապաշխարեցին ու հաւատացին աս խոստացեալ փրկչէն , և ասանկ մեռան ու երկիրը գային :

Յ . Ի՞նչ որ հիւանդութեան , տրամութեան , ցաւերու , աշխատութեան , ու մահին պատճառք աս աշխարհին մէջ՝ մեզքն է . բոլոր թշուառութեան աղբիւրը մեզքն է :

Զ . Երբոր Տէրը վնասեց Աշամն իր ներկայութիւնէն և շնորհքէն , բոլոր անոր սերունդն ալ կրնանք բուլ թէ վնասուեցան նոյն ստեղծ :

Է . Աստուծոյ ներկայութիւնը և շնորհք՝ որն որ Աշամ կորսընցուց ու իրմով մենք ալ կորսընցուցինք , նորէն կ'ընդունինք Յիսուս Վերխոսուով : Անոնք միայն Վերխոսուով կրնանք Աստուծոյ զալ . Վերկայ է ճանապարհը , ճշմարտութիւնն ու կեանքը :

Ը . Բայց Աստուած իր ներկայութիւնը և իր շնորհքը Յիսուս Վերխոսուով նորէն կու տայ միայն անոնց՝ որոնք որ բուն ինքը կ'ընտրէ : ՀՅԷ . Գ . 37-44 . և այլն :

Վանգի մարդ մը չգար Վրիստոսին թէ որ Հայրը չառաջնորդէ անոր . ասանկ բոլոր մարդկային ցեղն Մտուծոյ գերագոյն ողորմութենէն կախում ունի :

2 . Մեր Մտաջին Օնորաց բոլոր սերունդը կորսուեցաւ իրենց մէկ մեղքովը :

Հռոմ . Թ . 12-19 :

Հ . Մշտմ ու Եւան Վրախտէն վճռուեցնէն ետքը Թ՛նչ եղան :

Պ . Մտուծոյ դէմ մեղանչելուն համար իրենց արդարութիւնը կորսընցուցին ու Տէրոջ առջևը մեղաւոր եղան :

Հ . Իրենց սիրտը Թ՛նչպէս եղաւ :

Պ . Մեղանչելէն առաջ անոնք կատարելապէս սուրբ էին , անոնց սիրտերը բարի էին . բայց մեղանչելէն ետքը անոնց սիրտերը չար եղան :

Հ . Տէրը աս փոփոխութեանը համար Թ՛նչպէս վարուեցաւ անոնց հետ :

Պ . Տէրը ետ քաշուեցաւ անոնցմէ իր ներկայութեանը և սիրոյն անարժան սեպելով անոնք :

Հ . Յանցանքն որո՞ւն էր որ անոնք իրենց սրբութիւնն ու երջանկութիւնը և իրենց Մտուածը կորսընցուցին :

Պ . Բուն իրենցն էր յանցանքը :

Հ . Մտ իրենց յանցանքովը միայն իրենց ինկան :

Պ . Չէ , Երբոր իրենք ինկան , բոլոր իրենց տղաքներն ալ ինկան :

Մշտմով ամէնը կը մեռնին : Ը Վրի . Ժ . 22 : Մէկուն յանցանքովը շատերը մեռան : Հռոմ . Ե . 15 :

Հ . Բարի սիրտերով աշխարհ կու գանք , ինչպէս որ մեր Մշտմ նախահայրը մեղանչելէն առաջ ունէր :

Պ . Չէ . գէշ սիրտերով , ինչպէս որ ինքը մեղանչելէն ետքն ունէր :

Հ . Որո՞ւն նմանութեամբը զատակ ունեցաւ կ'ըսէ Մտուածաշունչը :

Պ . Իր նմանութեամբը : Օնոր . Ե . 3 :

Հ . Մեր Վրիլէն Թ՛նչ կ'ըսէ անոր վրայով՝ որ մարմինն ծնած է .

Պ . « Մարմինն ծնածը մարմին է » : Յե՛հ . Գ . 6 :

Յե՛ք . Ժ . 4

Հ . Մշտմն աս մէկ մեղքը Թ՛նչ հետեանք ունեցաւ մեր վրայ :

Պ . Մշտմն աս մէկ մեղքին համար է որ մենք գէշ սիրտ և խանգարեալ բնութիւն կ'ունենանք ու ասանկ մեղքի տակ կ'իյնանք , և Մտուծոյ բարկութիւնը վրանիս կու գայ , ու հիւանդութիւն , տրամուլթիւն , աշխատութիւն , ցաւ ու մահ կ'ունենանք : Հռոմ . Գ . 12-19 : Ը Վրի . Ժ . 21 , 22

Հ . Երբոր մենք կը ծնանք՝ թէ որ Մտուած մեր սիրտերը չփոխէ , մեր ներսի զին բարկութիւն կ'ըն :

Պ . Չէ :

Վիտեմ որ իմ ներսիդիս՝ այսինքն իմ մարմինիս մէջ բարի բան մը չենակիր , ինչու որ կամեցողութիւն կայ քովս , բայց բարին 'ի գործ դնելը չեմ գտներ : Հռոմ . Է . 18 : Ը Վրի . Թ . 14 :

Հ . Մտանց աս խանգարեալ բնութեան բնաւ մարդ մը ծնաւ աշխարհիս մէջ :

Պ . Մի միայն մարդն Յիսուս Վրիստոս : Վռոմ . Ը . 35 :

Հ . Մշտմն մինչև աս օրս մեղաւոր էին բոլոր մարդիկ :

Պ . Հրամարես :

Հ . Ի՞նչպէս կը նայի Մատուած աշխարհի վրայ :

Պ . Սեղփով լեցուած ու կորսուած աշխարհի պէս :

Տեղը երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն վրայ որ տեսնէ թէ՛ կոյ՛ արդեօք իմաստուն մեկը որ զՄատուած փնտռէ : Մէնքը խոտորեցան մէկ տեղ , անպիտան եւ դան . աղէկութիւն ընող մը չկայ , մէկ մըն ալ չկայ :

Ստով . ԺԷ . 2 , 3 :

Հ . Եւ մէն մարդ իր մեղաւոր ըլլալը կը զգայ :

Պ . Հրամարես . մեր խղճմտանքը ինչպէս և Մատուած ծառունը միշտ կը զրուցէ մարդոց՝ իրենց մեղաւոր ըլլալը :

Հ . Ուրեմն բոլոր աշխարհի վիճակը Ի՞նչպէս է :

Պ . « Հանցաւոր՝ Մատուծոյ առջևը » : Հտով . ւ . Թ . Գ : Եփե . Թ . 3 :

Հ . Թե՛ որ առանց սրտի փոփոխութեան իրենց մեղքերուն մէջը մեռնին , Ի՞նչպէս պիտի պատժուին :

Պ . Ենտեք պիտի պատժուին յաւիտենական կրակին մէջ : Մտոր . ին . 41-46 . և այլն :

Մատուած ու Եւան կորանցուցին իրենց արդարութիւնը և ճշմարիտ սրբութիւնը՝ իրենց մեղք գործած բոպէին . անոնք ապականեալ ու չար եղան սիրտով ու կեանքով . Մատուած երեսէ ձգեց անոնք , ու իրենց ամէն քաջած նեղութիւններուն պատճառը բուն իրենց մեղքն էր : Երբ որ անոնք ինկան , իրենց տղաքներն ալ ինկան . ինչու որ մեր Մտաջին Ծնողքը փորձուեցան նաև իրենց տղաքներուն այսինքն մեղի համար :

Ուստի Մտաջին՝ խանգարեալ ու մեղաւոր Մտաջին զաւակ ծնաւ բուն իր խանգարեալ ու մեղաւոր օրինակով : Չար հայրը չար զաւակ ունեցաւ . մարմնունէ ծնածը մարմին էր . քանզի միշտ նման զմանք կը ծնանի . մենք աշխարհ կու գանք գէշ սիրտերով , հակառակ

Մատուծոյ , ու չարին հակամտեալ . մարդկային ցեղէ ընաւ մեկը սուրբ շնաւ առ աշխարհը , բայց միայն մարդն Յիսուս Քրիստոս . ու ան ալ յատուկ Մատուծոյ զօրութիւնովն էր : Եւ Մտաջին մինչև հիմա բոլոր մարդիկ մեղանւեցին , ինչպէս որ ամէն մարդ կը զգայ ու գիտէ իր մեղաւոր ըլլալը : Մատուած բոլոր աշխարհի վրայ՝ մեղաւոր լեց ու կորսուածի պէս կը նայի , ու աշխարհ իր առջևը յանցաւոր կ'երևնայ իր բարկութեանը տակն ինկած : Իողոր աս մեղքն ու թշուառութիւնը մեր Մտաջին Ծնողքը մեղքին հետևութիւնն է . աստ մեղքը կործանեց մարդկային սերունդը . Մատուած անանկ կը վարուի մարդոց հետ , որպէս թէ անոնք բուն Մտաջին մեղքը գործած էին . քանզի ճիշտ աս որ Մտաջին վրայ եկաւ , իր էլխաւն ետքը՝ ճշիւն իր տղաքներուն վրայ ալ կու գայ : Ենոր գործին հետևանքները իրենց վրայ կ'ընդունին , ճիշտ որպէս թէ անոնք գործած էին ան . անոնք արդարութենէ ու Մատուծոյ շնորհքէն զրկուած են . ապականեալ են ու տղէտ , ցաւի ու փորձութեան տակ ինկած են , ու ենթաւ կայ անցաւոր և յաւիտենական մահն :

Ե . Մեր Մտաջին Ծնողքը մեղանւելուն ետքը իրենց վարքը և վիճակը որչափ փոխուած էին . անոնք կործանուցին իրենց սրբութիւնն ու իրենց երջանկութիւնը : Մատուծոյ տղաքներն ու Լքիկից ժառանգներն ըլլալուն տեղը սատանայի տղաքներ ու Վժժիքի ժառանգներ եղան : Ի՞նչպէս հիմալի , ի՞նչպէս խորունկ , և ի՞նչպէս սուկալի է անոնց էլխալը :

Ի . Իրենց զաւկներուն վարքն ու վիճակը ի՞նչպէս փոխուեցան . երբ որ անոնք Մտաջին Ծնողքն ինկան , իրենք ալ ինկան . բոլոր մարդկային ցեղը սուրբ ու երջանիկ կենային ըլլալ . ու բոլոր Լքիկի օրջութեան ու կենաց Կրիստոս մը ընէ : Բայց հիմա բոլոր մարդկային ցեղը մեղաւոր ու թշուառական են , և Լքիկի անիծեալ է , ու վժժութիւնով և վայով ու մահով ծածկուած :

Պ . Բայց մեր Մտաջին Ծնողքն ու մեղի իրենց տղայոր համար փրկութիւն եղաւ : Մատուած Վրկիչ մը աստիճանեց . արդարն Յիսուս Քրիստոս . Մատուած ամէնքը մեղքի տակ դրաւ որ ողորմի ամենուն վրայ :

«Մհա Մտուծոյ Գառնուկը, որ աշխարհի մեղքը կը մեղցունէ» : Մնանկ է նէ չտրտնջանք . ահա պատրաստ դեղը, և անանկ մեկ դեղ մը՝ որ ամենուն բաւական է : Կրիստոս ետ կը դարձունէ մեզի ինչ որ Մշամ կորսնցուց : Պէտք է մեզի ուրախութեամբ Գինքը և Խր փըը կուժիւնը ընունիլ, ու շնորհակալ ըլլալ Մտուծոմէ իր մեզի յուշուած սիրոյն համար : Ուստի պատուէ՛նք մեզի տրուելու շնորհաց մեր ամէն միջոցները, այսինքն՝ Աշխարհան կարգալը, աղօթք ընելը, և այլն :

Դ . Պէտք է մեզի որ մեկ մեղք մըն ալ դործելէն վախնանք, որչափ նշին որ երևայ ան : Կրթոր մենք մեղքի մեջ քայլ մը ընելու ըլլանք, չենք դիտեր թէ ուրիշ ինչ քայլեր պիտի հետեւին, կամ թէ ինչ թշուառութիւններ մեր վրայ ու մեր ընկերներուն վրայ պիտի բերենք : Միայն սրբութիւնն է խաղաղութիւն ու ապահովութիւն :

Ե . Ընաւ զմոռանք որ մենք չար սիրտերով ապականեալ ծնած ենք, որ ընականաբար սէր չունինք Մտուծոյ ու սուրբ բաներուն : Մենք մեղքին հակամիտեալ ենք . մենք ՚ի մանկութենէ մեղքին կը հետեւինք . Բ՛նչ սոսկալէ չարութիւններու հասնելու էինք՝ (որովհետեւ մեր մեջք ամենեւին բարի բան մը չունինք մենք մեզմէ առ Մտուծոմ) թէ որ Տէրը ո՛ր և իցէ ճամբով մը մեզ ետ չդարձունէր : Ընականաբար մեր ընթացքը մանկութեան օրորոցէն մինչև դերեզման՝ դէպի վար դժոխքը կ'իջնէ . մենք մեզմէ ո՛չ զօրութիւն ո՛չ կարողութիւն ունինք, և ո՛չ ալ կամք ետ դառնալու առ Մտուծոմ . ուրեմն ընականաբար մարդիկ աստակապէս չար ու կորսուած վիճակի մեջ են :

Յ . Մա ապականեալ բնութիւնը պարտի փոխուիլ, ու Սուրբ Հոգիին զօրութիւնով փոխուիլ, թէ չէ՛ չենք կրնար Մտուծոմ տեսնիլ :

Զ . Ուստի պարտինք լալ Մտուծոյ առջևը մեր առաջին ծնողաց ինչալը, մեր սոսկալի ապականութիւնը բնութեամբ ու կրթութեամբ . և պարտինք խոստովանիլ Խրեն որ մենք անմարութք ենք . և Սուրբ Հոգիին զօրութիւնով որ սիրտ մը ունենալու՝ ու Տէր Հիտուս Կրիստոսով մեր մեղքերուն համար թողութիւն գտնելու պարտինք ինդրել իրմէն :

Ը . Խոլոր աշխարհը մեզի ու Մտուծոյ բարկութեանը տակ ինչպէ՛ս է : Մենք սփռափ ջնաւոր ենք որ անիկայ փրկութեան ճամբուն գիտութեանը բերնէք . սրճափ աղօթելու ենք Մտուծոյ՝ որ իր Աշխարհանը տարածէ բոլոր աշխարհի մեջ, ու Աշխարհն բոլոր կորսուած տղաքները փրկելու հասցունէ :

Թ . Հասկապէս թող ծնողները զգան թէ «մարմինն ծնածը մարմին է» . և թէ շնորհքը բնութենէն չգար, հապա Մտուծոյ պարզէն է ան . ու բնաւ չգա դարին աղօթելէն որ իրենց տղայոց ապականութիւնը վերցուի՝ ու Հիտուս Կրիստոսով՝ նոր արարածներ ըլլան : Կաւ ամէն Կարողներն ու Վարժապետներն ալ նոյնպէս զգալով, իրենց ունինդ իրներուն ու աշակերտներուն ալ նոյնն ընեն : Փրկութիւն Տէրջմէն է, մեր բաւականութիւնը Մտուծոմէ է (ան) :

Պ . ՓՐԿՈՒԹՆԵՆ ՆՄՈՒՄԻՆ ՎՐԵՅ :

1 . Մտուծոմ կը պատրաստէ մեզի համար կատարեալ փրկութիւն :

Իգլի . ք . 1-22 :

Հ . Աղամ ու Խւան մեղանչելէն ետքը Տէրն անոնք ու անոնց տղաքները յախտեան մեղքի ու թշուառութեան մեջ կորսուելու թողուց :

Պ . Չէ՛ :

ան . Ուրեմն ճի՛վ է Պօղոսը՝ կամ ճի՛վ է Ապողոսը . պարտունաներ են, որոնցմով հաւատացիք . և քնտր որ Տէրը տուաւ անոնց ամէն մէկուն : Խս տնկեցի, Ապողոսը ջուր տուաւ, բայց Մտուծոմ աճեցուց : Ուստի ո՛չ տնկողը բան մըն է, ո՛չ ջուր տուողը, հապա Մտուծոմ՝ որ աճեցուց : ան Կորնթ . 4 . 5-7 :

Հ. ԻՇնչ կ'ըսէ Տէրն ասոր վրայով :

Պ. « Դնչպէս ես կ'ենդանի եմ, կ'ըսէ Տէրը, չեմ ուզեր մեղաւորին մեռնիլը, հապա չարը դառնայ իր ճաշնապարհէն ու ապրի . դարձի եկէք, դարձէք ձեր չար ճանապարհէն . ինչո՞ւ մեռնիք, ո՞վ Խորայիլ տունը » : Երեմ. ԺԷ. 23-32 : ԿՏԻ՝ Բ. 4 : ԲՊԷԿ . Գ . 9 :

Հ. Մեր առաջին ծնողքը մեղանշնչէն ետքը, Երբ Տէրը Փրկիչ մը խոստացաւ անոնց :

Պ. Կոյն օրը : Ծննդ . Գ . 1-15 :

Հ. Ո՞վ էր խոստացեալ Փրկիչը :

Պ. Մտուած իր մեծ ու մանաւանդ անհուն սիրովը մեզի փրկիչը ըլլալու տուաւ իր որդին Յիսուս Վրիստոսը : Յճ . ԺԵ . 13 : Հոով . Ե . 6-8 : Ը . 92 : Եփե . Բ . 7 : ՏէԿ . Գ . 4, 5 :

Հ. ԻՇնչ կ'ըսէ Տէրն մեր ասոր վրայով :

Պ. « Դնչու որ Մտուած անանկ սիրեց աշխարհը մինչև որ իր միածին Որդին տուաւ . որ ամէն ո՞վ որ անոր հաւատայ՝ չիբոսուի . հապա յաւիտեանական կեանք ունենայ » : Յճ . Գ . 16 :

Հ. Մտուած ո՞վ կը խրկէ մեր սիրտերը նորոգելու, և մեզ դէպի՞ն Վրիստոս մեր Փրկիչն առաջնորդելու, ու մեզ Երկնքին համար պատրաստելու :

Պ. Սուրբ Հոգին : Յճ . Կ . 3-6 : ԿՏԻ՝ Բ . 7-16 :

Հ. Իրաւունքով Մտուած մեզ պարտաւճի էր իր Որդին տալու՝ որ մեզ պատիժէն փրկէ, և Սուրբ Հոգին տալու՝ որ մեր սիրտերը փոխէ, ու մեզ երկնքին համար պատրաստէ :

Պ. Չէ՛, մեր փրկութիւնը Մտուածը կողմանէ ձրի շնորհքով եղաւ :

Ի՞նչպէս հիմա առանց օրէնքի Մտուածը արդարութիւնը

յայտնուած է, օրէնքէն և մարդարեաներէն վայրուած ըլլալով . այսինքն Մտուածը արդարութիւնը՝ որ Յիսուս Վրիստոսի հաւատքէն է, ամենուն յայտնուած է, ու ամենուն վրայ կ'ըլլայ . և խտրութիւն չկայ : Դնչու որ ամենքը մեղք գործեցին, և Մտուածը փառքէն պահած են : Եւ անոր շնորհքով ձրի կ'արդարանան Յիսուս Վրիստոսով եղած փրկութեամբը . և այլն : Հոով . Գ . 21-28 : Որ մեզ փրկեց, ու սուրբ կողմանով կանչեց՝ չէ թէ մեր գործերուն նայելով, հապա իր դիտաւորութեանն ու շնորհքին նայելով, որ Վրիստոս Յիսուսով մեզի տրուեցաւ յաւիտեանական դարերէն առաջ : ԲՏԻ՝ Կ . 9 :

Հ. Ուրեմն որմէ՞ն շնորհակալ պարտիք ըլլալ և գնքը օրէնք մեր փրկութեանը համար :

Պ. Մեր Տէր Մտուածին : ՅճԿ . Ե . 9-14 :

Եւ անոր՝ որ կարող է ձեզ անբիժ պահել, և իր փառքին առջևը անարատ կայնեցունել ջնձութիւնով, մի միայն Մտուածը մեր Փրկիչին մեր Տէր Յիսուս Վրիստոսին ձեռքովը փառք ու մեծութիւն, զօրութիւն ու իշխանութիւն բոլոր դարերէն առաջ, և հիմա ու բոլոր դարերու մէջ, Մճն : ՅՏԿ . 24, 25 :

Կոյն օրը՝ որ մեր առաջին ծնողքներն ինկան, Մտուած գերազոյն ողորմութիւնով կատարեալ Փրկութիւն պատրաստեց անոնց՝ ու անոնց ինկած զաւկներուն համար : Փրկիչ ալ պատրաստեց, Արարար ալ :

Մ. Փրկութիւնը Տէրոջն է, ո՞չ ուրիշ էակ մը, հապա միայն Մտուած՝ ամենուն ինքնիշխան Տէրն իր իմաստութիւնովն ու զօրութիւնովը փրկութեան ճանապարհ մը սահմանեց ու բացաւ կրտսած մարդուն համար : Սարդը մեղանշնչէն ետքը՝ բանը միայն Մտուածը մնաց,

որ եթէ մարդն ապրելու ըլլայ՝ կամ թէ մեռնելու, Եստուած ինքը որոշէ, որ մարդը պատահուածիս ունենայ փրկուելու, կամ կորսուի յախտանալ:

Բ. Իբր գերազանց սերը գինքը շարժեց փրկութեան ճամբայ մը բանալ: Ինքը մեր կործանեալ ու թշուառ վեճակին մէջ մեզի գթացաւ, չուզելով մեղաւորին մահը:

Գ. Եւ ինքը մեր փրկութեանը համար պատրաստութիւն ըրաւ, առանց ծախքին նայելու: Արովհետեւ պէտք էր որ բուն Իբր միածին Արդին մեռնի մեր տեղը. վասն որոյ Եստուած իր Արդին շինայեց: Հռով. ք. 32: Եւ որովհետեւ մենք բուն իր Սուրբ Հոգին կը կարօտինք, որ մեր սիրտերը փոխէ ու մեզ Վերիստոսին առաջնորդէ, վասն որոյ Եստուած շինայեց իր Սուրբ Հոգին. ուստի հիմայ բան մը պակաս չէ, այլ ամէն բան պատրաստ է: Հայտ. իբ. 17:

Դ. Աւրեմն երբոր մենք մեր մտքին մէջը կը զգանք մեր մեղքերը և անկէջ հետեւած կործանումը՝ փրկութեան համար Եստուծոյ նայինք ու միայն Եստուծոյ: Փրկութեան համար իր ցուցուցած ճամբան շիտակ է, ու միայն ան է ճամբան: Են անանկ ապահով ու անսխալ է, որչափ որ անհուն իմաստութիւնը և զօրութիւնն ու սերը և ողորմութիւնը կրնայ ընել անիկայ: « Են որ հաւատայ պիտի փրկուի »: Սաղ. Ժ. 16: Հօհ. Գ. 27-29: Մկրտութիւնը չպակնայ Եստուծոյ փրկութեանը ճամբան դիմելէն, բոլոր ուրիշ ճամբաները սուս են և կործանման պատճառ:

Ե. Մենք պաշտելով յարգելու ենք Եստուծոյ աս սերը, որ առանց անոր՝ Դեւերուն պէս Կոտիքին մէջը կատարեալ թշուառութիւնով ու յուսահատութիւնով միշտ գոցուած մնալու էինք: Եստուծոյ մեր վրայ ունեցած սերը մաշեցունելու է դէպի իրեն մեր ունեցած թշնամութիւնը. աս սիրոյն զօրութիւնը կոտորեալ է մեր քաւրացեալ սիրտերը: Չմանք ընենք աս մեծ փրկութիւնն ընդունելու. քանզի թէ որ մէկ դի ձգենք անիկայ, կործանման մէջ պիտի ընկղմինք՝ անիկայ շտոգններէն աւելի խորունկ:

Օ. « Եւ թէ որ Եստուած մեզ այնչափ սիրեց, մենք ալ պարտինք մեկզմէկ սիրել »: մենք չարերուն ու ապեւրախներուն ալ գթած ըլլալու ու ներելու ենք, ինչպէս որ մենք թողութիւն գտնել կը յուսանք. թող մեր կեանքը՝ սիրոյ կեանք մը ըլլայ առ Եստուած և առ մարդիկ:

2. Յիսուս Վերիստոսի մեր Փրկչին ո՞վ ըլլալը:

ա. Ի՞նչ է ԵՍՏՈՒՄԸ՞ Ի:

Հօհ. ա. 1-18:

Հ. Եստուծոյ Արդին Յիսուս Վերիստոս մեր Փրկիչը ո՞վ է. Եստուած է, թէ մարդ:

Պ. Եստուած ալ է մարդ ալ է:

Հ. Ի՞նչպէս գիտէք թէ ինքն Եստուած է:

Պ. Եստուածաշունչը մեզի առանկ կ'ըսէ:

Հ. Եստուածաշունչն անիկայ Եստուած կը կոչէ՞:

Պ. Հրամարես, Վերիստոս է ամենուն վրայ Եստուած օրհնեալ յախտանան: Հռով. թ. 5: Եսայ. Գ. 1-3 Բարդուղիմէոս: Հօհ. Ժ. 41 Ին Հեթ: Եբբ. ա. 10-12 Սաղ. ճ. 22-27 Ին Հեթ: Հօհ. ա. 1: ա Հօհ. Է. 20:

Հ. Եստուած յախտանական է. Վերիստոս ալ յախտանական է:

Պ. Հրամարես. ինչու որ Վերիստոսին վրայ Կաւիթ կ'ըսէ. « Դուն նոյնինքն ես, ու քու տարիները պիտի չպակսին »: Եբբ. ա. 12: Սաղ. ճ. 27: Եսայ. թ. 6: Խդ. 6: Հայտ. ա. 8: Իբ. 13: Հօհ. ա. 1, 2:

Հ. Եստուած ամէն տեղ ներկայ է . Վրիստոս ալ ամէն տեղ ներկայ է :

Պ . Հրամարես , ինտոր որ ինքը կ'ըսէ . " Ուր որ երկու կամ իրեք հոգի ժողովուած ըլլան իմ անունովս , հոն եմ ես անոնց մէջը " : Մարտի . ԺԷ . 20 : ԻՄ . 18-20 :

Հ. Եստուած ամէն բան գիտէ . Վրիստոս ալ ամէն բան գիտէ :

Պ . Հրամարես :

Հ. Արկնէ նայիմ , Պետրոս Յիսուսին Բ՛նչ ըսաւ , երբոր Յիսուս հարցուց անոր , թէ " Օխ կը սիրե՞ս " :

Պ . " Տէր՛ դուն ամէն բան գիտես , դուն գիտես որ ես քեզ կը սիրեմ " : Յօհ . Իս . 17 : ԺԷ . 30 : Պործ . Ի . 24 :

Հ. Եստուած ամէն բանի ստեղծիչն է . Վրիստոսն ալ անսմնկ է :

Պ . Հրամարես , Սուրբ Գիորգը կ'ըսէ , " Ենով ա՛մէն բան ստեղծուեցաւ , ինչ որ երկինքն ու ինչ որ երկրի վրայ , անոնք որ կ'երևանն՝ և անոնք որ չեն երևնար " : Առ . Ի . 15-17 : Յօհ . Ի . 1-3 : Եբր . Ի . 3 , 10-12 :

Հ. Եստուած միայն մեղաց թողութիւն կընայ տալ . Վրիստոս ալ կընայ մեղաց թողութիւնտալ :

Պ . Հրամարես , " Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու " : Մարտի . Թ . 1-6 : Մարտի . Թ . 5 , 7-12 :

Հ. Միայն Եստուած կարող է աշխարհը դատելու . Վրիստոս ալ վերջին օրը ամենուն դատաւճրն է :

Պ . Հրամարես : " Վ՛սան զի պէտք է որ ամէնքս ալ Վրիստոսի ատենին առջև ներկայանանք " : Թ Աործ . Ե . 10 : Հոսով . ԺԷ . 10-12 : Յօհ . Ե . 22 : Պործ . Ժ . 42 :

Հ. Միայն Եստուած սիրուելու ու պաշտուելու է

Եստուծոյ պէս . Վրիստոս ալ Եստուծոյ պէս սիրուելու ու պաշտուելու է :

Պ . Հրամարես , քանզի սուրբ Գիորգը կ'ըսէ , թէ " Եմէնը պատուեն Որդին , ինչպէս որ Հայրը կը պատուեն " : Յօհ . Ե . 23 : Պործ . Ի . 24 : Ե . 50 , 59 : Ունակ կ'ըսէ . " Եստուծոյ բոլոր հրեշտակներն ալ անոր երկրպագութիւն թող ընեն " : Եբր . Ի . 6 : Փիլեո . Թ . 9-12 :

Հ. Երկինքին մէջը բոլոր արարածները իրեն երկրպագութիւն կ'ընեն :

Պ . Հրամարես : Յայտ . Ե . 8-14 բարդապէ փիլեո . Թ . 9-11 և չի :

Հ. Մարդիկ իրաւունք ունե՞ն Վրիստոսի Եստուածութիւնն ուրանալու :

Պ . Չէ՛ , շատ մեծ մեղք է : Յօհ . Ե . 23 : Ի Յօհ . Ե . 20 , 21 :

Յիսուս Վրիստոս մեր Փրկիչն Եստուած է . ամենուն վրայ մեծ ու ճշմարիտ Եստուած՝ և Օգոութեանց Եհօման՝ Եսմահ , Ենիփոխ , ամէն տեղ ներկայ , ամէն բաները Վիսոցող , բոլոր տիեզերքին Ստեղծողն ու Պահպանողը . մեղքերու թողութիւն հուող . Վերջին օրուան Դատաւորը . երկինջ ու երկրի մէջ եղած ամէն արարածներն իրմէն վախնալու ու զինքը յարգելու են , իրեն երկրպագութիւն ընելու և զինքը պաշտելու են յաւիտեանս յաւիտենից :

Ե . Ս՛եծ գործ մը կատարուելու էր մարդոց փրկութեանը համար , և առ զործը կատարելն ալ Վերագոյն Լազի մը կը կարօտէր . մենք կը կարօտեինք Եստուծոյ հետ հաւասար Փրկիչ մը , անանկ Փրկիչ մը՝ որ զԵստուած կատարելապէս իմանայ , որ Եստուծոյ փառքն ու պատիւը՝ մեր փրկութեանը համար ինչ ընել որ կը պահանջէր , ան ալ աղէկ գիտնայ , և որ իրաւունք ու կա-

ըրդութիւն ունենայ ան ընելու : Մենք անանկ Փրկիչ մը կը կարօտինք որ կարենայ ազատել մեզ մեղքին՝ մահին ու Վժռիքին զօրութենէն . կարենայ հաշտեցունել մեզ Վատուծոյ հետ և պատկել մեզ Լրկիչքին մէջը յաւիտեանահան փառքով : Ե՛հա Յիսուս Վրիստոսն է ան Փրկիչը , որ Մե՛ծ Մտուած է . թէ որ ինքն Մտուած չըլար , մեր Փրկիչին կողմանէ պահանջուած գործը չէր կրնար ընել :

Ի . Ուրեմն մեր Փրկիչը բոլորովն կարող է փրկելու ան ամէնը որ իրմով Մտուծոյ կու գան :

Մենք մեղաւոր ենք , ինքն Մտուած է և կրնայ ջնջել մեր մեղքերը ու մեզ սուրբ ընել : Մենք տկճոր ենք , ինքն Մտուած է ու յաւիտեանական զօրութիւնը իրն է , և կրնայ մեզ զօրացունել : Մենք սողէ՛տ ենք , ինքն ամենիւնաստ է , և կրնայ մեզ իմաստութիւն սորվեցունել : Եղբանո ենք , ինքն է ամէն բաներուն Տէրը , կրնայ մեզ հարստացունել : Մենք մահկանացու ենք , ինքը կենաց և մահուան վրայ զօրութիւն ունի , և կրնայ մեզ նորին ապրեցունել : Մենք դատաստանի առջև ելլելու ենք , ինքն է ամենուն արդար Վատուորը , ու մեր Փրկիչը , և իր միջնորդութիւնովք մենք կրնանք արդարանայ : Մենք թշուառականներս թէ՛ ներկայ ժամանակնիս՝ և թէ յաւիտեանականութեան համար վատահոլութեամբ և ուրախութեամբ աս Փրկիչին կրնանք ապաւինիլ որ անհուն է զօրութեամբ ու փառքով :

Պ . Եւ որչափ որ կարող է նոյնչափ ալ կամեցող :

Արնամբ տարակուսիլ իր կամեցողութենէն , որ ինքը մեզի համար մեռաւ : Ար վախճանք իրեն մօտեանալու , որ ինքը մարդասիրութեամբ կը ջրակիրէ մեզ , և կը հաստատէ մեզի որ ինքը դուրս պիտի չնդէ ան՝ որ իրեն կու գայ : Սաղմ . Ժա . 28-30 : Հօ՛ճ . Է . 37 : Եւ թէ որ անգամ մը միաւորուելու ըլլանք իրեն հետ , բնաւ ալ չենք կրնար զատուիլ իրմէն : Հ . ու՛մ . Ը . 28-39 : Հօ՛ճ . Ժ . 27-30 :

Պ . Ուրեմն հաւատացողին հոգին ապահով է . ուրեմն Մտուծոյ Լսկեղեցին երկրի վրայ ապահով է Վրիստոսի ձեռքին մէջը , որէ ամենուն վրայ Մտուած օրինակ յաւիտեանս : Սաղմ . Ժ . 1-12 : ճԺ . 1 :

Ե . Եննք որ չեն հաւատար Տէր Յիսուս Վրիստոսին ու թշնամի են իրեն ու իր փրկութեանը , իրաւունքով դողալու են իր առջևը :

Եննք Մտուծոյ դէ՛մ կը հակառակին , անոր դէ՛մ՝ որ իր թշնամիներն իր ոտքին կոխելքը պիտի ընէ . անոր դէ՛մ՝ որ կարող է հոգին ալ մարմինն ալ յաւիտեան դժոխքին մէջը ձգելու : Ե՛նչպէս ստակալի պիտի ըլլայ յատկապէս ան թշնամիներուն դատապարտութիւնը , ուրնք Մտուծոյ պարզ խօսքերն իրենց ձեռքերնուն մէջն ունենալով՝ կ'ուրանան Վրիստոսի Մտուածութիւնը , և ասանկ ընելով իրք թէ կը վերցունեն զինքն իր տիեզերական Մթոռէն , և կորսուած մարդուն փրկուելուն մի միայն լըյսը և յոյսը կը կորսնցունեն :

Թ . ԻՆՎԵՆ ՄՆԵՐՎ Լ :

Ղ . 1-52 :

Հ . Յիսուս Վրիստոս մեր Փրկիչն Մտուած ու մարդ է . մենք Մտուածաշունչէն հասկընանք որ ինքն Մտուած է . դուր ի՛նչպէս գիտէք որ մարդ ալ է :

Պ . Մտուածաշունչէն կը սորվինք՝ թէ աստուածորդին Լրկիչքէն վար ի՛նչու ու ինքզինքը մարդկութեան հետ միաւորեց , անանկ որ ինքն Մտուած և մարդ ալ է մեկ տեղ :

Հ . Եւետարանն ի՛նչ կ'ըսէ ասոր վրայով :

Պ . « Եւ Իսանը մարմին եղաւ , ու մեր մէջը ընակեցաւ » : Հօ՛ճ . Կ . 14 : Փէ՛ւ . Թ . 5-8 :

Հ . Ո՛րք ծնաւ Յիսուս :

Պ . Ինթղէհէմին մէջ : Մէ՛ի . Ե . 2 : Հօ՛ճ . Է . 42 :

Սաղմ . Թ . 1-6 : Ղ . 1-6 : Թ . 1-12 :

Հ . Ո՛վ էր իր մայրը :

Պ . Այս Բարիամ : Երայ . Է . 14 : Օճնոր . Գ . 15 :
Մարտի . ան . 18-25 : Ղուի . ան . 26-38 :

Հ . Իր կարծուած հայրն ճիշդ էր :

Պ . Յովսէփի : Ղուի . Գ . 23 :

Հ . Տէրջըբ Հրեշտակն անոր անունը ի՞նչ դնել պա-
տուիրեց՝ երբոր անիկայ ծնանելու ըլլայ :

Պ : Յիսուս , որ կընշանակէ Փրկիչ :

Ենոր անունը Յիսուս դնես , քանզի անիկայ իր ժողը-
վուրդն իրենց մեղքերէն պիտի փրկէ : Մարտի . ան . 21 :

Հ . Անր Փրկիչն ծնած օրէն մինչև հիմա քանի՞ տարի
եղաւ :

Պ . Հազար ութը հարիւր յիսուն ու վեց տարի :

Հ . Իր քարոզիչն առաջ իր ծնողացը հետ քանի՞
տարի բնակեցաւ :

Պ . « Երսուն տարիի չափ » : Ղուի . Գ . 23 :

Հ . Իր ծնողացը հետ ճիշդ տեղ բնակեցաւ :

Պ . Կազարեթ քաղաքը : Մարտի . Է . 23 : Ղուի .
Է . 4 , 51 :

Հ . Կարողելու սկսելէն ետքը շուտով ձգեց Կազարե-
թը , և անատենը ճիշդ քաղաքը բնակեցաւ :

Պ . Կափառնայում քաղաքը : Ղուի . Գ . 16-31 :
Մարտի . Գ . 13 :

Հ . Երբոր Յիսուսի քարոզելու ու սորվեցունելու ժա-
մանակը մծտեցաւ , Եստուած անոր առջևէն ճիշդ խրկեց
ճամբան պատրաստելու :

Պ . Յօհաննէս Արարիչը :

Հ . Անր Փրկիչը խաչուելէն առաջ , քանի՞ տարի
քարոզեց ու սորվեցուց :

Պ . Իրեք կամ չորս տարիի չափ :

Հ . Ըսցը ինքը մարդու պէս երեցաւ , քնացաւ , կե-
րաւ , պտտեցաւ , քարոզեց , աղօթեց . ուրնն ժո-

ղովորոցը ի՞նչպէս ճանչուց ու հաւատացուց թէ ինքն
Եստուածային էր . Եստուած ու մարդ՝ մէկ տեղ :

Պ . Իր շատ սրանչելի գործքերովը . քանզի ըրած
գործքերը անանկ գործքեր էին՝ որ միայն Եստուած կրնայ
ընել : Յօհ . Գ . 1 , 2 : Է . 36 : Ժ . 37 , 38 : Ժա .
45 :

Հ . Իր սրանչելի գործքերուն մէկ քանիսներն ի՞նչ
էին :

Պ . Անունները յարուց , հիւանդները բժշկեց , դեւ-
ըր հանեց , ու կուրերուն աչքերը բացաւ : Մարտի . Գ .
23 , 24 : Ը . 13-34 : Թ . 20-35 : ԺԳ . 25 :

Հ . Ուրիշ պատճառ ունի՞ս ցուցընելու թէ ինքն Աս-
տուծոյ հետ հաւասար է :

Պ . Հրամարես . զորօրինակ իր շատ անգամ և զանա-
զան կերպերով զրուցելը , թէ ասանկ էր : Մարտի . Ժա .
27-30 : ԺԳ . 6-8 : ԺԸ . 20 : ԻԷ . 31-46 : ԻԸ . 20 :
Մարտի . Է . 1-12 : Յօհ . Է . 17-29 :

Հ . Ի՞նչ կերպով մեռաւ մեր Փրկիչը :

Պ . Անր Տէրը մեծ ամօթ կրելով ու սաստիկ չարա-
րուելով , խաչին վրայ՝ մեռաւ մեզի համար :

Հ . Իր մարդ ըլլալով և չարաբարուելովն ու մեռնելովը
մեզի համար ի՞նչ կը ցուցընէ :

Պ . Անր վրայ ունեցած իր սիրոյն մեծութիւնը : Յօհ .
ԺԳ . 34 : ԺԷ . 12 , 13 :

Անր Փրկիչը Յիսուս Բրիստոս մարդ է , ինքը Այս
Բարիամէն ծնաւ՝ Յուդային Իսթղէհէմին մէջը . երսուն
տարիի չափ իր ծնողացը հետ Գալիլեայի Կազարեթ քա-
ղաքը բնակեցաւ , իրեք կամ չորս տարի քարոզեց , և շատ
սրանչելի գործքերով յայտնեց որ ինք Եստուծոյ Որդին էր
ու աշխարհի Փրկիչը : Իսուն իր քաղաքակից Հրեաները

նախանձով լեցուեցան՝ ու իրեն դէմ ելան, և ինքը խա-
 ջուեցաւ: Հռովմայեցի կառավարիչ Պնտացի Պիղատոսին
 ասեմը, թաղուեցաւ, և իրքը օրէն ետքը նորէն յարու-
 թիւն առաւ: Օճաւ, ապրեցաւ, ու մեռաւ: Ուստի
 կը տեսնէք որ մարդու պէս ծնաւ, մարդու պէս ապրեցաւ
 և մարդու պէս մեռաւ:

Մ. Յիսուս Քրիստոս մեր Փրկիչը լոկ մարդ չէ, հա-
 պա Մատուած ալ և մարդ ալ է մէկ տեղ. Երկինքին կամ
 երկրի մեջ իրեն նման մէկը չկայ. իր անունը Լձմնանուէլ
 է, որ բախ է «Մատուած մեզի հետ»: «Մատուած մար-
 մինով յայտնուած»: Մատթ. Կ. 23: Կ. 16:

Ետը համեմատ մենք կը տեսնենք Սուրբ Գիւրքին մեջ
 որ Մատուածոյ վերաբերեալ ամէն բաները Քրիստոսի ալ կը
 վերաբերին. և մարդու վերաբերեալ ամէն բաները Քրի-
 ստոսի ալ կը վերաբերին, մեղքէն ի զատ:

Բ. Իր անձը մեր գիտութեան վեր է. իր անունը
 «Սքանչելի» պիտի կոչուի: Դսոս. Թ. 6: «Սէկը
 չճանչնար Որդին՝ բայց Հայրը»: Մատթ. Ժ. 27:
 Հոս կը տեսնենք խորհուրդ մը որ Մատուած ու մարդ մէկ
 են: Յիսուս Քրիստոս բարձր է երկինքին պէս ու խոնարհ
 երկրի պէս: Ի՛նչ բարձրութիւն և ի՛նչ խորութիւն,
 ի՛նչպէս հեռու և տակաւին ի՛նչպէս մօտ. եկէք իր առջին
 իշանք, և պաշտենք ու երկրպագութիւն ընենք իրեն:

Գ. Իր մարդ ըլլալը կը յայտնէ մեզի իր հիանալի խո-
 նարհութիւնը, իր անպատմելի սերը, և մեր փրկու-
 թեանը համար իր ունեցած փափաքը: Դսքն իր փառքը
 մէկ գի թողուց, ինքն իր պատիւը չուզեց. ինքը մահին
 նազանդեցաւ, ու ան ալ խաչին մահուանը. Փիլեղ. Թ. 5-8:
 Հեռ. Ժ. 13: Ինքն իր թշնամիներուն համար
 մեռաւ: Հռովմ. Ե. 5-8: Իր ողբմութիւնը և սէրն
 անչափ են:

Դ. Սննք ուրախութիւնով, և Երախտագիտութիւ-
 նով, սիրով և անկեղծ նազանդութիւնով ընդունելու
 ենք զինքը մեր Մատուածոյն ու մեր Փրկիչին պէս: Պիմա
 են անոնց սիրտերը և սոսկալի պիտի ըլլայ անոնց փախճա-
 նը, որ ուրախութեամբ չեն ընդունիր Փրկիչը: Թ. Կորնթ. Ե.
 Ե. 14, 15: Թ. Թեա. Կ. 7-10:

Ե. Սննք օրինակ առնելու ենք մեզի Քրիստոսի վարքն
 ու կեանքը՝ որ ամենաբարի ու անզուգական էր երկրիս
 վրայ: Փիլեղ. Թ. 4, 5: Սննք իրեն պէս Մատուածոյ
 փառքին համար և ուրիշներուն աղէկութիւն ընելու համար
 ապրելու ենք: Մայր պէս ապրելու համար կը կարօտինք
 ունենալ Փրկիչին ունեցած ներողութիւնը, խոնարհու-
 թիւնը, բարի նախանձը, սէրը, հաւատքը, աղօթքը,
 համբերութիւնը և իր անձնուրացութիւնը: Սակայն
 միայն Հոգին Սուրբ Մատուած կրնայ աս շնորհները մեզի
 պարզեւել ու աւելցունել:

3 Ի՞նչու Քրիստոս մարդ եղաւ:

Եբր. Թ. 1-18

• Հ. Ի՞նչու Յիսուս Քրիստոս մարդ եղաւ.
 Գ. Որ կարեւայ մեռնիլ մեզի համար: Հեռ. Կ. 16:
 Ժ. 11:

• Ինքը կրնամք մեռնիլ մեզի համար, թէ որ մարդ
 չըլլար:

Գ. Չէ. «Իսնզի ընաւ հրեշտակներուն ձեռք չըլլա-
 ներ, հապա Երբասմայ սերունդին ձեռք կը բռնէ. անոր
 համար պէտք էր անոր բողոքովն եղբայրներուն նման ըլ-
 լալ».
 «Ու արիւն չթափուած թողութիւն չըլլար»:
 Եբր. Թ. 16, 17: Թ. 22:

• Ո՞վ է Երկինքէն իջնող Սեծ վարդապետը՝ որ
 կատարեալ վարժութիւն կու տայ մեզի Մատուածոյ ու Եր-
 կինքին, Դժոխքին ու Փրկութեան ճանապարհին վրա-
 յով:

Գ. Յիսուս Քրիստոս:
 Ինչպէս որ Ռարբի մի կուշուր. ինչու որ ձեր Ուսու-

ցիւք մէկ մըն է, այսինքն Քրիստոս, և դուք ամենքը
եղբայր էք: Ու երկրի վրայ Բէլք ձեզև Հայր մի՛ կոչէք:
Ինչու որ ձեր Հայրը մէկ մըն է, որ երկինքն է: Եւ դուք
ուսուցիչներ մի՛ կոչուիք՝ Ինչու որ ձեր ուսուցիչը մէկ մըն
է, այսինքն Քրիստոս: Մատթ. Ի Գ. 8-10:

Հ. Յիսուս Թ՛նչ կ'ըսէ իր վարսովը:

Պ. « Ես եմ աշխարհի լույսը. ան որ իմ ետեկն կու
գայ. խաւարի մէջ պիտի չբայլէ, հասցա կենաց լույսը
պիտի ունենայ՝: Հ:ճ. Ը. 12: ԺԷ. 35, 36, 46: Ղ. Գ. Բ. 32:

Հ. Ինչու մեր Գրկիչը մեզք գործեց:

Պ. Չէ, ինքը « սուրբ՝ անմեղ՝ անարատ՝ մեղաւոր-
ներէն զատուած » էր: Եբ. Գ. 7. 15: Է. 26: Խ ՊԵ. Գ. Բ. 22:

Հ. Յիսուս երբոր աշխարհի մէջ էր, Թ՛նչպէս կ'ան-
ցունէր իր ժամանակը:

Պ. « Իարեք ընելով՝: Պատճ. Գ. 38: Հ:ճ. Գ. Բ. 34:

Հ. Ես իր օրինակովը Թ՛նչ կը սորվեցունէ մեզի:

Պ. Կը սորվեցունէ մեզի թէ Թ՛նչպէս պիտի սիրենք ու
պաշտենք Մտուած, ու բարի ընենք մեր ընկերներուն:
Հ:ճ. ԺԳ. 14, 15, 34: ԺԵ. 12, 13:

Հ. Ինքը որ մարդ եղաւ ու աս աշխարհիս մէջ ասրե-
ցաւ, զիտե՞ թէ Թ՛նչ է աս աշխարհը, և Թ՛նչպէս են մեր
նեղու թիւններն ու փորձու թիւնները:

Պ. Հրամարես:

Թ՛նչ որ աշխարհ ձեզ կ'ատէ, զիտե՞ք որ ձեզմէ առաջ
իս ատեց: Թ՛նչ որ աշխարհէն եղած ըլլայիք, աշխարհ
իրենները կը սիրէր. բայց որովհետև աշխարհէ չէք՝ հասցա
ես ձեզ աշխարհէն ընտրեցի, անոր համար աշխարհ ձեզ
կ'ատէ: Հ:ճ. ԺԵ. 18-20:

Հ. Եւ Յիսուս մեզի հետ վշտակից կ'ըլլայ, և Թ՛նչ-
պէս մեզ միտարել ու փրկել պէտք է՝ զիտե՞

Պ. Հրամարես:

Ի՛նչպէս չէ թէ անանկ ի՛նչանայապետ մը ունինք որ
կարող չըլլայ մեր տկարութիւններուն կարեկից ըլլալու.
հասցա ինքն ամէն կերպով փորձն առած է Բեռնանս, Բայց
առանց մեղքի: Ուստի ալ համարձակութիւնով մտե-
նանք շնորհաց աթոռին առջևը, որ ողորմութիւն բնորո-
շինք՝ ու շնորհք գտնենք պէտք եղած ատենը Բեռնանս:
Եբ. Գ. 7. 15, 16:

Հ. Երբոր որ Ղազարոս բարեկամը մտաւ ու ինքը
Մարթային և Մարիամին հետ անոր գերեզմանը գնաց,
Թ՛նչ կերպով ցուցուց իր տրտմանից զգացումները:

Պ. « Յիսուս լացաւ: » Հ:ճ. ԺԽ. 35: Ղ. Գ. Բ. ԺԺ. 41:

Մտուածաշունչը կը սորվեցունէ մեզի թէ Ինչու համար
հարկաւոր էր որ մեր երկրպագելն Փրկիչը Մտուածոց Ու-
րին մարդ ըլլայ:

Ն. Որ կարենայ չարչարուիլ ու մեռնիլ մեզի համար:
Մտոր համար մարդ ըլլալ հարկաւոր էր իրեն՝ որ կարենայ
մեռնիլ:

Ի. Որ կարենայ մեր մեծ Ուսուցիչն ըլլալ: Ինքը
միշտ « աշխարհի լույսը » եղաւ ու միշտ պիտի ըլլայ:
Ինքը կը սորվեցունէ մեզի իր Հոգիովը և իր Խօսքովը՝ որն
որ կը կարդանք ու քարոզուած ատենը կը լսենք: Կը սոր-
վեցունէ մեզի թէ Թ՛նչպէս մեծ մեղաւորներ ենք. թէ Թ՛նչ-
պէս պատուական է իր Փրկութիւնը. թէ Թ՛նչպէս ունայն
է աս աշխարհը. թէ Թ՛նչպէս փառաւորեալ է երկինքը:
Քրիստոս մեզի Ուսուցիչն ունենալու համար, պարտինք
զգալ որ առանց անոր յիմար ենք. պարտինք սորվելու
կամեցող ըլլալ, և պարտինք ուրախութեամբ ու անկեղծ

մտօր ընդունիլ և կատարել ան ամենը որն որ ինքը կը սորվեցունէ մեզի : Հօհ . Է . 17 : Ինքն արդարութեան մեծ Երեզական է , անոնք որ խաւարէն փախել կ'ուզեն , պէտք է որ իր լոյսին դան :

Գ . Որ կարենայ գիտնալ ան աշխարհը որուն մէջ մենք կը բնակինք , և մարդոց նեղութիւնները , փորձութիւններն ու տրտմութիւնները : Ուր որ մենք կը բնակինք , ինքն ալ բնակեցաւ . ինչ որ մենք կը զգանք ինքն ալ զգայ , մեղքն 'ի զատ : Ուրեմն կրնայ համակրութիւն ունենալ մեզի հետ , ու օգնել մեզի . և մենք իրմէն ողբմութիւն ու շուրհք պիտի գտնենք պէտք եղած ատենը : Փրկիչն իր եղբայրներուն նման ըլլալով եկաւ (Նքր . Թ . 17) մեզի շատ մօտ , և որչափ որ մօտ է , այնչափ ալ պատուական է :

Դ . Եւ որ կարենայ բարի ու կատարեալ օրինակ մը գոյցընել մեզի՝ որ Մատուած ու մեր ընկերները սիրենք :

Իր օրինակէն կը սորվենք , թէ ինչպէս ապրելու ու մեռնելու ենք : Իր օրինակը կատարեալ է . ու որչափ որ մենք իր օրինակին կը հետեւինք , այնչափ կը մօտենանք կատարելութեան և ան ամէն հանգամանքներուն որ ազնիւ ու առարինի , սուրբ ու բարձրացեալ են Մատուոյ ու բոլոր աշխարհի առջեւ :

Ե . Վրիստոս ինքն Մատուած էր ու մարդ ըլլալու հաճեցաւ , որ կարենայ չարարուիլ ու մեռնիլ մեզի համար , մեր Ուսուցիչն ըլլալ , և մեր կարեկից բարեկամն ու Փրկիչը , մեր կատարեալ օրինակն ու առաջնորդը պատուոյ ու անմահութեան . բայց թէ որ զինքը ասանկ չընդունինք , ինչ օգուտ ունի մեզի : Թե որ անարգէնք Սեծ Մատուածն ու մեր Փրկիչը , ինչ պիտի ըլլայ մեր փախճանքը , ուրիշ բան չէ՝ բայց միայն կորուստ :

4 . Վրիստոս մեզ պատիժէն կ'ազատէ :

Երայ . ԺԷ . 1-12 :

Հ . Սենք մեղաւոր ենք , Մատուած ալ մեզի բարկացեր է . ուրեմն ինչ պիտի յուսանք իրմէն :

Պ . Պատիժ : Հայտ . ԻԲ . 12 :

Մատուած արդար դատաւոր է . ու Մատուած Գրոտորին ամէն օր բարկացած է : Սաղ . Է . 11 : Վասն զի դուն անօրէնութիւն ուղող Մատուած լիս . չարը բու բովք պիտի չննակի : Ապարտները բու աշխարհ առջն պիտի չկենան . բոլոր անօրէնութիւն գործողները կ'ատես : Սաղ . Է . 4 , 5 : Վասն զի Որդին մարդոյ իր Հօրը փառքով պիտի զայ իր հրեշտակներուն հետ . և ան ատենը ամէն մեկուն իր գործերուն համեմատ հատուցում պիտի ընէ : Սաղ . ԺԳ . 27 : Տէրը գիտէ բարեպաշտները փորձութենէ ազատելը , և անիրաւները սանջնաբի համար դատաստանի օրունս պահելը : Թ ՊԷԿ . Թ . 9 :

Հ . Սեղաւորներուն պատիժը զալու աշխարհին մէջ ճշտապէս պիտի տեսէ :

Պ . Հաւիտանս յաւիտենից : Սաղ . ԻԷ . 46 : Թ ԹԷԿ . ան . 7-9 : Ղ . Գ . ԺԳ . 23-26 :

Հ . Ո՛ր սեղ :

Պ . Դժոխքին մէջ : Սաղ . ԻԾ . 43-48 : Սաղ . ԺԴ . 8 , 9 :

Հ . Թեպէտև մեղաւոր ենք , բայց մենք մեզմէ արժանաւոր բան մը չենք կրնար ընել՝ որ Մատուած հաճեցուն ենք ու իրմէն թողութիւն գտնենք :

Պ . Չէ :

Մա գիտնալով՝ որ մարդ օրէնքին գործերէն չկրնար արդարանալ , հասցա Հիտուս Վրիստոսի հաւատքէն : Ղաղ .

Թ. 16 : Չէ թէ արդարութեան գործքերէն՝ որ մենք ըրինք , հապա իր ողորմութեանը համեմատ մեզ փրկեց : Տէր . Գ . 5 :

Ն . Սենք տանջանքներուն տեղը երթալէն ետքը նորէն դուրս պիտի ելլե՞նք :

Պ . Չէ . մեղքին պատիժը յաւիտենական է :

Եւ անոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը , իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը : Մարտ . ին . 46 :

Ն . Ուրեմն մենք յանցաւոր ու կորուսած ենք . բայց մէկը չկայ որ անհուն սիրով աշխարհ եկաւ մեզ փրկելու համար :

Պ . Հրամարնս :

Ն . Ո՞վ է անիկայ :

Պ . Յիսուս Վրիստոս Աստուծոյ Որդին : Յօհ . Գ . 16 : Գ . 42 : Դ . 11 : Գաղ . Գ . 4 , 5 : Կ . Տէր . Թ . 5 : Կ . Յօհ . Գ . 5 : Գ . 10-14 :

Ն . Սեր մեղքերուն պատիժէն Յիսուս ի՞նչ կերպով կը փրկէ մեզ :

Պ . Ինքը մեր տեղը մեզի համար չարչարուեցաւ ու մեռաւ : Հուով . Գ . 23-26 : Ե . 6-8 : Կ . Պետ . Գ . 18 : Կ . Սորթ . Ժ . 3 : “ Ինքը մեր մեղքերուն համար վերաւորուեցաւ , և մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ . մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ . և անոր վէրքերովը մենք բժշկուեցանք ” : Երայ . Ժ . 1-12 : Մարտ . իդ . 31 : Յօհ . Կ . 29 : Հուով . Գ . 25 : Եթ . Ժ . 5-10 :

Ն . Սեր փրկուելուն ուրիշ ճամբայ մը կայ Յիսուս Վրիստոսէն զատ :

Պ . Չէ : Յօհ . Ժ . 9 :

Ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ . ինչու որ անկէ՛ ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը մարդոց մէջ

տրուած , որ անով կարող ըլլանք փրկուելու : Գործ . Գ . 12 : Են . որ Որդիին կը հաւատայ , յաւիտենական կեանք ունի . և ան որ Որդիին չհնազանդիր , անիկայ կեանք պիտի չտեսնէ . հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ : Յօհ . Գ . 36 Վանդի մէկ Աստուած մը կայ , ու մէկ միջնորդ մը Աստուծոյ ու մարդոց մէջը՝ Վրիստոս Յիսուս մարդը . որ իր անձը ամենուն տեղը փրկանք տուաւ իր ատենին վկայութիւն ըլլալու : Կ . Տէր . Թ . 5 , 6 :

Ն . Ուրիշ Փրկիչ մը կը կարոտի՞նք :

Պ . Չէ , մենք իրմով կատարեալ ենք :

Վանդի գիրքը կ'ըսէ . “ Օգուշացե՛ք՝ ըլլայ որ մէկը ձեզ կողպտէ փիլիսոփայութիւնով ու փուճ խարէութիւնով , որ մարդոց աւանդութեան պէս է՝ ու աշխարհիս սկզբունքներուն պէս , և չէ՛ թէ Վրիստոսի վարդապետութեանը պէս . ինչու որ անոր մէջը կը բնակի Աստուածութեան բոլոր լեցունութիւնը՝ մարմնապէս : Սաղ . Թ . 8 , 9 :

Իսկ դուք անկէ էք Վրիստոս Յիսուսով , որ ան մեղի Աստուծա՛ն իմաստութիւն՝ արդարութիւն՝ սրբութիւն և փրկութիւն եղաւ . որ ինչպէս գրուած է , Են որ կը պարծենայ՝ Տէրոջմով թող պարծենայ : Կ . Սորթ . Կ . 30 , 31 :

“ Աստուծոյ բարկութիւնը պիտի յայտնուի երկինքէն մարդոց ամբարշտութեանն ու անօրէնութեանը դէմ ” : “ Սեղքին վարձքը մահ է ” :

Ե . Թէ որ մենք Փրկիչ մը չունենանք , յաւիտենա յաւիտենից կորուսած ենք . մենք ինքզինքնիս կրնանք փրկել . չէ՛ , չենք կրնար . մենք ինքնիրենուս Աստուծոյ առջև արժանաւոր բան մը չենք կրնար ընել , որ բոլոր մեր գործած չարութիւններուն փոխարէն մը ըլլայ , ու

այնպէս իր շնորհքը և ներելը ծախու առնենք . ինչու որ մեղանւեցինք . և թէպէտ ասկէ ետև մէյ մյն ալ մեղք չործենք , բայց մեր գործած մեղքերուն համար պարտաւոր ենք պատիժ կրելու : Չնայ կենար տանջանայ տեղը երթալ ու մեր մեղքերուն համար պատժուիլ , ու ետքը նորէն դուրս գալ ու փրկուիլ . ինչու որ մեղքին պատիժը անփախճանն ու յաւիտենական է : Վեղաւորը անգամ մը դժոխք երթալու որ ըլլայ , բնաւ մէյ մյն ալ ան ահագին տեղէն դուրս պիտի չլլի : Ի՞նչ դատարկ բան է մեզի յուսալ թէ մենք ինքզինքնիս թէ որ չկրնանք փրկել ալ՝ Մատուած մեր վրայ պիտի ողորձի ու մեզ պիտի չպատժէ : Բանդի ինք խնայուց որ չարերը անպատիժ պիտի չման . ու ինքն ալ իր խօսքէն պիտի չանցնի :

Արեմն մենք Փրկչի մը կը կարօտինք , անանկ մեկու մը որ մեզի համար մեր մեղքերը կրէ , և Մատուոյ թո՛ղութիւնն ու սէրը պարզեէ մեզի :

Ի . Յիսուս Վրիստոս է առ Փրկիչը : Որ մեր ու Մատուոյ մէջ տեղը կը մտնէ մեր խաղաղարարին պէս : Որ կը հաճի անհուն սիրով մեր տեղը բռնել : Որ կը յայտնուի մեր Վզատիչին պէս : Որ կը կրէ մեր մեղքերը բուն իր անձին մէջ խաչին վրայ , ու Մատուած ալ հաճուած թեամբ զինքը կ'ընդունի մեր տեղը . ինքը մեզի համար կը չարչարուի . ինքը կը հատուցանէ մեր մեղքին պարտքը . կը մեռնի "Մրդարք անարդարներուն համար" :

Գ . Ի՛նչ ինքն է կատարեալ ու միայն Փրկիչը : Մեր փրկութեան գործը ինքը կատարեց . մենք բան մը չենք կրնար ընել . ինքը մեզի համար ինքզինքը պատարագ ու գոհ մատուց Մատուոյ՝ բողոքովն հաճելի և ընդունելի ըլլալով : Արիւով մը փրկութիւն չկայ , ուրիշէ մը չենք կարօտիր , հասցա Իրմով կատարեալ ենք (ւն) : Ո՛վ որ

ւն . Իսկ դուք անկէ էք Յիսուս Վրիստոսով , որ ան մեզի Մատուած իմատուութիւն՝ արդարութիւն՝ սրբութիւն և փրկութիւն եղաւ . որ ինչպէս զրուած է , Են որ կը պարծենայ Տէրովնով թող պարծենայ : ւն Աորն . ւն . 30 , 31 : Ի՛նչ դուք ալ անով լքուած էք . որ ինքը զրեւն է բոլոր իշխանութեանն ու պետութեանն : Ող . ք . 10 :

Յիսուս Վրիստոսն աւելի ուրիշ ճամբայ մը կը փնտռէ , չկրնար փրկուիլ (ւն) :

Գ . Թէ՛ մեզի և թէ՛ բոլոր աշխարհի ամենէն մեծ ուրախարար աւետիս ան է , որ Մատուած իր նախատես խոնամքով մեզի Փրկիչ մը պատրաստեց մեզ մեղքէն ու Գժոխքէն ազատելու համար :

Ուստի խնարհաբար խոստովանելով մեր մեղքերն ու մեր իրաւապէս դատապարտուած ըլլալը , խնդրենք Մատուած թողութիւն ու իրեն հետ հաշտութիւն՝ միայն Վրիստոսով , միշտ անոր միջնորդութիւնովը երթանք Մատուոյ և մեր աղօթքներն ու շնորհակալութիւնները մատուցանենք անով , և անոր վրայ հաւատք ունենալով ապրինք . և երբոր պարծինք՝ անով պարծինք . կորսուելու մարդոց փրկութիւն միայն Վրիստոսով է . բանդի ինքն է ամենը՝ ամէն բանի մէջ :

5 . Յիսուս Վրիստոս չարչարուեցաւ ու մեռաւ մեզի համար խաչին վրայ :

Մարտ . ի՛ . 1-36 :

- Ա՛ր քաղաքը խաչուեցաւ մեր Փրկիչը .
- Պ . Երուսաղէմ՝ քաղաքը :
- Ի՞նչ էր ան տեղին անունը ուր որ ինքը խաչուեցաւ :
- Պ . Գողգոթա՝ ու Գաղատն : Մարտ . ի՛ . 33 :
- Յօ՛ւ . ԺԺ . 17 :
- Ար՞նք զինքը խաչուելու դատապարտեցին :

ւն . Ի՛նչ ուրիշ մեկով մը փրկութիւն չկայ . ինչու որ անկէ 'ի զատ ուրիշ անուն մը չկայ երկնքին տակը մարդոց մէջ տրուած , որ անով կարող ըլլանք փրկուելու : Գործ . դ . 12 :

Պ . Հրէաները բուն իրեն ազգը : Յօհ . ան . 11 :
Եւսոյ . ծի . 1-3 :

Հ . Ո՞վ մասնեց իր Տէրը :
Պ . Յուդան : Մատթ . Ժ . 4 : Յօհ . ծի . 21-27 :
Հ . Քահանայակետները քանի՞ կտոր արծաթ տուին
Յուդային՝ որ Յիսուան իրենց մասնէ :

Պ . Երսուան կտոր : Մատթ . ից . 14-16 : Յօհ . ծի . 1-16 :

Հ . Ի՞նչ էր ան պարտեղին անունը՝ որուն մէջն էր
Յիսուա , երբոր Յուդան զենքը մասնեց :

Պ . Գեթսեմանի : Յօհ . ծի . 1 , 2 :
Հ . Յուդան ի՞նչպէս մասնեց Յիսուսը

Պ . Համբուրելով : Մատթ . ից . 48-50 :
Հ . Յիսուային դէմ ի՞նչ վկայութիւն ըրին Հրէա-

ները :

Պ . Սուտ վկայութիւն : Մատթ . ից . 57-61 :
Հ . Ինչի՞նչ Հրէաները Յիսուսը մեռցունել ուզեցին :

Պ . Քանզի նախանձեցան անոր վրայ ու ատեցին զին-
քը : Մատթ . իէ . 18 :

Հ . Ո՞վ էր ան Հռովմայեցի Առաւվարը որն որ
Հրէաները համոզեցին որ Յիսուսը խաբը հանէ :

Պ . Պոնտացի Պիղատոս : Մատթ . իէ . 2 :
Հ . Ի՞նչ յանցանք ձգեցին անոր վրայ Պիղատոսին
առջև :

Պ . Թաղաւոր ըլլալ կ'ուզէ , ըսին : Ղ . ան . ից . 1-3 :

Հ . Պիղատոս հաւատեց որ Յիսուա յանցաւոր է ու
խաչուելու արժանի :

Պ . Չէ : Ղ . ան . ից . 4-15 :
Հ . Պիղատոս Յիսուսը թող տալ ուզեց :

Պ . Եւրո՞ : Յօհ . ծի . 4-12 :

Հ . Երբոր Պիղատոս անոնց ձեռքը տուաւ Յիսուսը
որ խաչուի , ի՞նչ ըրաւ ժողովուրդին առջև :

Պ . Ծուր ատաւ ու իր ձեռքերը լուաց : Մատթ . իէ . 24 , 25 :

Հ . Պիղատոս՝ Հերովդէսը և Քահանայակետներն ու
զենարմները ի՞նչ ըրին Յիսուսը խաչ հանելու տանելէն
առաջ :

Պ . Օւճեցին ու ծարր ըրին զինքը : Ղ . ան . ից . 11 :

Հ . Յիսուա ի՞նչը կը վերցունէր իր խաչափայտը :

Պ . Հրամբէս , բայց ետքը մէկը բռնեցին Սիմոն
Կիւրենացին , որ Յիսուայի խաչը տանելուն օգնէ : Ղ . ան . ից . 26 :

Հ . Ո՞վ էին ան երկու մարդիկը՝ որ Յիսուայի հետ
խաչուեցան :

Պ . Երկու գողերը : Յօհ . ծի . 18 :
Հ . Խաչուելութիւնով եղած մահը ի՞նչպէս մահ էր :

Պ . Հատ ցաւալի ու նախատակց :
Հ . Որո՞նց համար կրեց Յիսուա աս նախատիները :

Պ . Մեղե համար : Եւսոյ . ծի . 10 : Եւ Պրոֆ . Է . 21 :

Հ . Իր թշնամիները որ զինքը խաչեցին , ի՞նչպէս
նախատեցին զինքը :

Պ . Ար նախատէին զինքը իրենց գլուխը շարժելով :
Մատթ . իէ . 39-44 :

Հ . Ինչ ի՞նչպէս աղօթեց անոնց համար :

Պ . “ Հայր՝ թողու թիւն տուր ատոնց , ինչու որ չեն
զիտեր ինչ կ'ընեն ” : Ղ . ան . ից . 34 :

Հ . Ո՞րչափ ատեն խաւար եղաւ բոլոր երկրի վրայ :

Պ . Իրեք ժամ : Մատթ . իէ . 45 : Մատթ . ծի . 33 :
Հ . Իննեքորդ ժաման Յիսուա բարձր նայնով ի՞նչ
կանեց :

Պ . “Մտուած իմ՝ Մտուած իմ, ինչ՞նչ զես թռ-
ղը-ցիր” : Մարդ . իէ . 46 : Մարդ . ժէ . 34 :

Հ . Երբոր Յիսուս մեռնելու վրայ էր, ի՞նչ էր քառ :

Պ . “Մէն բան կատարուեցաւ” : “Հայր, բո-
ձեռքէ կ’անանեմ իմ հողիս” : Ղուկ . իի . 46 :

Հ . Երբոր Յիսուս մեռաւ, ի՞նչ պատահեցաւ :

Պ . “Երկիրը շարժեցաւ, և բարերը պատուեցան . ու
գերեզմանները բացուեցան” : Մարդ . իէ . 50-53 :

Հ . Ի՞նչ էր ան հարուստ աշակերտին անունը՝ որ
Վրիստոսի մարմինը խաչին վրայէն վար առաւ, ու իր
գերեզմանին մէջը դրաւ :

Պ . Յովնէի : Ղուկ . իի . 50-53 :

Հ . Վրիստոս ճր օրը մեռելներէն յարութիւն առաւ :

Պ . Թաղուելուն երբորք օրը՝ որ շարձիւն առջի օրն
էր . սյոխներն կիրակի օր : Մարդ . իէ . 62-66 :

Հ . Վրիստոս Երկինք համբառնալէն առաջ իր աշա-
կերտներուն քանի՞ օր երեցաւ զանալուն ատեն ու զանա-
լան տեղեր :

Պ . Քառսուն օր : Գործ . ա . 1-3 : ա կորնք . ժէ .
1-8 : Ղուկ . իի . 32 : ի և իս :

Հ . Վրիստոս ճր լեռնէն համբարձաւ :

Պ . Չիթենեաց լեռնէն : Մարդ . ժի . 19 :

Հ . Յիսուս հիմն սճր կր՛նտի :

Պ . “Մտուածոյ աջ կողմը” : Մարդ . ժի . 19 : ա
Պեթ . դ . 22 :

Պէտք էր որ Մտուածոյ Որդին մեռնի մեզ փրկելու հա-
մար . և իր մահուան ժամանակն ու կեբար առաջուց սահ-
մանուած էր Մտուածոյ անհուն իմաստութիւնովը :

Մ . Ի՞նչը խաչին վրայ մեռաւ խիստ անարդ ու ան
ողորմ մահով մը : Ի՞նչը խաչելութեան ցաւերը և տազ-

նասները կրեց անօրէն մարդոց ձեռքովը : Իայց աս ամենէն
զատ՝ իր Հօրը երեսը ծածկուեցաւ իրմէն, ու անոր բար-
կութիւնը իր վրան ինչաւ : Սեղբի համար կրած իր շար-
շարանքներուն մեծութիւնը Մտուած միայն գիտէ . նա-
յկցէք իրեն որ իր քաշելու շարձանքներն առաջուց տես-
նելով, ի՛նչպէս մեծ ահով ու դողով արիւնի մեծ կա-
թիւնը գետինը վազողուց Վեթսէմանի պարտէզին մէջը :
Լսեցէք նաև ան ցաւազին կանչելը, որն որ մարդ չկրնար
զգալ ու իմանալ, “Մտուած իմ՝ Մտուած իմ, իս
ինչ՞նչ թողը-ցիր” :

Մ . Եւ հարկա՞ծր էր որ Մտուածոյ Որդին մեռնէր մեր
փրկութեանը համար : Ելլո՛ւ : Ուրեմն մե՞նք կորսուած
էինք : Եւ իր արիւնէն զատ ուրիշ արիւն մը չէ՞ր կրնար
մեղքի քառութիւն ընել : Ո՛չ ամենէն : Ուրեմն մեղքը
իրացունէ շար ու լեղի բան մըն է : Մտուած անշուշտ
կ’ատէ մեղքը և անշուշտ պիտի պատժէ, որովհետև բուն
իր սիրելի Որդին շինացից որ անիկայ չէ թէ ինքիրմէն մե-
ղաւոր էր, հապա մեղաւորներուն տեղն անցնելուն, անոնց
մեղքերն իր վրան առնելուն համար տանջուեցաւ, մինչև
անգամ ինքզինքը ՚ի մահ մատնելով : Ուստի մեղքը չա-
տմէնք, և շտրամի՞նք անոր վրայ, ու չիսախի՞նք անկեց՝
բոլոր շարիքներուն ամենէն սոսկալին սեպելով անիկայ :

Մ . Եւ Յիսուս ազատարար յանձնատու եղան . ու
Հայրն ալ կամաւ թողո՞ւց իր Որդին որ ասանկ մահով
մը մեզի համար մեռնի : Ուրեմն Հայրն ու Որդին կը
սիրեն մեզ անհուն սիրով . (Յնճ . ժէ . 13 : Հուով .
է . 6-8 .) ասանկ սիրով մը՝ որ արժան է մեր քարացեալ
ու ապստամբ սիրտերը կտորել ու բռնադատել որ մե՞նք
բոլորովին Մտուածոյ համար ապրինք (ա) :

Մ . Վրիստոս շարձարուեցաւ շար մարդոց ձեռքերէն ,

ա . Եւ ամենուն համար մեռաւ , որ կենդանի եղողնե-
րը՝ ալ իրենց անձերուն կենդանի չըլլան , հապա անոր՝ որ
իրենց համար մեռաւ ու յարութիւն առաւ : Է կորնք . է .
15 : Իայց ես՝ բան լիցի որ պարծենամ , հապա միայն
մեր Տէր Յիսուս Վրիստոսի խաչովը , որ անով աշխարհ
յնձի խաչը ելած է , ես ալ աշխարհի : Գաղ . դ . 14 :

նտխատիւր ու թուր, և ծեծ ու մահ ընդունելով մեզի համար: Ինչ որ պէտք ըլլայ, մենք ալ նոյնպէս թող շարձարուինք իրեն համար. և ինչպէս որ ինքն աղօթեց իր թշնամիներուն համար ու ներեց անոնց, մենք ալ նոյնն ընենք: Գարշ. Է. 59:

Ե. Ինքը մեռելներէն յարութիւն առաւ յաղթանակաւ իրեր օրէն կտրք: Իր յարութիւնը փորձով ցուցուց որ ինքն իրաւցունէ Եստուծոյ Որդին էր ու աշխարհի Փրկիչը. որ մեռելէն կտրք հոգին կ'ապրի. և որ բոլոր մեր մարմիններն ալ յարութիւն պիտի առնեն Եստուծոյ սահմանած օրը: Անանքն ու անմահութիւնը լոյսին դէմը կը բերուին Եւետարանով՝ չէ թէ ուրիշ բանով:

Չ. Ինքը երկինք համարձաւ ու Եստուծոյ աջ կողմը կը նստի: Իարձրացեալ Տէր ու Փրկիչ է ինքը որ կարող է փրկել ան ամէնը որ Եստուծոյ կու գան իրմով: Անշտ հոն կը բնակի թագաւորելով, տիրելով, յաղթելով իր թշնամիները, և պահպանելով իր եկեղեցին ամէն ատեն: Սաղմ. Իլ. 20: Եփ. Ե. 12-23: Երջանիկ են անոնք՝ որ իր պատուական արեւնին քառութենէն բաժին ունին:

6. Տէր Յիսուս մեռաւ ամենուն համար:

Եւայ. ԺԷ. 1-13:

Հ. Տէր Յիսուս բոլոր աշխարհի համար մեռաւ թէ միայն մեկ մասին համար:

Պ. Բոլոր աշխարհի համար:

Հ. Յիսուս իր աշխարհ խրկուելուն վայրով ի՞նչ էր:

Պ. "Հայրը իր Որդին խրկեց աշխարհի Փրկիչ Եւլուլ": Եւ Յոհ. Գ. 14:

Հ. Յօհաննէս Արարիչ ի՞նչ ըսաւ Վրդտաոտի վրայով:

Պ. "Եհնն Եստուծոյ Գառն" որ աշխարհի մեղքը կը վերցունէ": Յոհ. Եւ. 29:

Հ. Տէր Յիսուս իր Եւաքեաններուն հրամայեց որ Եւետարանը բոլոր աշխարհի քարոզեն թէ մեկ մասին միայն:

Պ. Բոլոր աշխարհի

Հ. Իր վերջին պատուիրանքն անոնց ի՞նչ էր:

Պ. "Գացէք բոլոր աշխարհ, ու Եւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածն ըստ": Սաղմ. ԺԳ. 15, 16:

Հ. Ուրեմն Եւաքեանները դացին ու քարոզեցին Եւետարանը բոլոր աշխարհի:

Պ. Հրամարեն: Սաղմ. ԺԳ. 20: Գարշ. Բ. 1-21:

Հ. Տէր Յիսուս կը հրաւիրէր ամէն մեղաւորներն իրեն գալու ու փրկուելու, թէ միայն անոնց մեկ մասը:

Պ. Եւ մէն մեղաւորներ:

Հ. Ըսէ նայիմ, ի՞նչպէս կը հրաւիրէ:

Պ. "Եկէք ինձի բոլոր յոգնած ու բեռնաւորածներ, և ես ձեզ պիտի հանդէստանամ: Իմ լուծս ձեր վրայ առէք. և ինձմէ սորվեցէք որ հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեր անձերուն հանգստութիւն պիտի գտնէք: Եւ ձու որ իմ լուծս քաղցր է, և իմ բեռս թեթեւ": Սաղմ. ԺԵ. 28-30:

"Հայրը իր Որդին խրկեց աշխարհի Փրկիչ ըլլալու". Յիսուս երեցաւ և յայտնեց թէ ինքն է Փրկիչը. և յարմար ատենին ինքզինքը զո՞հ մատուց "բոլոր աշխարհի մեղքերուն համար": Ինքը մարդասիրութեամբ հրաւիրեց ամէնը որ իրեն գան, և պատուիրեց իր Եւաքեաններուն, "Գացէք բոլոր աշխարհ, և Եւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն":

Մ. Յիսուս Վրիստոս աշխարհի փրկիչն է. իր պատուական արիւնք բաւական է բոլոր աշխարհի մեղքերը լուարու : Թող բոլոր աշխարհը գայ, և իր ըրած հաշտութիւնը ամենուն համար բաւական պիտի ըլլայ : Ինքը կարող է փրկելու որչափ որ ըլլան փրկութեան փափաքողները, ամէն տեղի մէջ, ամէն վիճակի մէջ, աշխարհի սկիզբէն մինչև վերջը : « Յիսուս Վրիստոս նոյն է երկի և այսոր և յաւիտեան » :

Ի. Ուստի իրմով եղած փրկութիւնը ձրի է ամէն ուզողներուն համար : Հոգ չէ՞ աշխարհիս որ կողմը որ ըլլանք, թէ Նրեւեց ըլլանք, թէ Նրեւեմտը, թէ Հիւսիս, թէ Հարաւ : Հոգ չէ՞ ինչ վիճակի մէջ որ ըլլանք, թէ հարուստ, թէ աղքատ, թէ իմաստուն, թէ յիմար, բարձր կամ ցած. հոգ չէ՞ ոչ ալ ինչ հասակի մէջ որ ըլլանք, թէ ձեր կամ պատանի, արու կամ էգ. ամէնքս ալ մեղաւոր ենք, ու Վրիստոս է Փրկիչ ամէն մեղաւորներու համար :

Պ. Եւետարանը՝ որ անով միայն կը գտնուի փրկութիւնը, ամենուն ալ խրկուելու է : Կնոնք որ Եւետարանը ունին՝ պարտաւոր են խրկել անիկայ անոնց ալ՝ որ չունին, մեր Փրկիչն վերջին պատուիրանքին համեմատ : Եւմէն մարդոց պէտք է քարոզել՝ թէ Փրկիչ մը կայ, ու թէ կրնան փրկուիլ : Թե՛ որ մենք որ Եւետարանը ունինք՝ գանց կ'ընենք կամ չենք հաճիր անիկայ անոնց ալ տալ որ չունին, կամ խարանջու կարողութիւնն ունենալով՝ չենք թողուր անոնց որ իրենք ալ տանան ու կարդան, մեծապէս պատիժի արժանի ենք Մատուծոյ առջին : Ի՞նչ մեծ արտօնութիւն է մարդուս որ Վրիստոսի գիտութիւնը տարածէ ու հոգիներուն փրկութեանը օգնութիւն ընէ. և անոնք որ չեն կրնար անձամբ իրթալ ու Վրիստոս քարոզել, կրնան օգնել իրենց արժեքովը, ու իրենց ողորմութիւնովն ուրիշները խրկել որ քարոզին, ու անոնց հետ ալ Սուրբ Գիրքը խրկել : Եսիկայ արտօնութիւն ու պարտաւորութիւն է մեզի :

Պ. Իր փրկութիւնը անասն ձրի, անասն առատ է, որ ուրբանութեամբ ու սրտով ամենուն ընդունելի ըլլալ արժան է :

Յիսուս իր բոլոր սրտովը կը հրաւիրէ մեզ իրեն դալ : Մենք իրեն հրաւերքը ընդունելու ենք, որ ասանկ մեր փրկութիւնը կատարուի : Վնաց հացը ձրի ու առատապէս պարտատուեցաւ առաջուց, « Չեր ականջը խոնարհեցուցէք, ու ինծի եկէք, մտիկ երէք՝ ու ձեր հոգիները սպրին պիտի » : Եսայ. ԺԷ. 3 :

7. Եսոնք միայն կը փրկուին՝ որ Յիսուսի կը հաւատան :
Յօհ. Գ. 14-36 :

Հ. Տէր Յիսուսի ամենուն համար մեռնելովը ամէն ալ պիտի փրկուի՞ն :

Պ. Չէ՛. միայն անոնք պիտի փրկուին՝ որ կը հաւատան իրեն : Յօհ. Գ. 15-36 :

Հ. Ի՞նչ կը պատուիրէ Եստուած մեզի՛ իր Որդիին հաւատարուն վրայով :

Պ. « Ես անիկայ է անոր պատուիրանքը որ իր Որդւոյն Յիսուս Վրիստոսի անունին հաւատանք, ու մեկզմեկ սիրենք » : Ի Յօհ. Գ. 23 : Մարկ. ԺԷ. 5 :

Հ. Ի՞նչ կ'ընէ մեր Տէրը, իրեն հաւատալու ու մկրտուելու վրայով :

Պ. « Են՝ որ հաւատոյ ու մկրտուի, պիտի փրկուի, և ևս որ չհաւատայ, պիտի դատապարտուի » : Մարկ. ԺԷ. 16 : Յօհ. Գ. 47 :

Հ. Երբոր բանտապետը հարցուց Պողոսին ու Ելիզայիսին, թէ՛ « Տէրեք ինծի ի՞նչ պէտք է ընել, որ փրկուիմ » . անոնք ի՞նչ պատասխան տուին անոր :

Պ. « Հաւատան Տէր Յիսուս Վրիստոսին ու պիտի փրկուիս դուն՝ և չու տունդ » : Գործ. ԺԷ. 31 :

Հ. Ի՞նչպէս Եստուծոյ որդիք կ'ըլլանք :

Պ . « Յիսուս Քրիստոսի հաւատարմութիւնը » Վարդ . Գ . 26 :

Հ . Ինչպէս Քրիստոսը լոռոներուն ամենը շին հաւատարմութիւնն որ յաւիտեանական կեանք ունենան :

Պ . Ինչու որ շին ուղեր . Յօհ . Ե . 40 : Գ . 19 , 20 : Սարգիս . Եր . 1-14 :

Հ . Մտուած կ'ուզէ՞ որ մեկը կորսուի :

Պ . Չէ :

Տէրը երկայնամիտ կ'ըլլայ . չուղեր որ մեկը կորսուի , հապա որ ամենքը ապաշխարանքի դաս : Եր . Պետ . Գ . 9 : Ինչու որ ես կենդանի եմ՝ կ'ըլլեմ Տէր Եհովան , որ ամբարշտին մտնիլը չեմ ուղեր . հապա որ ամբարշտը իր ճամբայէն դառնայ ու ապրի . դարձե՛ք՝ դարցե՛ք մեր շարձամբանքէն . վասն զի ինչպէս մեռնիք՝ ո՛վ Խարայելի տունը : Եր . Լ . 11 :

Հ . Մեղաւոր մը՞ որ իրեն կու գայ , Յիսուս ալ անկեկայ փրկելէն պիտի հրաժարի՞ :

Պ . Չէ . բանգե Տէրը կ'ըլլէ . « Են ամենը որ Հայրը ինձի կու տայ , ինձի պիտի գայ . և ան որ ինձի կու գայ , բնաւ դուրս պիտի չհանեմ » : Յօհ . Է . 37 : Ղ . 42 , 43

Հ . Ուրեմն թէ որ մենք կորսուինք , յանցանքը որբնան է :

Պ . Ի՞նչու մերն է յանցանքը : Մարտի . Եր . 24-33 : Հարմ . Գ . 6-11 :

Եւ Տէր Յիսուս մեռաւ ամենուն համար , և իր պատուական արիւնը բաւական է բոլոր աշխարհի մեղքերը լուալու :

Ս . Ի՞նչո՞ւ թող մեկը չկարծէ որ ամենքն ալ պիտի փրկուին , ան ամենը որ Քրիստոսի կը լան՝ մեկ բան մը

ունին ընկու . և ամէն մեկը պարտին նոյն բանն ընել . այսինքն մենք պարտինք իրեն հաւատալ . թէ որ չհաւատանք , չենք կրնար փրկուիլ :

Ի . Մարդոց կորսուելուն պատճառն ան չէ որ Մտուած կ'ուզէ անոնց կորուստը . հապա բուն իրենք չեն ուղեր որ փրկուին . Մտուած չհաճիր մեղաւորներուն մահուանը կամ պատիժին . բայց մեղաւորն իր մեղքերն ու ներկայ աշխարհը աւելի սիրելով՝ իր կամքով կը մերժէ Քրիստոսը . և Մտուած արդար ըլլալով՝ մեղաւորը պարտի կորսուիլ :

Պ . Ուրեմն կորուսած մեղաւորը՞ իր կորսուելուն համար , բուն ինքը յանցաւոր պիտի սեպուի յաւիտեանս յաւիտեանից :

Պ . Ենչպիսի մեծ է մեր բնական կորուսիւնը և չարութիւնը որ Սուրբ Հոգիին կը կարօտինք որ մեզի յուշուէ մեր մեղաւոր ու կորուսած ըլլալը , ու մեզ դարձունէ Քրիստոսի : Երանց անոր շնորհքին օգնութեանը մենք բնաւ Քրիստոսի չենք կրնար դալ :

8 . Ի՞նչ է Յիսուս Քրիստոսի հաւատարմութիւնը :

Ղ . 1-4 . Եր . 1-24 :

Հ . Երբ որ տղաքը յանցանք մը գործեն , այսինքն՝ իրենց հօրը կամ մօրը շնորհակցին , ի՞նչ պէտք է որ զղան :

Պ . Տրամոնթիւն :
Հ . Եւ ի՞նչ պարտին ընել :
Պ . Թողուի ինձի ու մեկ մըն ալ անանկ չընել :

Հ . Մտուած ներող և ողորմած է :
Պ . Հրամարես : Եր . Լ . 6 , 7 :
Սակայն ամէն բան Մտուածէն է , որ մեզ իրեն հետ

Հաշտեցուց Յիսուս Վրիստոսի ձեռքովը, ու տուաւ մեզի Հաշտութեան պաշտօնը: Այսինքն Մատուած էր, որ Վրիստոսով աշխարհս իրեն հետ Հաշտեցուց, և անոնց յանցանքները իրենց չսեպեց, ու Հաշտութեան խօսքը մեր մէջը գրաւ: Ուրեմն Վրիստոսի կողմանէ դեպանութիւն կ'ընենք, իբրև թէ Մատուած կը բարխօսեր մեզմով. կ'ազաւենք յեղէ Վրիստոսի կողմանէ, Հաշտուեցէք Մատուծոյ հետ: Այսան զի Մատուած անիկայ՝ որ մեզք չէր գիտեր, մեզի համար մեղաւոր սեպեց, որ մենք անոր միջոցով Մատուծոյ արդարները ըլլանք: Ը Վրի՛ն. Ե. 18-21:

Հ. Ուստի՛ երբոր մենք Մատուծոյ դէմ մեղանչենք, երբոր մեր Երկնաւոր Հօրը Հնազանդինք, ի՞նչ պէտք է որ զգանք:

Պ. Խորունկ տրամուծիւն:

Հ. Եւ ուրիշ ի՞նչ ընելու ենք:

Պ. Թողութիւն խնդրելու ու մէյմըն ալ անանկ ընելու չենք:

Հ. Մտք վրայով ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը:

Պ. «Թէ որ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ՝ ու արդար է անիկայ մեր մեղքերուն թողութիւն տալու, և մեզ բոլոր անիրաւութենէ սրբելու»: ԿՅԶ. Կ. 9: Հատմ. Ժ. 9, 10:

Հ. Պէտե՞կոստէին օրը ժողովուրդները խորունկ մը զգացին թէ մեղաւոր էին, և ըսին Պետրոսին ու բոլոր Մարբաներուն թէ՛ «Մարդիկ Եղբայրներ, ի՞նչ ընենք», Պետրոս ալ ի՞նչ պատասխան տուաւ անոնց:

Պ. «Մպաշխարեցէք, ու ձեզմէ ամէն մէկը թող մկրտուի Յիսուս Վրիստոսի անունովը՝ մեղաց թողութեան համար»: Վրի՛ն. Ե. 38:

Հ. Ի՞նչ է մեր մեղքերուն վրայ ապաշխարելը:

Պ. Ընոնց վրայ տրամիլ, և անոնք խոստովանիլ ու անոնցմէ հեռանալ: Վրի՛ն. Ժ. 18: Ը Վրի՛ն. Է. 9-11:

Իր յանցանքները ծածկողը յաջողութիւն չգտնեց. բայց դաննք խոստովանողն ու մէկդի ձգողը ողորմութիւն կը գտնէ: Մատմ. Ե. 13:

Հ. Բայց մեր մեղքերուն համար տրամելէն և անոնք Մատուծոյ խոստովանելէն ու մէկդի ձգելէն ետև, որո՞նք արժանաւորութիւնովը Մատուած պիտի ներէ մեզի:

Պ. Միայն Վրիստոսի արժանաւորութեանը համար:

Հ. Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը ներողամիտ ըլլալու վրայով:

Պ. «Եւ իրարու հետ քաղցր եղևք, զթած, ներելով իրարու, ինչպէս որ Մատուած՝ Վրիստոսով ներեց ձեզի»: Եփեա. Դ. 32: Վրի՛ն. Գ. 13:

Հ. Մատուած մեր աղէկ ըլլալուն կամ մեր բարեգործութեանը համար կը ներէ մեզի թէ բոլորովին Վրիստոսի համար:

Պ. Բոլորովին Վրիստոսի համար: Եփեա. Ը. 5-8:

Որչի մը պիտի ծնանի, ու անոր անունը Յիսուս դնես. քանզի անիկայ իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ: Մատմ. Կ. 21: Ինչու որ Որչին մարդոյ սկիւ՛ կորսուածը փրկելու: Մատմ. Ժ. 11: Ընոր կը վկայեն բոլոր մարդարէները թէ ամէն իրեն հաւատացողները իր անունովը մեղաց թողութիւն կ'առնեն: Վրի՛ն. Ժ. 43: Ինչու որ ամէնքը մեղք գործեցին, և Մատուծոյ փառքէն պակասած են: Եւ անոր շնորհքովը ձրի կ'արդարանան: Հատմ. Գ. 23, 24: Որ երբ որ դեռ մեղաւոր էինք, Վրիստոս մեզի համար մեռաւ. ուրեմն հիմա որ իր արիւնովը արդարացանք, որչափ աւելի իրմով պիտի ազատինք բարկութենէն: Այսան զի թէ որ թշնամի եղած ատենիս Մատուծոյ հետ Հաշտուեցանք իր Որչոյն

մահովը, որչափ աւելի մեր հաշտուած ատենը պիտի ապ-
րենք անոր կեանքովը: Հոով. Ե. 8-10:

Հ. Յիսուս իր կենաց ճանապարհ ըլլալուն վրայով
Խնչ կ'ըսէ:

Պ. « Ես եմ ճամբան ու ճշմարտութիւնն ու կեանքը .
մէկը Հօրը քով չգար, եթէ ոչ ինծմով: » Յօհ .
ԺԷ. 6:

Հ. Ուրիշ Խնչ կ'ըսուի ասոր վրայով:

Պ. « Եւ ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ: Ինչու
որ անկէ 'ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը
մարդոց մէջ տրուած, որ անով կարող ըլլանք փրկուե-
լու: » Գործ. Գ. 12:

Հ. Յիսուս Վրիստոսի հաւատալը Խնչ կը պատ-
ճառէ մեղաւորին սրտին:

Պ. Խաղաղութիւն և ուրախութիւն:

Եւ զանոնք իր տունը տանելով անոնց առջևը սեղան
դրաւ, և բոլոր տունովը ուրախ եղաւ: Մտուծոյ հաւա-
տալով: Գործ. ԺԷ. 34: Ը. 8, 39: Հոով. ԺԵ.
13: Իմ Թեա. Իմ. 6:

Հ. Երկինքին մէջ յաւիտեանս յաւիտենից ճով պիտի
օրջենք՝ մեզ իր արիւնովը փրկելուն համար:

Պ. Տէր Յիսուսը: Յայտ. Իմ. 5, 6: Ե. 9-14:

Վրիստոսով փրկութիւն ստանալու համար, պէտք է՝
Մ. Վաղախարութիւն. Ինչու որ առանց ապաշխա-
լութեան անկարելի է որ մէկը Վրիստոսի դայ: Մենք
պարտինք փորձել ու սրտով արտմիլ մեր Մտուծոյ դէմ
գործած մեղքերնուս համար: պարտինք բան մը չծածկել
ու չպահել, հապա խտտովանիլ Մտուծոյ առջևը բոլոր
մեր մեղքերը, և յայտնել թէ ինչպէս աստիկ ցաւ և
զղջում կը զգանք անոնց համար. Ինչպէս կ'ատենք անոնք.

նաև պարտինք խօսք տալ Մտուծոյ որ իր շնորհքին մեզի
օգնելովը մէկդի պիտի ձգենք անոնք, ու սուրբ կեանք
մը պիտի վարենք, ճիշտ ինչպէս որ ինքը կ'ուզէ ու կը
պահանջէ:

Բ. Փրկուելու համար մեր բոլոր յոյսերը Վրիստոսի
վայ, ու միայն Վրիստոսով պիտի ըլլան: Մենք պար-
տինք աղաչել Մտուած՝ որ մեզ ընդունի շնորհքով. չէ
թէ մենք մեզմէ բարի ենք ու կրնանք անանկ բարի գործերը
ընել որով արժանի ըլլանք իրմէն թողութիւն ու շնորհք
ընդունելու. Ինչու որ մենք մեզմէ անարժան ենք, ար-
ժանի ըլլալով միայն բարկութեան, ու չենք կրնար բան
մը ընել Մտուծոյ շնորհքին արժանաւոր ըլլալու համար.
մէկ խօսքով կորսուած ենք, ու պարտինք Մտուածէ թո-
ղութիւն ու շնորհք խղիղել միայն Վրիստոսի համար:
Մենք չենք կրնար փրկել ինքզինքնս, Վրիստոս կը փրկէ
մեզ: Ուստի պարտինք Վրիստոսը մեզի Փրկիչ անունը
և իրեն միայն ապաւինիլ փրկութեան համար: Ինքը
քառութիւն ըրաւ մեր մեղքերուն համար և ինքը բարե-
խօսութիւն կ'ընէ մեզի համար Մտուծոյ առջևը. Մս-
տուած ալ զենքը մեղաւորներուն մեջնորդ կ'ընդունի, և
անոր ամէն ըրածներուն ու չարաքարներուն համար կը
նկրէ ու կը փրկէ մեզ: Իմ Արեմ. Գ. 11: Հոով. Գ.
22-25:

Գ. Երբոր մենք ապաշխարենք ու Յիսուսին հաւա-
տանք, և թողութիւն գտնելու յոյս ունենանք ու զգանք
որ Մտուծոյ սէրը մեր սրտին մէջ ունինք, շատ աղէկ
իրաւունք պիտի ունենանք ուրախանալու, և իրաւ պիտի
ուրախանանք: Հոով. Ե. 1-11: Ը. 1-39: Յօհ.
Ժ. 27-30:

Դ. Մեր արդարութեանն ու մեր փրկութեանը բոլոր
փառքը և պատիւը Յիսուս Վրիստոսի տրուելու են յաւի-
տեան: Կն որ մեզ կը փրկէ, մեր փրկութեան փառքն ու
պատիւը անչուչտ պէտք է որ ինք ունենայ: Մենք կ'աղա-
ղակենք՝ « Զէ թէ մեզի, Իմ Տէր՝ չէ թէ մեզի, հապա
քու անուանդ փառք տուր: » Սաղմ. ճճԵ. 1: Իմ Արեմ.
Իմ. 30, 31: Ուրչափ որ Սուրբ Հոգիին զօրութիւնովը
մեր մեղքերը կը զգանք և Տէր Յիսուսը սիրով կ'ընդու-

նինք մեր Փրկչին պէս , այնչափ աւելի կը խոնարհէնք . ու կը փափաքենք որ բոլոր փառքը ինքն ունենայ : Փիլիպ . ք . 7-9 : Պատղ . ք . 14 :

Ի . Ստանդարտը վիճակի մէջ են ու պիտի կորսուին յաւիտեան ամէն անոնք որ Յիսուս Քրիստոսի հաւատաքովը եղած արդարութիւնն ու փրկութիւնը կը մերժեն , և արդարութեան ու փրկութեան համար բռն իրենց բարի գործքերուն՝ կամ իրենց արդարութեանը վրայ կը հաստատան յոյսերնին : Ենոնք չունենցած բաներունն կը յուսան : Մարդիկ՝ բռն իրենք ըլլալ կ'ուզեն իրենց Փրկիչը , բայց ասիկայ անկարելի բան է (ա) :

ա . Են որ Որդիին կը հաւատայ , յաւիտենական կեանք ունի . և ան որ Որդիին չնազանդիր , անիկայ կեանք պիտի չտեսնէ . հապա Մատուցող բարկութիւնը անոր վրայ կը մնայ : Հօհ . ք . 36 : Ինչու որ ես կը վրայեմ անոնց համար , թէ Մատուցող նախանձաւորութիւնը ունին , բայց ոչ թէ գիտութեամբ : Ստան զի անոնք Մատուցող արդարութիւնը չգիտանալով , ու իրենց արդարութիւնը հաստատել ուզելով , Մատուցող արդարութեանը չնազանդեցան : Քանզի օրէնքին վախճանը Քրիստոս է՝ ամէն հաւատացեալին արդարութեան համար : Ինչու որ Սոմեկս օրէնքին եղած արդարութիւնը կը ասորադրէ , թէ գանոնք կատարող մարդը անոնցմով պիտի ապրի : Բայց հաւասարէն եղած արդարութիւնը ասանկ կ'ըսէ . Մի՛ բսեր քու սրտիդ մէջը , թ'վ պիտի ելլէ երկինքը , (այսինքն Քրիստոսը ինչեղունելու .) Ամ՛ թէ՛ Ո՛վ պիտի ինչէ անդունդը , (այսինքն՝ Քրիստոսը մեռնելներէն հանելու :) Հապա ի՛նչ կ'ըսէ . Խօսքը մօտ է , բու բերնիդ մէջը , և քու սրտիդ մէջն է , այսինքն հաւատարին խօսքը որ մենք կը քարոզենք : Ինչու որ՝ եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր խոստովանիս , ու քու սրտիդ մէջը հաւատաս թէ Մտուած անիկա մեռնելներէն յարուց , պիտի փրկուիս . (Ստան զի սրտով կը հաւատայ մէկը արդարանալու , ու բերնով կը խոստովանի փրկուելու :) Քանզի զիրբը կ'ըսէ . Ե՛մն ով որ անոր հաւատայ՝ պիտի չամչնայ : Հատկ . ք . 2-11 :

Է . ՄԵՐ ՎՐԻՍՏՈՍՈՒ ԳԵՂՈՒՆ ՈՒ ԵՐԿՈՒՆՎԻՆ ԷՍՄԵՐ ՊԵՏՐՍՏՈՒՆԵԿԵՆ ՎՆԵՊԵՏՈՒԹԻՒՆ

1 . Ենք կամք չունինք Քրիստոսի գալու մեր փրկութեանը համար . հապա Մատուած է որ կը փոխէ մեր սիրտերը ու իր Հոգիովը Քրիստոսի կ'առաջնորդէ մեզ :

Հ . Մտուած իր Որդին մեզի համար մեռնելու խրկած ըլլալը զխոնարհութիւն կամք ունի՞նք զինքը սիրելու ու իր բն մեր Փրկչին ընդունելու անիկայ :

Պ . Չէ՛ . քանզի մեր սիրտերը խիստ չար են : Սիրտը ամէն բանէն աւելի խարբայ ու խիստ չար է : Երբ . Ժէ . 9 :

Ինչու որ մարմնաւոր եղողները մարմինն բաները կը մտածեն , ու հոգեւոր եղողները հոգիին բաները : Ստան զի մարմնաւոր խորհուրդը մահ է , և հոգեւոր խորհուրդը՝ կեանք ու խաղաղութիւն : Քանզի մարմնաւոր խորհուրդը Մատուցող դէմ թշնամութիւն է . քնչու որ Մատուցող օրէնքին չնազանդիր , մանաւանդ չկրնար ալ : Ստան զի մարմնով եղողները , չեն կրնար Մատուցող հաճոյ ըլլալ : Հատկ . ք . 5-8 :

Երբ՝ մարմինն գործքերը յայտնի են , որ ասոնք են . շնութիւն , պոռնկութիւն , պղծութիւն , գիժութիւն , կռապաշտութիւն , կախարդութիւն , թշնամութիւններ , կոխներ , նախանձներ , բարկութիւններ , հակառակութիւններ , Երկպառակութիւններ , բաժանումներ , չար նայուածքներ , մարդասպանութիւններ , դիմովութիւններ , անառակութիւններ , ու ինչ որ ասոնց նման են . որ հիմակուց ես ձեզի կը դրուցեմ , ինչպէս առաջուց ալ

կը զտուցէի, որ ասանկ բաներ գործողները Մատուծոյ ար-
քայութիւնը պիտի չտառազնէն : Գորդ. Է. 19-21 :

▲. Երբոր Յիսուս մեզ իրեն գալու ու փրկուելու կը
հրաւիրէ, մենք ան ատենը ի՞նչ ընել կը սկսինք :

Պ. « Եւստիցիոս ալ ետ քաշուելու կը սկսինք : » ԴՂ. 16-20 :

▲. Սենք երբեմն շեշտը բարկանար անոնց՝ որ մեզ կը
յանդիմանեն մեր մեղքերուն համար և կը ստիպեն որ մեր
մեղքերը մէկ դէ ձգենք ու Մատուծոյ ծառայենք :

Պ. ▲րամերես :

Եշխարհը ձեզ շնորհ տալու, բայց դեռ կ'ատէ, ինչու
որ ես անոր վրայով կը վայելմ' թէ իր գործքերը չար են :
Յօհ. Է. 7 : Բայց հիմա կը փնտռէք սպաննել զեւ,
անսնկ մարդ մը՝ որ ձեզի ճշմարտութիւն խօսեցայ, որն որ
Մատուծմէ ընցի. Երբահամ' աս բանը չըբաւ : Յօհ.
Ը. 40 :

▲. Ուրեմն ի՞նչ տեսակ սիրտերու կը կարօտինք :

Պ. Կոր սիրտերու :

Ո՞վ Մատուած, իմ մէջ մարդը սիրտ ստեղծէ, և իմ
ներսիւրիս ուղիղ հոգի նորոգէ : Սաղմ. ծն. 10 :

▲. Սենք ինքնիրեննուս կրնանք մեզի նոր սիրտ նո-
րոգել :

Պ. Չէ՛ ամենեւին :

Բայց որոնք որ զենքը ընդունելին, անոնց իշխանու-
թիւն տուաւ Մատուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հա-
ւատան իր անուանը, որ անոնք ոչ արխնէ և ոչ մարմնի
կամքէ՝ ոչ ալ մարդու կամքէ, հապա Մատուծմէ ծնան :
Յօհ. ան. 12, 13 : Իսկ ընչաւոր մարդը Մատուծոյ ▲ո-
գիին բաները չընդունիր. ինչու որ անոնք իրեն յիմարու-
թիւն են, ու շնորհ ար ալ գիտնալ, ինչու որ հոգեւոր
կերպով կը քննուին : ան. Կորնթ. Է. 14 :

▲. Յիսուս ի՞նչ կ'ըսէ ասոր վրայով :

Պ. « Կուր չէք ուզեր ինձի գալ, որ կեանք ունե-
նաք » : Յօհ. Է. 40 :

▲. Ի՞նչ է կ'ըսէ մարդոց դատապարտութիւնը :

Պ. « Եւ աս է դատապարտութիւնը՝ որ լոյսը աչ-
խարհ կեաւ, ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին.
ինչու որ իրենց գործքերը չար էին : Վասն զի ամէն ո՞վ
որ չար կը գործէ, անիկայ լոյսը կ'ատէ, և լոյսին քովը
չգար՝ որ իր գործքերը չյանդիմանուին : Յօհ. Գ. 19, 20 :

▲. Սարդիկ կամ հրեշտակները կրնան փոխել մեր
սիրտերը բուն իրենց զօրութիւնովը :

Պ. Չէ՛ : ան. Կորնթ. Գ. 5-7 :

▲. Ուրեմն որ՞ով կը փոխուին մեր սիրտերը :

Պ. Սիայն Սուրբ ▲ոգիով : Յօհ. Գ. 3-8 :

▲. Ի՞նչ կ'ըսէ մեր Պրիկիւն ասոր վրայով :

Պ. « Սէկը շնորհ տալու, թէ որ զեւ խրկող
▲այրը չքաշէ » : Յօհ. Գ. 44, 45 :

▲. ▲այրը մեզ ի՞նչպէս դէպ'ի՛ Վրիստոս կը քաշէ :

Պ. Սուրբ ▲ոգիով :

▲. Ուրեմն ի՞նչ պիտի ըլլանք թէ որ Մատուած մեր
սիրտերը փոխելու ու մեզ դէպ'ի՛ Վրիստոս քաշելու համար
Սուրբ ▲ոգին չնրկէ :

Պ. Պիտի կորսուինք յաւիտեան :

▲. Երբոր բանտապետին նոր սիրտ տրուեցաւ ու դէպ'ի՛
Վրիստոս քաշուեցաւ, ի՞նչ ըսաւ իր կորսուած մեղաւոր
մը ըլլալը զգալէն ետքը :

Պ. « Ի՞նչի ի՞նչ պէտք է ընել որ փրկուիմ » : Գործ.
Ժ. 30 :

▲. Ո՞վ ազդեց բանտապետին թէ Մատուած բար-
կացեր էր իրեն, և թէ ինքը կորսուած մեղաւոր մըն էր :

Պ. Սուրբ ▲ոգին :

Եւ ինքը երբ որ գայ՝ աշխարհը պիտի յանդիմանէ մեղքի համար, և արդարութեան համար, ու դատաստանի համար: Մեղքի համար՝ որ ինձի չեն հաւատարմ. արդարութեան համար՝ որ ես իմ ՚ժօրս քով կ'երթամ, և ալ զիս չէք տեսներ. և դատաստանի համար՝ որ աս աշխարհիս իշխանը դատապարտուած է: Յօհ. Ժ. 9. 8-11:

Հ. Եւ Պօղոս ու Շիլա ի՞նչ ըսին բանտապետին:
 Պ. « Հաւատն Տէր Յիսուս Վրիստոսին, ու պիտի փրկուիս դուն՝ և քու տունը »:

Հ. Ո՞վ բանտապետին նոր սիրտ մը տուաւ ու զինքը Տէր Յիսուսի հաւատալու առաջնորդեց:

Պ. Սուրբ Հոգին:
 Հ. Եստուած իրմէն խնդրողներուն Սուրբ Հոգին կու տայ:

Պ. Հրամարես:
 Ուստի էթէ դուք՝ որ չար էք, ձեր զաւակներուն աղէկ ընձաներ տալ զիտէք, որչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որ իրմէ կը խնդրեն: Դ. Բ. Ժ. 13:

Ի՞նչպէս հիանալի է որ Եստուած « Բուն իր Որդին չենայեց, հապա մեր ամենուս համար մատնեց ». բայց տակաւին չենք երթար իրեն որ փրկուինք:

Ե. Բնա յայտնապէս կը տեսնենք մարդկային սրտին կատարեալ խորունկ կամակոր և անփոփոխ վատթարութիւնն ու չարութիւնը: Եսիկայ ամենեւին մէկ կերպով մը չփոխուիր, բայց միայն Եստուած կրնայ փոխել. քանզի թէ որ մէկը զգուշացընէ ու խրատէ մեզ, թէ որ վախցունէ մեզ Եստուծոյ սպառնալիքն ու մեզի տալու ամենջանքներն իմացունելով, ասոնց բոլորը անօգուտ են ու չեն կրնար փոխել սիրտը. և երբոր Եստուած խան-

դակաթ սիրով կը հրաւիրէ ու կը համոզէ մեզ, մենք ամենքս միաբանութեամբ կը սկսինք ետ քաշուիլ: Մէկը կ'ըսէ, « Իս շատ պզտիկ եմ »: Մէկաւր՝ « Իս ալ շատ ծեր եմ »: Երրորդը՝ « Իս գործ ունենալուս համար ժամանակ չունիմ »: Չորրորդը՝ « Իս տակաւին շատ ժամանակ ունիմ, երբոր ուզեմ կրնամ »: Հինգերորդը՝ « Իս տակաւին աշխարհը չփայտեցի, ետքը կ'ապաշխարեմ »: Եւ ասանկ ամէն մէկը հրաժարելու բան մը կը գտնէ մէկ զի ձգելով իր խիտ հարկաւոր գործը՝ այսինքն հոգիին փրկութիւնը: Ղեմարիան աս է որ մարդիկ բնականաբար սեր չունին առ Եստուած, ու իրենց սրտերուն մէջը կ'ըսեն Եստուծոյ, Վրիստոսի, Սուրբ Հոգիին, ու Եստուածաշունչին, « Մէկ զի՛ գայէք մեզմէ »: Ենոնք թշնամի են Եստուծոյ, լըյսը կ'ատեն ու չեն ուզեր անոր գալ:

Բ. Բձէ որ իրենց մնայ, մարդիկ բոլորովին պիտի կորսուին իրենց ապակիւնութեան մէջը:

Գ. Ենոնց սրտին փոփոխութիւնը Հոգին Սուրբ Եստուծոյ գործն է միայն. միայն ինքը՝ որ երկինքն ու երկիրը ստեղծեց, կրնայ մաքուր սիրտ մը ստեղծել մարդու սրտին մէջ (ւ) :

Դ. Փրկութիւնը բոլորովին ձրի շնորհք է. Եստուծոյ շնորհքն է որ իր Որդին մեզի համար մեռնելու կու տայ. Եստուծոյ շնորհքն է որ իր Սուրբ Հոգին մեր սիրտերը փոխելու համար կու տայ. և Եստուծոյ շնորհքն է որ իր Սուրբ Հոգին որու որ կնք ուզէ կու տայ: « Մէկը Վրիստոսի չկրնար գալ, թէ որ Հայրը անիկայ չքաշէ ». ու որուն որ Հայրը հաճի, անիկայ կը քաշէ. այնչափ որչափ որ կնք ընտրեց (բ) :

ւ. Վասն զի Եստուած՝ որ հրաման ըրաւ խաւարեն լըյս ծաղիւ, ինքը մեր սրտերուն մէջ ծաղեց՝ Եստուծոյ փառաց զիտութեան լըյսը տալու համար Յիսուս Վրիստոսի անձովը: Թ. Սորմէ. Դ. 6:

բ. Իր ուզելովը մեզ ծնաւ ճշմարտութեան խօսքովը՝ որ մենք իր ստեղծածներուն երախայրի մը ըլլանք: Յ. Գ. ւ. 18:

Լ . Թող մեղաւորները ծեր ու պատանի սորվին իրենց սիրտերուն չբժշկուելու գեշութիւնը : Ըստնք չեն կրնար ինքզինքնին աւելի աղէկ ընել , ոչ ալ ինքնիրեննուն կըրնան փոխել ինքզինքնին . անտնք ասանկ բան մը ընելու յոյս թող չունենան . և թող ինքզինքնին Յիսուս Վրիստոսով Մատուցոյ որդրմութեանը յանձնեն , ու աղօթեն Սուրբ Հոգին ընդունելու համար՝ որով կարենան նորոգուիլ ու փրկուիլ :

2 . Մենք պարտինք սրտի փոխտուութիւն ունենալ . աս սրտի փոխտուութիւնն ի՞նչ է , և ի՞նչպէս Սուրբ Հոգին իր դործը կը կատարէ ու Լրկինքին համար կը պատրաստէ մեզ :

Յօճ . Գ . 1-21 :

Հ . Փարիսեցիներէն , ու Հրէից իշխաններէն թվ եկա Յիսուսին դիչելով :

Պ . Նիկողոսմոս : Յօճ . Գ . 1-9 :

Հ . Յիսուս ի՞նչ ըսաւ անոր :

Պ . “ Դժմարիտ ճշմարիտ կ'ըսեմ՝ բեզի . թէ որ մէկ մարդ մը նորէն չծնանի , չկրնար Մատուցոյ թագաւորութիւնը տեսնել ” : Յօճ . Գ . 3 :

Հ . Ի՞նչ է ան բանը , որ առանց անոր մէկը Տէրը չպիտի տեսնէ :

Պ . Սրբութիւն : Եբք . ԺԷ . 14 :

Հ . Ուրեմն անկարելի՞ է մեզի Լըկինք երթալ առանց սրտի փոփոխութեան :

Պ . Ե, յո՛ , անկարելի է :

Հ . Երբոր մարդ մը Սուրբ Հոգիով նորոգուի , մեծ փոփոխութիւնն է :

Պ . Հրամարեւ . քանզի անով կը դառնայ ապաշխարելու , Յիսուսի հաւատալու , Մտուած սիրելու , և բարի կեանք մը վարելու :

Ըստնք աչքերը բանալու , փաւարէն՝ լըյոյի , ու Ստոտանոյի իշխանութենէն՝ Մատուցոյ դարձնելու , որ անտնք մեղաց թողութիւն առնեն , և սուրբերուն հետ մասնակից ըլլան՝ ինծի հաւատալով : Գործ . իմ . 18 : Ասան զի Մտուած՝ որ հրաման ըրաւ խաւարէն լըյոյ ծագել , ինքը մեր սրտերուն մէջ ծագեց՝ Մտուցոյ փառաց զիտութեան լըյոյ տալու համար Յիսուս Վրիստոսի անձով : Է Վորե՛լ . Գ . 6 :

Հ . Նորոգուած մարդը ի՞նչ տեսակ սիրտ ունի :

Պ . Նոր սիրտ :

Եւ ձեզի նոր սիրտ պիտի տամ՝ , ու ձեր ներսիդին նոր հոգի պիտի դնեմ , և ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ , ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ : Եղե՛լ . Եղ . 26 : Ժա՛ . 19 :

Հ . Ընդհանր ի՞նչ տեսակ արարած մ'ն է :

Պ . Նոր արարած :

Ուրեմն թէ որ մէկը Վրիստոսի մէջ է , անկէպ նոր ստեղծուած մ'ն է . հիները անցան , և ահա ամէն բան նոր եղաւ : Է Վորե՛լ . Ե . 17 : Ինչու որ Վրիստոս Յիսուսով ո՛չ թրփատութիւնը բան մ'ն է , ոչ ալ անթըլփատութիւնը , հապա նոր ստեղծուած ըլլալն է բանը : Գորդ . Գ . 15 : Եղե՛ր . Գ . 23 , 24 : Վոր . Գ . 10 :

Հ . Ըստանկ մէկը ի՞նչպէս ծնած կ'ըսուի Սուրբ Գրքին մէջը :

Պ . “ Նորէն ծնած ” . “ Հոգիէն ծնած ” . “ Մտուածմէ ծնած ” : Յօճ . ան . 13 : Գ . 1-9 : ան Պիտ . ան . 23 : ան Յօճ . Գ . 9 :

Հ . Հիմա անկէպ որ ի՞նչ որդին է :

Պ . Մատուծոյ որդին : Հոով . ք . 14-17 :

Հ . Խւ . Թւր պիտի ելլիս :
 Պ . Երկինք : Հոով . Ե . 1 , 2 :

Հ . Ի՞նչպէս կրնաս հասկընալ թէ մէկը Սուրբ Հոգիով իսկապէս նորոգուած է , թէ չէ :

Պ . Իր բռնած ճամբային , ու ամէն օրուան վարքէն :
 Մէկն ո՞վ որ Մատուծմէ ծնած է , մեղք չգործեր , ինչու որ անոր սերմը իր մէջը կը մնայ , ու չկրնար մեղք գործել , քանզի Մատուծմէ ծնած է : Մտով յայտնի են Մատուծոյ որդիքը ու սատանայի որդիքը : Ինչո՞հ . Գ . 9 , 10 : Մատթ . Է . 16-27 :

Հ . Կոր սիրտ ունենալէն առաջ ի՞նչպէս կեանք մը կը վարէր :

Պ . Չար կեանք :
 Երբ՝ մարմինն գործքերը յայտնի են , որ ասոնք են՝ շուտթիւն , պոռնկութիւն բարկութիւններ , հակառակութիւններ , երկպառակութիւններ , բաժանումներ , չար նայուածքներ , մարդասպանութիւններ , զինու վրէժիւններ , անառակութիւններ , ու ինչ որ ասոնց նման են : Պատթ . Ե . 19-21 :

Հ . Կոր սիրտ մը ունենալէն ետք ի՞նչպէս կեանք մը պիտի վարէ :

Պ . Բարի կեանք մը :
 Գոտք էք աշխարհի լոյսը . բաղադր մը՝ որ լինան վրայ կեցած է , չկրնար պահուիլ : Ու ճրագը շին վառեր և դներ դրուանի տակ , հասպա աշտանակի վրայ , և լոյս կու տայ բոլոր տանը մէջ եղողներուն : Անանկ թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջին , որ տեսնեն ձեր բարի գործքերը ու փառաւորեն ձեր Հայրը՝ որ երկինքն է : Մատթ . Ե . 14-16 : ԺԳ . 23 :

Հ . Երբոր Հոգին փոխէ մեր սիրտերը , ան ատենը

մեզ կատարելապէս սուրբ կրնե՞ք , անանկ որ մենք բնաւ մէյմըն ալ չմեղանչենք որչափ որ սպրկելու ըլլանք :

Պ . Չէ . հասպա միայն կը սկսի ան ատենը մեզ սուրբ ընելու :

Ինչու որ ամէնքս ալ շատ յանցանքներ կ'ընենք . թէ որ մէկը խօսքով յանցանք չընէ , անիկայ կատարեալ մարդ է , որ կարող է բոլոր մարմինն ալ սանձելու : Յո՞ւ . Գ . 2 : Թո՛ւ որ բսենք՝ թէ մենք մեղք մը չունինք , ինքզինքնիս կը խարենք , ու մեր մէջը ճշմարտութիւն չկայ : Ինչո՞հ . Ի . 8 : Ինչո՞հ . Ի . 24-27 : Աս մասին վասակ ըլլալով՝ թէ ան որ ձեր մէջը բարի գործ մը սկսեց , մինչև Յիսուս Բրիտանի օրը պիտի կատարէ : Փիլիք . Ի . 6 :

Հ . Ուրեմն Հոգին Բ՛նչ պէտք է որ մեզի ընէ :

Պ . Պէտք է որ մեզի հետ մնայ ու մեր մէջը իր շնորհ բարի գործը վնցունէ , մեզ բարեպաշտութեան մէջ յառաջացունէ քանի որ կ'ապրինք , և այնպէս մեզ կրկինքին համար պատրաստէ :

Երբ արդարներուն ճամբան՝ ճաղող լոյսին պէս է , որ երթալով կը լուսաւորուի , մինչև որ կատարեալ օր ըլլայ : Մատթ . Գ . 18 : Մատթ . ԺԳ . 31-33 : Հոով . ք . 11 : Ինչո՞հ . Գ . 16 :

Հ . Անանկ է նէ որքին փառք տալու ենք կրկինքին համար մեր պատրաստութեանը վրայով :

Պ . Սուրբ Հոգիին :

Անր Գրիկը կ'ըսէ . “ Թո՛ւ որ մէկ մարդ մը նորէն չծնանի՝ չկրնար Մատուծոյ թագաւորութիւնը տեսնել ” . “ Պէտք է ձեզի նորէն ծնանիլ ” :

Ա . Առանց սրտի փոփոխութեան մենք բնաւ կրկինք չենք կրնար մտնել : Մատուծմէ սրբութեան Մատուած է .

ուրեմն շարերը պիտի վաճառէ իր ներկայութենէն • Ընքը ճշմարտութեան ու արդարութեան Մտտուած է • ուրեմն պիտի պատժէ շարերը յաժողքին մէջ : Երկինքը սրբութեանն ու Մտտուածոյ Հետ հաղորդութեան տեղ է • ուրեմն հարկաւոր է սրբութիւնը ան ամենուն՝ որոնք որ Հոն պիտի երթան : Կնդաւորը չիբնար Մտտուածոյ Հետ հաղորդութիւն ունենալ, ոչ ալ սուրբերուն ու հրէշտակներուն Հետ • ու թէ որ Երկինքը գտնուելու ըլլայ, Հոն ուրախ և Հանգիստ պիտի չըլլայ, ինչու որ ան սուրբ տեղին համար սրտի պատրաստութիւն պիտի չունենայ • պիտի զգայ թէ Երկինքը բուն իր տեղը չէ : Ետտեղը առանց սրտի փոփոխութեան կ'ուզեն որ մեռնելնէն ետքը Երկինքը երթան, չէ թէ Երկինքը կը սիրեն ու անիկայ վայելելու յարմարութիւն ունին, հպա յժողքին ազատելու կը փափաքին : Բայց թէ որ Երկինքը մտնելու վճռուած ըլլային ալ, թշուառական պիտի ըլլային Հոն՝ իրենց մեղքով ու անհաւատութիւնով լեցուն Հին սրտերուն պատճառաւ :

Բ • Իձող աս աղէկ մտմտան անոնք որ տակաւին նորոգուած չեն • Թէ որ ասանկ վիճակի մը մէջ մնալով մեռնին, պիտի իջնեն անոնք բուն իրենց տեղը, այսինքն յժողքը :

Յիշեցէր որ եթէ աս աշխարհիս մէջ շնորհուրէք, բնաւ ամենեւին ալ նորոգուելու չէք : Յայտ • իբ • 11 : Իձող չէք գիտեր թէ երկնի աստու ապրելու էք թէ կարծ • ուրեմն իմաստուն եղիք ու շուտով սկսեցէք և ինքզինքնիդ անհող մի թողուք, մինչև որ ան մեծ ու երջանիկ փոփոխութիւնը ստանայ :

Գ • Ես փոփոխութիւնը ճշմարտապէս մեծ ու երջանիկ է : Բանգի մեղաւորին ունեցած խաւարը լըյտի կը փոխուի, անոր ատելութիւնը՝ սիրոյ, անոր մեղքը՝ սրբութեան : Եւ ինքը ստատանայէն հեռանալով կը մտնենայ Մտտուածոյ, յժողքին կը փրկուի՝ դէպի Երկինքը կ'առաջնորդուի : Եւ արդարեւ շատ երանելի է ան մեղաւորը, ինչու որ Մտտուածոյ որդին կ'ըլլայ անիկայ՝ Յիսուս Բրիտանոսի հաւատարմը :

Դ • Ես սրտի ճշմարիտ նորոգութեան նանը՝ վարքի

փոփոխութիւն մէջ է : Կոր սիրտը նոր վարքի մը կ'առաջնորդէ • մեղաւորը չէ թէ ինչ որ առաջ էր, անանկ կը մնայ, հպա նոր արարած մը կ'ըլլայ • մեղքին ու յիմարութեան ըլլոր Հին ճամբաները մէկ դի կը ձգէ, և անոնց տեղը կը ստանայ աղօթքը՝ որ զուրկութիւնը՝ հաւատքը՝ և սէրը ու սուրբ նազանդութիւնը՝ որ նոր բաներ են : Եւ անիկայ որչափ որ փորձութիւններ քաշելու ըլլայ, Մտտուածոյ Հոգիին օգնութիւնովը այնչափ աւելի աղէկ կերպով կը յառաջանայ • իր շաղկեն լըյտ քիւ քիւ աւելնալով պայծառ կը լուսափայլէ մինչև որ կատարեալ կ'ըլլայ կէս օրուան լուսին պէս, երբոր պիտի տեսնէ Մտտուած փառքով : Եւ ո՞վ որ աս կերպով չյառաջանար առաքինութեան ճամբուն մէջ՝ անոր նորոգութիւնը ճշմարիտ չէ :

Ե • Բրիտանոսները բնաւ մոռնալու չեն որ միայն Սուրբ Հոգիին շնորհքովը և օգնութեամբը կրնան յառաջանալ դէպի երկինք երթալու ճամբուն մէջ • նոյն շնորհքը տուող ու կարող Հոգին՝ որ բարի գործք կը սկսի յառաջ տանիլ մեր մէջը, պէտք է որ ինք յառաջ տանի ու կատարէ ան : Օգուշանանք ուրեմն Սուրբ Հոգիին դէմ հակառակելն ու զինքը վշտացունելն • քանզի թէ որ ինքը Հեռանայ մեզմէ, ամէն բան կ'ըլլայ մեզի խաւար և մեղք, թշուառութիւն ու մահ :

3 • Սուրբ Հոգին կը խօսի մեզի Մտտուածաշունչով :

Սողմ • ԺԹ • 1-14 :

- Հ • Ո՞ր գիրքին մէջ Սուրբ Հոգին կը խօսի մեզի :
- Պ • Սուրբ Մտտուածաշունչին մէջ :
- Հ • Գլխաւորապէս Սուրբ Հոգին ի՞նչ կ'ըսէ մեզի աս Գրքին մէջ :
- Պ • Գլխաւորապէս մեզի կը ծանուցանէ թէ մերք մեղաւոր ենք, և թէ Երկինքը ու դժոխք կայ, և թէ Բրիտ

տոս մեռաւ մեղ փրկելու համար, և թէ մեր պարտեք
նոր սիրտ ունենալ, թէ չէ՝ Երկինքը չնք կրնար մտնել :

Հ. Բնաւ կրնայի՞նք գիտնալ, աս մեծ ճշմարտութիւն-
ներուն մէկը, թէ որ Եստուածաշունչը չունենայինք :

Պ. Չէ :

Ընդդէմ ժամուն Յիսուս հոգիով ուրախացաւ ու ըսաւ .
Ընդհակառակ եմ քեզմէ, ով Հայր, Տէր երկին և եր-
կրի, որ աս բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն և
գիտուններէն, ու տղոյ յայտնեցիր . այո՛, ով Հայր,
ինչու որ քու առջիկ ասանկ հաճելի եղաւ : Վարդ. Ժ.
21 : Վասնզի որովհետեւ Եստուծոյ իմաստութեամբը աշ-
խարհ չճանչցաւ զԵստուած՝ էր իմաստութիւնովը, Ես-
տուած հաճեցաւ քարոզութեան յիմարութիւնովը հաւա-
տացիաները ապրեցունելու : Եւ Վարդ. Ժ. 21 :

Հ. Որքն խօսքն է Սուրբ Գիրքը. մարդոյ թէ Ես-
տուծոյ :

Պ. Եստուծոյ . « Ի՞նչը գիրքը Եստուծոյ չունչն է, և
օգտակար է սորվեցունելու, յանդիմանելու, և շտկելու,
ու արդարութեան խրատելու համար » : Թ. Տէմ. Գ. 16 :

Հ. Պօղոս Բրնչ կ'ըսէ Տիմոթէոսին՝ Սուրբ Գիրքին
վրայով :

Պ. « Եւս Եստուծոյ ինչ որ վեր Սուրբ Գիրքերը
գիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝
Վերադառնալ Յիսուսի վրայ եղած հաւատքովը » : Թ. Տէմ.
Գ. 15 :

Հ. Պետրոս Բրնչ կ'ըսէ Եստուածաշունչը գրողներուն
վրայով :

Պ. « Ինչու որ մարդարեւութիւն մը երբէք մարդոյ
կամբին պէս չտրուեցաւ . հապա Եստուծոյ սուրբ մար-
դիկը Սուրբ Հոգիէն շարժուած՝ խօսեցան » : Թ. Պետ.
Կ. 21 :

Հ. Ի՞նչ կերպով խօսեցան :

Պ. Սուրբ Հոգին ըսաւ անոնց ինչ գրեցին ու ինչ
խօսեցին, և միշտ անոնց հետ էր՝ անոնք սխալ ընելէն
պահելու համար :

Իս ալ Հօրը պիտի աղաչեմ, և ուրիշ Միեկեանքի
մը պիտի տայ ձեզի, որ յաւիտեան ձեզի հետ բնակի .
ճշմարտութեան Հոգին, որ աս աշխարհս անիկայ չկրնար
ընդունիլ . ինչու որ չտեսներ անիկայ, ու չճանչար ան-
իկայ . բայց դուք կը ճանչար անիկայ, ինչու որ ձեր
քովը կը բնակի, և ձեր հետը պիտի ըլլայ : Յօհ. ԺԳ.
16, 17 : Բայց Միեկեանքը Սուրբ Հոգին՝ որ Հայրը
իմ անունովս պիտի երկէ, անիկայ ձեզի բոլորը պիտի
սորվեցունէ, և ինչ որ ձեզի ըսի՝ միտքերնիդ պիտի բերէ :
Յօհ. ԺԳ. 26 :

Հ. Փրկուելու ուրիշ ճամբայ մը կայ ան ճամբայէն
զատ, որն որ Սուրբ Հոգին կ'իմանցունէ մեզը Եստու-
ածաշունչին մէջը :

Պ. Չէ :

Փրկելը չունեցէք . ինչու որ դուք անոնցմով կը սե-
պէք յաւիտեանական կեանքը ունենալ . և բուն անոնք են
որ ինձի համար կը վրայեն : Յօհ. Ե. 39 : Իս ուրիշ
մեկով մը փրկութիւն չկայ . ինչու որ անիկ 'ի զատ ուրիշ
անուն մը չկայ երկինքին տակը մարդոյ մէջ տրուած, որ
անով կարող ըլլանք փրկուելու : Գործ. Գ. 12 :

Հ. Եստուածաշունչը կարողալէն զատ Բրնչ ուրիշ
միջոց սահմանած է Եստուած, որ մարդիկ սորվին Սուրբ
Գիրքին վարդապետութիւնները և փրկութեան ճամ-
բան :

Պ. Եւստարանին քարոզութիւնը՝ որ յատուկ պատճառ
մըն է և Սուրբ Հոգիէն կանչուած մասնաւոր մարդոյ կը
յանձնուի :

Օգուշացէր ձեր անձերուն և բոլոր հօտին , որուն վրայ
 Հոգին Սուրբ ձեզ տեսուչ դրաւ՝ Մատուցոյ եկեղեցին
 հովուելու , որն որ իր արեւնովը ստացաւ : Գործ . Ի . 28 :
 Մատուցոյ հօտը որ ձեր մէջն է՝ արածեցէր , վերա-
 կացու ըլլալով չէ՛ թէ ակամայ՝ հապա կամաւ . չէ՛ թէ
 անարգ շահահնդրութեամբ , հապա յօժարութեամբ .
 չէ՛ թէ վիճակներուն վրայ տիրելով , հապա հօտին օրինակ
 ըլլալով . և Հովուապետին երեցած ատենը փառաց ան-
 թառամ պսակը պիտի ընդունէր : Խ Պէր . Ե . 2-4 :
 Խօսքը քարոզէ՛ . մտադրութեամբ հոգեւոր պարսպէ՛ ա-
 տնին ու ատենէ դուրս , յանդիմանէ՛ , սաստէ՛ , յորդո-
 ը՛ մա՛ն երկայնատուութիւնով ու վարդապետութիւնով :
 Բայց դուն ամէն բանի մէջ արթնն կեցիր , նեղութիւն-
 ներու համբերէ՛ , աւետարանիչ գործ գործէ՛ , բու պաշտօնդ
 կատարէ՛ : Բ Տե՛ . Ի . 2 , 5 : Եւ ինքը պատուիրեց մեզի՛
 որ ժողովուրդին քարոզենք ու վկայութիւն տանք , թէ՛
 անիկայ է Մատուցմէ սահմանուած՝ կենդանիներուն ու մե-
 ուններուն դատաւորը : Գործ . Ժ . 42 : Անք կը քարո-
 զենք խաչաւ Վրիտտոր Հրէաներուն գայթակղութիւն
 ու Յոյներուն յիմարութիւն . բայց անոնց՝ որ կանչուած
 են , թէ՛ Հրէաներուն ու թէ՛ Յոյներուն , Վրիտտոր՝
 Մատուցոյ զօրութիւնը , և Մատուցոյ խնաստութիւնը : Խ
 Արե՛ր . Խ . 23 , 24 :

Հ . Ուստի յատուկ քարոզչներէն զատ՝ հասարակ
 մարդիկ չի՞ն կրնար աւետարանը քարոզել իրենց խօսակ-
 ցութեանը մէջ :

Պ . Արնան քարոզել . քանզի հիմա պէտք է որ ամէն
 մարդ սորվեցունէ իր քաղաքացիին ու իր եղօրը՝ Տէրը
 ճանչնալու ճամբան : Եբ՞ր . Ը . 11 :
Ու տախտակներուն վրայ՝ առջի գրուածքին պէս՝ ան
տասը խօսքերը գրեց , որոնք Տէրը ձեզի լեռան վրայ կրա-
կին մէջէն խօսեցաւ ժողովքին օրը : Ի Օրէն . Ժ . 4 :

Հ . Ո՞վ էր ան Երևելի ու բարի մարդը որ ընդունեց
աս Տասը Պատուիրանքներն Մտուծոյ ձեռքէն :

Պ . Մովսէս :

Հ . Մտուած ի՞նչ բանի վրայ գրեց անոնք :

Պ . “ Երկու բարէ Տախտակներու վրայ ” : Եւջ Ը՞ .

18 :

Հ . Ըն Տախտակները ինչի՞ մէջ պահէ՞լ պատուիրեց
Մտուած Մովսէսին :

Պ . Տապանակի այսինքն Սնտուկի մէջ : Եւջ ին .

10-22 :

Հ . Տէրը ի՞ր ժողովուրդին տուաւ աս Պատուիրանք-

ները, որ իրենց ու մեզի՝ և ամեն մարդոց համար պահակն ։

Պ . Հրեաներուն ։

Հ . Երբոր Մատուած՝ աս Պատուիրանքները գրեց ու Մովսէսին տուաւ, Ինքը լեռան վրայ որ իջաւ, Ի՞նչ էր ան լեռանն անունը ։

Պ . Սինայ ։ Եւնց ժԺ . 9-20 ։

Հ . Հրեկոց ժողովուրդը ճ՛ւր կայնեցաւ ։

Պ . Լեռանը տակը ։ Եւնց ժԺ . 17 ։

Հ . Երբոր Տէրը Սինայ լեռանը դազաթն իջաւ՝ ի՞նչ էր ան ։

Պ . “ Որտումներ ու կայծակներ կ’ըլլային, թանձր ամպ մը կար լեռանը վրայ, ու խիստ սաստիկ փողե ձայն մը . լեռը բոլորովին կը միտար, ու անոր մո՛ւտը ձոցի մո՛ւտի պէս կ’ելլէր, և բոլոր լեռը սաստիկ կը դողար ։ Եւնց ժԺ . 16, 18 ։ Ի՛ . 18 ։

Հ . Երբոր Մովսէս տեսաւ աս սոսկալի տեսարանը՝ ի՞նչ ըսաւ ։

Պ . Ըսաւ թէ՛ . “ Սաստիկ կը վախնամ ու կը դողամ ” ։ Եւնց . ժբ . 21 ։

Հ . Եւ ժողովուրդը ճ՛ւր գնաց ։

Պ . Ենոնք հեռու տեղ մը գացին կայնեցան ։

Հ . Մովսէս դէպի թանձր խաւարին մէջը գնաց, ուր որ Մատուած էր ։

Պ . Հրամարես ։ Եւնց Ի՛ . 21 ։

Հ . Ո՛րչափ ատեն լեռը սպասեց որ Տէրոջնէն Տասը Պատուիրանքները և ուրիշ պատուէրներ ընդունի ։

Պ . “ Վառաուն օր ու քառաուն գիշեր ” ։ Եւնց ԻԻ՛ . 18 ։

Հ . Մյուսափ ատենին մէջ ընաւ բան մը կերաւ կամ խմեց ։

Պ . Չէ . Ի՛ Օրէն . Թ՛ . 6 ։

Հ . Ո՞րք ողջ առողջ պահեց անիկայ ։

Պ . Մատուած ։

Պրուած է թէ՛, ոչ միայն հացով կ’ապրէ մարդ, հապա ան ամեն խօսքով՝ որ Մատուածոյ բերնէն կ’ելլէ ։ Ի՛ Օրէն . Ի՛ . 3 ։ Մարդ . Դ՛ . 4 ։

Հ . Երբոր անիկայ լեռնէն վար իջաւ, Ի՞նչպէս էր իր երեսը ։

Պ . Կը լուսափայլէր ։ Եւնց ԼԳ՛ . 29-35 ։

Հ . Մովսէս ի՞նչ կը ձգէր իր երեսին վրայ ան լըյսին պատճառովը ։

Պ . Նշածկոց մը ։ Ի՛ Սորէն . Դ՛ . 13 ։

Հ . Վրանի՞ տարի առաջ աս Պատուիրանքները Մովսէսին տրուեցան ։

Պ . Վրկէն թուականէն հազար հինգ հարիւր տարիէ չափ առաջ ։

Մատուած իր ողորմութիւնովը չթողուց մեղ որ ինքիրեննիս քննելով սորվեմք մեր պարտաւորութիւնը . քանզի մարդս իր սոգխտութեանը և մեղքին մէջը՝ չընտար և չուզէր ընել աս բանը ։ Ուստի Մատուած մեզի յայտնեց իր կամքը տալով մեզի Տասը Պատուիրանքը որ շատ կարճ են, անանկ որ՝ մենք կարենանք դիւրութեամբ միտքերնիս բերել անոնք . և բոլորովին կատարեալ են . որ էթէ մենք զգուշութեամբ հետեմք և ուղղութեամբ հասկընանք անոնք՝ պիտի դիտնանք մեր բոլոր պարտաւորութիւնները թէ՛ Մատուածոյ և թէ՛ մարդոց վերաբերեալ ։

Մ . Ի՛ ոլոր աշխարհի Ստեղծիչը և Տէրը՝ Մատուած է ։ Ինքը գերազոյն իմասնութիւն ունի իր բոլոր իմաստուն արարածներուն վրայ ։ Ինքն է օրէնսդիրը, և մենք պարտաւոր ենք միշտ զինքը սիրելու և իրեն նազանդելու ։ Ի՛ . Իր Պատուիրանքները տուաւ ան երեկելի ու ահա-

գին կերպով, որ ամենքն ալ վախճան ու միտ դնեն և նազանդին անոնց :

Գ. Թե որ Օրենքը տալու համար՝ իր վար իջնելուն միայն տեսնելը և լսելը այսպիսի ահագին էր և ասանկ վախով լեցուց ժողովուրդը, ուրեմն ի՞նչ պիտի ըլլայ մեզի թէ որ ատ Օրենքը չպահենք, ու Վստուած իջնէ մեզ պատժելու :

Գ. Սարգոյս պարտաւորութեան միայն կատարեալ կանոնը՝ Վստուածոյ օրէնքն է : Երկրի վրայ եղած ամէն մարդ և ամէն ազգ՝ Վստուածոյ Օրէնքին կը կարօտին, որ գիտնան թէ որն է շիտակ և որն է սխալ : Իր Օրենքը սուրբ է՝ արդար ու ճշմարիտ . բռններ անիկայ մեր պարտաւորութեան կանոնին պէս և աղօթենք նորհար ընդունելու համար, որով կարենանք սիրել ու նազանդիլ աշար : Վշտարհիս վրայ ամենէն երեւելի ու փառաւոր մարդը անիկայ է, որ աւելի կը մտանայ կատարելապէս Օրենքին նազանդելու սրտով ու վարքով :

Բ. ՏԵՍԸ ՊԵՏՈՒԻԸՆԵՐԵՆԻՐՈՒՄԵՆ ՎԸՅ :

Մտաջին պատուիրանքը :

Գ թատ . ԺԷ . 1-40 :

Հ. Ո՞րն է Մտաջին Պատուիրանքը :

Պ. « Ի՞մ առջև ուրիշ աստուածներ չունենաս » :

Հ. Ի՞նչն է Վստուած կայ :

Պ. Կենդանի ու ճշմարիտ միայն մէկ Վստուած մը կայ :

Հ. Ի՞նչ է ըսել կ'ուզէ մեր Տէր Վստուածը, երբոր կ'ըսէ մեզի, որ « Ի՞մ առջև ուրիշ աստուածներ չունենաս » :

Պ. Ըսել կ'ուզէ որ մեզի Վստուած՝ զենքը ու միայն զենքը պիտի ընդունինք :

Հ. Օրենքը ի՞նչպէս սիրել կը պահանջէ մեզի :

Պ. « Ի՞նչու Տէր Վստուածդ՝ բոլոր սրտովդ, բոլոր հոգիովդ ու բոլոր զօրութիւնովդ սիրես » : Բ Օրէն . Կ . 4, 5 : Սարգ . ԻԲ . 35-38 :

Հ. Ի՞նչ է կ'ըսէ ասոր վրայով Սուրբ Գիրքը :

Պ. « Ի՞նչու Տէր Վստուածոյդ երկրպագութիւն ընես, ու միայն Մեծիկայ պաշտես » : Բ Օրէն . Կ . 13 : Սարգ . Կ . 10 :

Հ. Որ՞նչ յուսալու եմք :

Պ. « Ի՞նչու բոլոր սրտովդ Տէրոջը ապաւինէ » : Վստ . Կ . 5 : Սարգ . ԸԾ . 19 :

Հ. Գիցո՞ւք թէ մենք Վստուծմէ աւելի ինքզինքնիս սիրենք ու ինքզինքնուս ապաւինինք, կամ ուրիշ մարդու մը, կամ հարստութեան, կամ մարմնաւոր զուարճութեան կամ ինչ և իցէ բանի մը . աս պատուիրանքը չէ՞նք անարդէր :

Պ. Հըրմերես :

Իաւ է Տէրոջը յուսալ, քան թէ մարդոյ ապաւինիլ : Իաւ է Տէրոջը յուսալ, քան թէ իշխաններուն ապաւինիլ : Սարգ . ԾԺԷ . 8, 9 : Ես աշխարհիս մէջ հարուստ եղողներուն պատուէր տուր՝ որ չհպարտանան, և անստոյգ հարստութեան վրայ յոյսերնին չդնեն, հապա կենդանի Վստուածոյ վրայ՝ որ ամէն բանը մեզի առատօրէն կու տայ վայելելու : Խ ՏԷԺ . Կ . 17 : Տէրը այսպէս կ'ըսէ . Մեծեալ ըլլայ ան մարդը որ մարդու կ'ապաւինի, ու մարմինը իրեն բազուկ կ'ընէ, և իր սիրտը Տէրոջմէ կը խտտորի : Երէմ . ԺԷ . 5 :

Հ. Ի՞նչ է կ'ըսէ Իրիտասոս, Վստուածոյ ու մամնայի ծառայութիւն ընելու վրայով :

Պ. « Մարդ մը չընար երկու տէրոջ ծառայութիւն ընել . ինչու որ կամ մէկը պիտի ատէ և միւսը սիրէ,

կամ մէկը պիտի մեծարէ և միւրը արհամարհէ . չէք կրընար ծառայել Մատուծոյ ու մամնայի" : ՍՊԳԸ . Գ . 24 : Ժ . 27-39 :

▲ . ԼՐՆՆՆ կերպով ծառայութիւն ընելու է Մատուծոյ :

Պ . " Երդ թէ ուտէք թէ խմէք և թէ ի՛նչ զործ որ ընէք , ամէն բան Մատուծոյ փառքին համար ըրէք" : ԿՊԻԲԸ . Ժ . 31 : ԱՊԼ . Գ . 17 : ԿՊԵԳ . Գ . 11 :

▲ . Մատուծոյ ծառայութիւն ընելու վրայով ԼՐՆՆՆ հաստատուն միտք ունէր Հիսուս :

Պ . " Իայց ես ու իմ տունս Լճհովան պիտի պաշտենք" : ՀՅԻԿ . ԻԳԸ . 15 :

▲ . ԼՐՆՆՆ ըսաւ 'Իսաիիթ իր Սողոմոն որդւոյն՝ Տէրը խնդրելուն վրայով :

Պ . " Թ՛՛ն որ զանիկայ փնտուս , պիտի գտնես , և թէ որ զանիկայ թողուս , ան ալ քեզ յաւիտեան պիտի մերժէ" : ԿՊԻԿԳ . ԻԲ . 9 :

Մտայն Պատուիրանքը կ'իմացունէ մեզի՝ թէ միայն մէկ կենդանի ու ճշմարիտ Մատուած կայ . և կը պահանջէ մեզմէ՝ որ զինքը ճաննանք , և միայն զինքը մեզէ Մատուած ընդունինք : Ես պատուիրանքին կը կատուի բոլոր մեկաւներուն հաստատութիւնը :

Ե . Մեր համար աս պատուիրանքը կը պահանջէ մեզմէ զխնալ թէ ի՛նչ և ո՞վ է Մատուած , և ի՛նչ ըրաւ մեզի համար : Ես գիտութիւնը մենք յատկապէս Սուրբ Գիորքին կը ստանանք . նաև կը պահանջէ մեզմէ զինքը սիրել բոլոր սրտով և մտքով և զօրութիւնով , և նազանդիլ իրեն խօսքով ալ ու զործքով ալ , առանց կեղծաւորութեան կամ ամբնալու , ամէն բանի մէջ , ամէն տեղ , և ամէն ժամանակ , և ամէն պարագաներու մէջ : ՍՆՆՊ պարտինք զինքը ընտրել մեզի՝ և մեր տանը համար Մատուած , ինչպէս որ Հիսուս ըրաւ : ՍՆՆՊ զխաւոր երջան-

կութիւնը իրեն երկրպագութեան և իր պաշտօնին մէջ պարտինք գտնել : Մատուած պիտի ըլլայ մեզի մեր ամէնը , և մեր հոգիներուն բաժինը հիմա՝ և յաւիտեան յաւիտենից :

Ի . Ես Պատուիրանքը չէն պահէր նախ անոնք՝ որ կ'ընէն թէ Մատուած չկայ : Երկրորդ՝ որ անհոգ և ու Մատուծոյ վրայով չէն ուզեր տեղեկանալ : Երրորդ՝ որ կը ճաննան Մատուած , բայց չէն սիրեր զինքը , ոչ ալ իրեն Մատուծոյ պէս կը ծառայեն : Ես կերպով է որ քրիստոնէից մէջը շատ մարդիկ թէ՛ ծեր՝ ու թէ՛ պատանի՝ կ'անարգեն աս Պատուիրանքը և ինքզինքնին յաւիտեանքան բարկութեան տակը կը ձգեն : Չորրորդ՝ որ ուրիշ Մատուած մը իրենց կը ձեռնարկէ թէ՛ հեթանոսներուն պէս կուրք մը չենելով , և թէ՛ իրենց մտքին մէջը անանկ զաղափար ունենալով Մատուծոյ վրայ՝ որն որ Սուրբ Գիորքը չարքեցուններ : Հինգերորդ՝ որ հրեշտակներուն , սուրբերուն կամ զեկերուն կ'ապաւինին ու կ'արջոթեն : Սեցերորդ՝ մահկանացու մարդիկներուն , ինչպէս մոզերուն՝ կախարդներուն՝ երազ մեկնողներուն ու բազմ նայողներուն կը հաւատան ու կ'ապաւինին՝ Մատուծոյ գիտութիւնը և զօրութիւնը ունեցողներու պէս . և կ'երթան անոնց՝ որ զարուսները իրենց իմացունեն , կամ զեղատուութիւն ընեն իրենց՝ չարի կամ բարիի համար , և ուրիշ ասոր նման բաներ : Եւ վերջապէս՝ որ կը սիրեն ի՛նչ և եղէ բան մը , և կը ծառայեն ո՞ր և եղէ բանի մը Մատուածէ աւելի : Եւ ի՛նչ ի՛նչ . 18 : ' ԼԿԳ . Ի . 27 : ԿՊԻԿԳ . ԻԲ . 9 :

Պ . Թող ամէն մեկերնիս իր սիրտը քննէ ու հարցունէ թէ՛ Լճհովայ ճշմարիտ Մատուածէ ի՞ զատ ուրիշ Մատուածներ ունի՞ . իր բոլոր սրտով , մտքով և զօրութիւնով անիկայ կը սիրէ՞ . ճշմարտապէս կը փախարթո՞ւ ու ժրութեամբ կ'աշխատի՞ անոր փառքին համար ապրելու և անիկայ վայելելու՝ թէ՛ աս աշխարհիս մէջ և թէ՛ հանդերձալին : ԿՊԻԿԳ . ԺԵ . 2 :

Երկրորդ պատուիրանքը :

Վանկէլ . Գ . 1-30 :

Ս . Ո՛րն է Երկրորդ Պատուիրանքը :

Պ . «Պահ զեղէ իւրստ զէնէն, ո՛չ ալ վերը երբէնքի մէջ՝ իմ վարը երբնի վրայ՝ իմ երբնի արմի՛ն ընդերուն մէջ եղած բաներուն մէջ նմանութեանը : Ենոնց երբբարութեան զնէն, ու զանոնք չարութեան . Ինչո՞ւ որ ես տուա՛մ Տէր Աստուծո՞ր՝ նախանշող Մարտիո՞ք է՛ք որ ի իմ արարչութեան հայրերեան անորէնութեանը որբուսը վրայ՝ միշտ անոնց երբորդ ու չորբորդ ազգը՝ որ ի՛սարեան զեւ . Եւ ի՛ողորմէ՛ն անոնց միշտ հաղորդ ազգը՝ որ ի իմ երբնի զեւ ու ի՛ս պարտութեանն իմ պահէն :

Ս . Ի՛նչաւ մէկը Մատուած տեսանձ է :

Պ . Չէ՛ :

Եւ Տէրը կրակին մէջէն ձեզի խօսեցաւ . դուք անոր խօսքերուն ձայնը լսեցիք . ու նմանութիւն մը չտեսաք բայց միայն ձայն լսեցիք : Ուրեմն ձեր հոգիներուն ազնի գոռուութիւն ըրէք . որովհետեւ ան օրը որ Տէրը Քրիստոսը լեռը կրակին մէջէն ձեզի խօսեցաւ, բնաւ նմանութիւն մը չտեսաք : Ի՛ Երբնի . Գ . 12, 15 : Ա՛նկը երբէք զՄատուած տեսած չէ՛, բայց միածին Որդին՝ որ յօրը ծոցն է, անկէպ պատմեց : Յօ՛ւ . ան . 18 :

Ս . Ուրեմն կրնանք գիտնալ թէ՛ Մատուած ի՛նչ կերպարանք ունի, կամ կրնանք փայտէն՝ բարէն՝ սուկիէն և արծաթէն բան մը շինել իրեն նմանութեամբը :

Պ . Չէ՛ :

Ուստի՛ որովհետեւ Մատուծոյ ցեղէն ենք՝ պէտք չէ որ անանկ սեպներ թէ՛ Մատուածութիւնը նման ըլլայ սուկի կամ արծաթի կամ բարի, որ մարդու վարպետութիւն

նոյն ու խելքովը քանդակուած է : Պորթ . ԺԷ . 29 : Եւսայ . Ի՛ն . 1-31 :

Ս . Ուրեմն աս Պատուիրանքով Մատուած ի՛նչ կ'արգիլէ :

Պ . Ի՛նչըրովմն մեղ կ'արգիլէ բան մը շինելէն Մատուծոյ նմանութիւնով :

Ս . Եւ անկէց զատ ի՛նչ բան կ'արգիլէ Մատուած երկրորդ Պատուիրանքին մէջ :

Պ . Ա՛րարգիլէ երկինքին՝ կամ երկրի՛ և կամ ջուրի մէջ եղած արարածներուն մէկին նման բան շինելը, ու անոր առջին երկրպագութիւն ընելը՝ Մատուծոյ երկրպագութիւն ընելու պէս :

Ս . Ուստի պատկերներուն ու արձաններուն երկրպագութիւն ընելը՝ աս Պատուիրանքը կ'արգիլէ՞ :

Պ . Հրամարես, անշուշտ կ'արգիլէ :

Ս . Ես Պատուիրանքն արդեօք մեզի չ'սորվեցընք որ մենք Մատուծոյ երկրպագութիւն ընելու ենք, պարզ՝ անզարդ ու հոգեւոր կերպով մը, ինչպէս որ կը վայելէ Հոգիի մը՝ որ մենք չենք տեսներ, և միայն աս գիտնք որ մեծ ու բարի է, ու ամէն տեղ ներկայ է :

Պ . Հրամարես, և միայն անանկ մէկ երկրպագութիւն մը կը վայելէ մեզի որ ընենք Մատուծոյ՝ ու անոր ալ կը վայելէ որ ընդունի մեզմէ :

Ս . Ի՛նչ կը կոչուին ան մարդիկը՝ որ ճշմարիտ Մատուածը չեն ճանչնար, ու երկինք՝ երկրի՛ կամ ջուրին մէջ եղած բաներուն նմանութիւնը կը շինեն, ու անոնց երկրպագութիւն կ'ընեն և կը ծառայեն իրենց Մատուածներուն պէս :

Պ . Եսոնք չ'եթանոս կ'ըսուին : Հրամ . ան . 21-32 :

Ս . Եւ ինչպէ՛ս մէջ շատ հեթանոս ազգեր կ'ան :

Պ . Եւո՛, անոնց թիւը կը հասնի մինչև վեց հարիւր միլիոնի :

Հ . Սուրբ Գիորգը ԲՅՆչ անուն կու տայ՝ անոնց փայտեղէն ու քարեղէն չաստուածներուն :

Պ . Կուռք կ'անուանէ :

Հ . Եւ կուռքերուն պաշտօն մատուցանողին ԲՅՆչ անուն կու տայ :

Պ . Կուպաշտ :

Հ . Կուպաշտները կրնան Երկինք երթալ :

Պ . Չէ :

Չէ՞ք գիտեր որ , . . . ոչ կուպաշտները՝ ոչ շնացողները, ոչ իգացեալները՝ ոչ արուագէտները՝ ոչ գողերը՝ ոչ ազա՛նները՝ ոչ գինովները՝ ոչ նախատողները՝ ու ոչ յափշտակողները՝ Մատուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն : Ի՛նչ որ Եւրոպայի 9-10 : Բայց վախկոտներուն ու անհասարակներուն՝ պիտի չտրուի ու մարդասպաններուն ու պրոնիկներուն և կախարչներուն ու կուպաշտներուն՝ և բոլոր ստախոսներուն բաժինը կրակով ու ծծումբով վառած լեծին մէջը սչնոր ըլլայ որ է երկրորդ մահը : Հայտ . Իք . 8 :

Հ . Թե՛ որ մարդիկ աս Պատուիրանքը չպահեն , Մատուած որքո՛ն վրայ պիտի հասուցանէ իրեն անօրէնութիւնը :

Պ . Իրենց վրայ և իրենց որդւոցը վրայ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը :

Հ . Եւ ԲՅՆչ պիտի ցուցնէ Մատուած անոնց մինչև հազար ազգը , որ զինքը կը սիրեն և իր պատուիրանքները կը պահեն :

Պ . “ Ողորմութիւն ” :

Հ . Ես պատուիրանքին մէջ Տէրը ԲՅՆչ ըսել կ'ուզէ ,

Երբոր կ'ըսէ թէ՛ “ Ես քու Տէր Մատուածդ նախանձող Մատուած եմ ” :

Պ . Են ըսել կ'ուզէ որ ինքը պիտի չթողու մեզ որ իրմէն զատ ուրիշ Մատուած մը ունենանք :

Ես Երկրայ եմ . իմ անունս աս է . ու իմ փառքս ուրիշն չեմ տար , ոչ ալ իմ պատիւս կուռքերուն : Եւայտ . Խթ . 8 : Խք . 11 :

Մ . Ես պատուիրանքը կը սորվեցունէ մեզի թէ ո՞նչ է Մատուծոյ մեր ընելու ճշմարիտ երկրպագութիւնը , և ԲՅՆչ ձեռով կ'ըլլայ աս երկրպագութիւնը : Մենք երկրպագութիւն ընելու եւր Մատուծոյ անկեղծութեամբ , յարգութեամբ և խոնարհութեամբ իրբև Հոգիի մը՝ որ մեր մարմնաւոր աչքին անտեսանելի է . բայց մեծ ու բարի է և ամէն տեղ ներկայ է :

Բ . Մենք կ'անարդէնք աս պատուիրանքը նախ երբոր Մատուծոյ նմանութիւնը կը ձեւացնենք , կամ աներևոյթ կերպով մեր երեւկայութեանը մէջ , և կամ արտաքին կերպով ձեռագործ բաներու մէջ : Երբորդ՝ երբոր կը շնենք վերը երկինքին մէջ , կամ վարը երկրի մէջ , կամ երկրի տակը ջուրի մէջ եղող ո՛ր և ինչ արարածի մը նմանութիւնը կամ պատկերը , կամ անոր երկրպագութիւն ընելու համար և կամ անոր միջոցով Մատուծոյ երկրպագութիւն ընելու : Մատուած Հոգի ըլլալով՝ անոր պաշտօնին նուիրուած շէնքերը պէտք է որ աս տեսակ բաներէն բոլորովն ազատ ըլլան : Եւ թէ՛ ներքի կողմը , և թէ՛ դուրսի կողմը՝ անոնց գեղեցկութիւնն ալ պէտք է որ պարզ ու անպարզ ըլլայ :

Պ . Սէրը և նազանդութիւնն իրարու հետ կապուած են . թէ՛ որ մենք Մատուած սիրենք , պիտի պահենք իր պատուիրանքները (Ի) :

Ի . Թե՛ որ իս կը սիրէք՝ իմ՝ պատուիրանքներս պա-

Պ. Եննք կ'ատեն Մատուած՝ որ կուռքերու երկրպաշտութիւն կ'ընեն, և ճշմարիտ Մատուածը ճանչալ չուզելով, սուտ աստուածներ կը շինեն իրենց: Արտի գէշութիւնը կուսպաշտութեան մայրն է: Տես չորով. ան. Գլուխը:

Ե. Սէր միլիոնաւոր ընկերներուն վիճակը, որոնք որ հեթանոս և կուսպաշտ են՝ խիստ սաստիկ ու որջալի վիճակ է: Եննք թաղուած են իրենց տղիտուութեանը և մեղքին մէջ, ամենայցած և զգուշի մեղքերուն մէջը թաթխուած են: Եննց կուստունները չարութեան տաճարներ են: Եննք տառապանքներու և թշուառութեան տակ են, ու սասնկ ապականեալ և մեկմեկ ապականող պիտի ապրին մինչև աշխարհիս վերջը՝ թէ որ Մատուածաշունչը՝ փրկութեան Եւետարանը անոնց չխրկուի: Երանի՛ թէ Մատուած հաճէր կանչել մեզմէ մէկ քանիները՝ որ Եւետարանը տանէինք անոնց: Բայց թէ որ աս արտօնութիւնը մեզի չտրուի՝ պէտք է որ գոնէ ամեն միջոցները գործածենք՝ մեր օգնութիւնովը Եւետարանն անոնց խրկելու համար. յատկապէս աղօթելով՝ որ Մատուած կամենայ ճամբան բանալ և յոռաջ տանիլ իր ճշմարտութիւնը՝ մինչև որ բոլոր երկիրը լցուի իր գիտութիւնովը: Յարգենք Մատուածաշունչը մեծ յարգութիւնով, ուսկից կ'ընդունինք ան մտիթարութիւնը և խաղաղութիւնը՝ որն որ հիմն կը վայելենք, ու նաև ան զալու երջանկութիւնը որուն կը յուսանք: Եւ առատօրէն երախտագիտութիւն ու շնորհակալութիւն տանք Մատուծոյ՝ որ ինքը իր գերազոյն ողորմութիւնովը անրոցմէ աւելի լաւ վիճակի մէջ հաստատեց մեզ:

Օ. Մատուած՝ նախանձոտ Մատուած մըն է. Ինք իր պատիւն ու փառքը կուռքերուն շտար. Ինքը պիտի պատժէ անոնք՝ որ ասանկ ունայնութիւնները կը պաշտեն, ու նաև իրենց անօրէնութիւնը որդիներուն պիտի հատուցանէ մինչև անոնց իրեր և շորս ազգը. բայց ողորմութիւն

հեղէք: Հօճ. ժ. 15: Պար իմ՝ բարեկամներս էք, թէ որ ընկու. բլլար ինչ որ ևս ձեզի կը պատուիրեմ: Հօճ. ժ. 14:

պիտի ցուցնէ անոնց հազար ազգին՝ որոնք որ զէնքը կը սիրեն և իր ճատուիրանքները կը պահեն:

Երրորդ Պատուիրանքը:

Ղ. 11-18:

Ս. Ո՞րն է Երրորդ Պատուիրանքը:

Պ. «Տերոջէ ինչ Եստուծոյ տնայնագործ պարսպ րիւք բերանդ արտնէ. Ինչ որ Տերը իր տնայնագործ պարսպ րիւք բերան տնայնագործ պարսպ րիւք չտեղէ:

Ս. Ի՞նչպէս պարտինք գործածել Մատուծոյ անունը:

Պ. Ենկեղծ ու խոնարհ սրտով և միշտ պատուելով:

Ս. Ի՞նչ կը նշանակէ «Մատուծոյ անունը պարսպ տեղը բերան տնայնագործ»:

Պ. Կը նշանակէ Մատուծոյ անունը սուտ՝ անարդ՝ կամ թեթեւ կերպով մը գործածել:

Ս. Երբոր մենք երդում կ'ընենք, չէ՞ որ Մատուած վկայ կը կուենք մեր խօսքին ճշմարիտ բլլալը հաստատելու համար:

Պ. չբամերես:

Ս. Ուրեմն երբոր մեր բսածին սուտ բլլալը գիտնանք՝ ու ան իրացունելու համար վկայ կուենք Մատուած, աս պատուիրանքը չէ՞նք անարդեր:

Պ. չբամերես, ստակալի կերպով մը կ'անարդենք: Ղ. 11. 3:

Ս. Ես պատուիրանքը ի՞նչ կ'արդիլէ:

Պ. Կ'արդիլէ անիծելը և դուր տեղը երդում ընելը, և կեղծաւորեալ թեթեւ ու շնչին կերպով Մատուծոյ անունը գործածելը: Բ. Օրէն. ի. 58. Ս. Կար. Ե. 34-37:

Հ. ԻՇնչ կը նշանակէ Վստուծոյ « անմեղ չտեղիւր
անիկայ , որ իր անունը պարսպ տեղը բերանը կ'առնէ » :

Պ. Արճնանակէ թէ Վստուած անիկայ պիտի պատժէ :

Ղ. Կ. Ի. 16 :

Ես պատուիրանքը կը սորվեցունէ մեզի թէ ինչպէս գործածելու ենք Վստուծոյ մեծ ու բարի անունը :

Ե. Մենք Վստուծոյ վրայ խորհելու ու խօսելու , և աղօթելու ենք իրեն , անկեղծ՝ խոնարհ ու յարգական մտով : յիշելով միշտ թէ ինչպէս անչափ՝ սուրբ ու բարձրացել է Ինքը , և թէ մեզի պէս ասանկ նուսատ ու անարժան ստեղծուածներուն կը վայել որ վախնանք իր պատուական ու ահաւոր անունէն : Ի Օրէն . ի՞ն . 58 : Սուրբ . ի . 9 :

Բ. Մենք կ'անարգենք աս պատուիրանքը նախ՝ երբոր սուտ երդում կ'ընենք , երբոր մեր ստույթները իրաւցունելու համար Վստուած վրայ կը կոչենք . ասկէ աւելի մեծ նախադէպ չկրնար ըլլալ ճշմարտութեան Վստուծոյ դէմ : Կրկնորդ՝ երբոր Վստուծոյ անունը թեթեւ ու չնչին կերպով մը կը գործածենք մեր հասարակ խօսակցութեանը մէջ , զոր օրինակ՝ « Վա՛ջ Վստուած , Վստուծոյ յարմնի է , Վստուած վրայ , Վստուած գիտէ որ » , և այլն : Կրկնորդ՝ երբոր կ'անիծենք և երդում կ'ընենք ու կը հայհոյենք Վստուծոյ սուրբ անունովը , ինչպէս որ շարագործ հայհոյիչները կ'ընեն : Չորրորդ՝ երբոր երկրպագութիւն կ'ընենք Վստուծոյ՝ թեթեւ ու անհոգ կերպով մը , կամ կեղծաբովութեամբ :

Գ. Տէրը իր անունը պարսպ տեղը բերանն առնող անմեղ պիտի չտեղէ : Ինք՝ աս պատուիրանքին դէմ ամեն յանցանքները չմոռնար : Կրկնման հայհոյիչները՝ տակաւին իրենց հայհոյութիւնը չմնորոգած՝ Վստուած յանկարծ պատժեց անոնք՝ ու իսկոյն մեռան : Ըն մեծաշուք ու ահազին օրը հասնելու վրայ է , որ մենք հաշիւ պիտի տանք ամեն պարսպ խօսքերնուս համար :

Չորրորդ Պատուիրանքը :

Երայ . ծի . 13 , 14 :

Հ. ԻՇնչ է Չորրորդ Պատուիրանքը :

Պ. « Հանգստութեան օրը մարտ բեր՝ անիկայ սուրբ պաշտելու համար : Այն օր պիտի աւանդուի , ու բոլոր գործերն են . բայց եօթներորդ օրը՝ Տէրողը շուրջ Վստուծոյ հանգստութեան օրն է . ան օրը գործ չը պիտի չործես , ոչ գուն՝ ոչ շուրջեր՝ ոչ շուրջեր , ոչ շուրջեր , ու աղանձիտ՝ ոչ շուրջեր անտուտ՝ ոչ ալ քանի որ իրենց օրաբարձար . Գործ Տէրը վէց օրուան հըլ ըստ երկնէն ու երկրէ , ծովն ու բոլոր անոնց հըլ եղածները , և եօթներորդ օրը հանգստացաւ . անոր համար Տէրը օրհնեց հանգստութեան օրը ու սրբեց պահիկայ » :

Հ. ԻՇնչ նշանակել կ'ուզէ Վստուած , ըսելով թէ՛ մենք պարտինք Շարաթ օրը « սուրբ պահել » :

Պ. Ա՛ռե՛ղ ըսել որ մենք բոլոր ան օրը պարտինք Իրեն նուիրել սրբազան պաշտօններով : Երայ . ծի . 2 :

Հ. Շարաթը սուրբ պահելը արդեօք լով Հրեական օրէնք մը համարուելու է :

Պ. Ըմենելն է՛ . քանզի Վստուած ան օրէնքը Վրաց մին ալ տուաւ (Ծանոթ . ի . 2 , 3) և անոր համար չորրորդ պատուիրանքին մէջ Հրեականութեան օրը միաբեր բեր » :

Հ. Ես բանիս համար ուրիշ վայելութիւն ունիմ :

Պ. Ես ալ ունիմ որ , Շարաթը պահելը թէ որ լով Հրեական արարողութիւն մը ըլլար , Վստուած պիտի չըրեր ան՝ բուն իր մատովը Տանաբանեաց Օրէնքին մէջ , ուր որ ուրիշ բան չկայ , բայց միայն բարոյական ընդհանուր և հոգևոր պատուիրանքներ : Ուստի աս Շարա-

Թուան օրէնքը որ աշխարհի սկիզբէն տրուեցաւ, պարտի
հաստատ մնալ մինչև աշխարհի վերջը :

Հ . Ուրեմն ինչ՞ու համար Շարաթ օրը շինք պահէր,
ու Աիրակի օրը կը պահէնք :

Պ . Ենոր համար որ մեր Տէրը Յիսուս՝ Աիրակի օրը
յարութիւն առաւ :

Հ . Ի՞նչ վկայութիւն ունինք աս փոփոխութեանս
իրաւունքով ըլլալուն համար :

Պ . Հետեւեալ վկայութիւնները ունինք : 'Մա՛հ' որ
Տէրն մեր Շարաթ օրը թաղուած մնալով՝ անգատիւ
ըրաւ անիկայ, և Աիրակի օրը յարութիւն առնելով պա-
տուեց ան օրը : Երկրորդ՝ որ Տէրն մեր իր յարութիւն
առնելէն ետքը երկու անգամ Աիրակի օր իր աշակերտնե-
րուն երեցաւ՝ երբոր աղօթելու համար մէկ տեղ հաւա-
քուած էին անոնք . բայց Շարաթ օր մը անոնց շերեցաւ :
Յօ՛ւ . ի . 19, 26 : Երրորդ՝ որ Տէրն մեր իր յարութե-
նէն ետքը՝ ճիշդ եօթներորդ շաբաթ օրը անցնելուն պէս՝
հետեւեալ օրը՝ որ Պենտեկոստէին կիրակի օրն էր՝ ան մեծ
խոստմունքը, պայխն իր Սուրբ Հոգին խրկեց իր աշա-
կերտներուն վրայ : 'Պոր՛ք . ան . 4, 5 : ք . 1, 33 :
Չորրորդ՝ որ Սուրբ Հոգով լցուած Մարեալները սկը-
սեցին Աիրակի օրը սուրբ պահել և աղօթելով անցունել,
ինչպէս որ ան սովորութիւնը կը մնայ մինչև աս օր քրիս-
տոսէից մէջ ալ : 'Պոր՛ք . ի . 76 : ան Սորբ . ժ . 2 :
Յայտ . ան . 10 :

Հ . Վանի՞ օր պիտի աշխատինք որ մեր բոլոր գործ-
քերն ընենք :

Պ . Այց օր պիտի աշխատինք, ու մէկ օր պիտի
հանգստանանք մեր բոլոր գործքերէն : Ելեց ժ . 25-30 :
լու . 12-17 : լե . 1-3 : Թուոց ժ . 32-36 : 'Կե՛տ' .
ժ . 31 : ժ . 15-22 : Երե՛տ . ժ . 21-27 :

Հ . Ուրեմն ամենեւին գործ մը չե՞նք կրնար տեսնել
ան օրը :

Պ . Արնանք տեսնել երկու տեսակ գործ . պայխնքն
անոնք՝ որ հարկաւոր են, և անոնք՝ որ ողորմութեան կը
վերաբերին : Սորբ . ժ . 1-13 : Սորբ . ժ . 4, 5 :
'Կե՛տ' . ժ . 10-17 : ժ . 1-6 : Յօ՛ւ . Ե . 1-14 :

Հ . Ուստի Սատուած որոշուած ան մէկ հանգստու-
թեան օրէն զատ, ուրիշ օր մը պարտական են քրիստո-
նեաները սուրբ պահելու :

Պ . Չէ՛ . քանզի Սատուոց հրամանն է որ վեց օր աշ-
խատինք ու մէկ օր հանգստանանք :

Իստոհր նորէն կը դառնար ան տկար ու չքաւոր աշխար-
հի սկզբունքներուն . որոնց նորէն կ'ուղեք ծառայութիւն
ընել : Օրերը կը գանազանէք, ու ամիսները, և ժամա-
նակները ու տարիները : Աը վախնամ ձեզմէ, որ գուցէ
պարագ սեղծ ձեր վրայ աշխատած ըլլամ : 'Վաղ . Դ . 9-11 :

Հ . Աիրակի օրը մեր օր շինք գործեր, ուրիշ մէկու
մը կրնանք գործել տալ :

Պ . Չէ՛, ոչ մեր տղան՝ ոչ մեր աղջիկը՝ ոչ մեր ծա-
ռան՝ ոչ մեր աղախինը՝ ոչ մեր անասունը և ոչ մեր քովը
եղած օտարականը աշխատեցունելու ենք :

Հ . Թե՛ որ անոնք գործել ուզեն, մեր ի՞նչ պիտի
ընենք :

Պ . Պիտի թող չտանք :

Հ . Յատուկ գործ գործելէն զատ, ի՞նչ ուրիշ բան
կայ արդիւուած՝ Աիրակի օրուան համար :

Պ . Երդիւուած է ինքզինքնս զուարճացունելը . զոր
օրինակ, ձի հեծնելով կամ որսի երթալով՝ կամ թուղթ-
խաղալով՝ կամ քնանալով՝ կամ ուտելով և խմելով՝
կամ իրարու հետ մարմնաւոր ու ոչինչ խօսակցութիւններ
ընելով :

Թո՛ւն որ շարաթը՛ իմ սուրբ օրս՝ քու ցանկութիւնդ կատարելէն ոտքդ դարձունես, ու շարաթը քո զուարճութիւնդ, և Տէրոջը նուիրուած օրը՝ պատուական աւնուանես, ու զանիկայ պատուես քու ճամբաներուդ չհետեւելով, քու ցանկութիւնդ չկատարելով, ու պարտոյ խօսք չխօսելով, ան ատենը Տէրոջմով պիտի ուրախանաս ու քեզ երկրիս բարձր տեղըւանքը պիտի հանեմ, ու քու հօրդ Յակոբին ժառանգութիւնը քեզ պիտի կերցունեմ, քանզի Տէրոջը բերանը խօսեցաւ ։ Լռոյ . Ժ . 13, 14 :

Ն . Ախրակի օրուան մեր պարտաւորութիւնն ի՛նչ է ։

Պ . Լուանձին աղօթք և մտածմունք ընելէն զատ՝ պարտինք մէկ տեղ հաւարուել Մտուծոյ երկրպագութիւն ընելու, աղօթելու, Սուրբ Գիրքը կարդալու ու Սուրբ Եւետարանին քարոզութիւնը մտիկ ընելու ։

Ու եկաւ Մարգարէթ, ուր որ ինքը մեծցած էր . և իր սովորութեանը պէս շարաթ օրը մտաւ ժողովարանը, ու ելաւ որ կարդայ ։ Եւ տուին անոր Լսայի մարգարէին գիրքը ։ Դո՛ւ . Գ . 16, 17 ։ Եւ ինչ ժողովարանն ըուն մեկուն մէջ շարաթ օրը կը սորվեցունէր ։ Դո՛ւ . Ժ . Ժ . 10 ։ Շարաթ օրը քաղաքին դուրս ելանք՝ դետեղերքին քով՝ ուր որ սովորութիւն ունին աղօթք ընելու . ու նստելով՝ ժողովուած կնիկներուն կը խօսենք ։ Գործ . Ժ . 43 ։ Եւ մէկշարթի որը երբոր ժողովուեր էինք հայր կարելու, Պօղոս անոնց կը քարոզէր, ինչու որ հետեւել օրը ճամբայ պիտի ելլէր . և խօսքը երկնցոց մինչև կէս գիշեր ։ Գործ . Ի . 7 ։ Ժ . 14 ։ Ժ . 2 ։ Ին Արտի . Ժ . 2 ։ Եբ . Ժ . 25 ։

Չորրորդ պատահիւրանքը կը սորվեցունէ մեզի թէ մեր ժամանակին ո՞ր մասը յատկապէս Մտուծոյ երկրպագութեանն ու իրեն ծառայութեանը նուիրելու ենք . այսինքն

է եօթը օրին մէկը, կամ թէ մեր ժամանակին եօթնըրոր մասը ։ շրէաները պահեցին եօթներորդ օրը աշխարհին ստեղծագործութեան սկիզբէն հաշուելով՝ որ աս օրը Մտուած հանգստացաւ իր գործէն ։ Իայց բրիտանացիներուն յատուկ բունած օրը շարաթին առջի օրն է . ինչու որ մեր Տէր Յիսուսը ան օրը յարութիւն առաւ ատենընրէն . և մեր փրկութեան գործը ընցոց, ու անկէ հանգստացաւ ։ Գործ . Ի . 7 ։ Ին Արտի . Ժ . 1, 2 ։ Յայտ . Ին . 10 ։

Ե . Են օրը սուրբ պահուելու է ։ Սենք հանգստանալու ենք մեր բոլոր գործերէն հարկաւոր եղած ու ողորմութեան վերաբերեալ գործերէն ՚ի զատ ։ Են օրը աղօթելու ենք, Մտուծոյ խօսքերը ու բարի գիրքերը կարդալու ենք . մեր սիրտն ու մեր վարքը քննելու ենք, բարեպաշտ խօսակցութիւն ունենալու ենք . Մտուծոյ մեծութիւնը և Յիսուս Վրիտանոսի ձեռքովն անոր մեզ ըրած բարեբարութիւնը՝ միտքերնիս բերելու ենք . երկինքին հանգստութեանն ու յաւիտենական օրջութեանը վրայով մտածելու ենք ։ Են օրը Մտուծոյ տունն երթալու ենք ու իր ժողովուրդին հետ մէկ տեղ իրեն երկրպագութիւն ընելու ենք ։ Մէկ խօսքով մեր բոլոր խորհուրդները՝ զգացումները՝ խօսքերը և գործերը իրեն նուիրելու ենք ։

Բ . Սենք աս պատուիրանքը կ'անարգենք նախ՝ երբոր հասարակ ու անպիտան գործ մը ընենք կիրակի օրը ։ Երբորդ՝ երբոր հեշտութիւններով՝ զատակցութիւնով և կամ մեղքով անցունենք ան օրը ։ Երբորդ՝ երբոր մեր խորհուրդները, խօսակցութիւնը, կարգաձանրը, քուստաններն ու մեր ընկերութիւնը աշխարհային ըլլան ։ Չորրորդ՝ երբոր զանց ընենք Մտուծոյ տունն երթալու . կամ երբոր հոն երթալով՝ անկեղծութեամբ և սրտի մտք Մտուծոյ շատուցենք, կամ կիրակին նեղութիւն մը ու բեռ մը սեպենք ։

Գ . Ախրակին չպահելը շատ հասարակ բան մըն է, բայց շատ մեծ մեղք ալ է ։ Են՝ որ կիրակին կ'անարգէ, կը զրկէ Մտուած իր յատուկ ստացուածքէն . ինչու որ ան օրը՝ Տէրոջը օրն է ։ Երբեք կը զրկէ նաև հոգեւոր օգուտներ քաղելէ՝ ան օրուան ընտիր պատահութիւններ

բէն . և իր օրինակին ազգու զօրութիւնով որչափ որ կըրնայ՝ Մատուածպաշտութիւնը երկրիս վրայէն կ'աբեք, կը խափանէ . քանզի կիրակին սուրբ պահելով՝ եկեղեցի երթալով՝ քարոզ մտիկ ընելով՝ աղօթք ընելով և բոլորովն հոգեոր բաներու վրայ մտնտալով՝ Երիտոնէական օրէնքը կը հաստատուի, ու նմանապէս ասոնց հակառակն ընելով՝ օրէնքը և Մատուածպաշտութիւնը կ'աբուրի :

Դ . Կիրակին՝ մարդոց սրտած Մտուածոյ ամենամեծ օրջութիւններուն մէկն է . եօթը օրերուն մէջն ամենէն աղէկ օրն է : Ընծը՝ որ կիրակին չպահելով հանդստութեան օր մը չունին ու միշտ կ'աշխատին, իրենց միտքերը և մարմինները շատ հոգնած՝ պիտի տկարանան . ինչպէս որ մեր ընտանի անասուններ, թէ որ միշտ ամէն օր գործքով նեղացունենք, ու թող չտանք անոնց որ կիրակի օրը հանգստանան, անշուշտ պիտի նհարանան ու իրենց ժամանակը չհասած՝ պիտի մեռնին : Կիրակիին հանգըստութիւնը հարկաւոր է մեզ զօրացունելու ու միսիթարելու համար, և թէ որ հաւատարմութեամբ պահենք անիկայ, Մատուծոյ օրջութիւնը մեր աշխատութիւններուն ու մեր գործքերուն վրայ կը բերէ :

Ե . Կիրակի օրը հարկաւոր է աշխարհիս մէջ ճշմարիտ կրօնքը պահպանելու . քանզի առանց անոր՝ մարդիկ պիտի մոռնային Մտուած՝ և անոր դիտութիւնը բոլորովն պիտի կրննցունենին : Ըն օրն է որ՝ մարդիկ պարտաւ ըլլալով՝ կ'երթան Բեւտարանին քարոզութիւնը մտիկ կ'ընեն, և ասանկ ճշմարտութիւնը սորվելով՝ կ'ապաշխարեն ու դարձի կու գան . ու աս ընթացքով կ'աճին Երիտոնէի շնորհքով՝ և պատրաստ կ'ըլլան երկրիս համար : Ընէ որ քրիստոնէայ ազգ մը կիրակիէն զրկուած ըլլար, չուտով պիտի դառնար, թշուառ ու չար հեթանոսներուն պէս պիտի ըլլար :

Օ . Կերականներ և շնորհակալ ըլլանք Մտուածոյ՝ հանդստութեան օրուան համար, և սուրբ պահենք ու աղէկ կերպով գործածենք անիկայ, և անանկ պատրաստուինք ան դալու յաւիտեական կիրակիին համար՝ որ յաւիտեան պիտի չվերջանայ :

— Ես չըրա Պատուիրանքները՝ որոնք որ հինա քննե-

ցինք մենք՝ Եռաջին Տախտակ ալ կը կրուին . ինտոր որ մէկալ վեցը՝ Երկրորդ Տախտակ կ'ըստին : Երկրորդ տախտակի պատուիրանքները մեզի կը սորվեցունեն մեր դէպի մարդիկ պարտաւորութիւնը . բայց առաջին տախտակինները՝ կը սորվեցունեն մեզի յատկապէս առ Մատուած եղած մեր պարտաւորութիւնը . այսինքն նախ թէ մենք մի միայն կենդանի և ճշմարիտ Մտուածը ճաննալու ու պաշտելու ենք, չայլը, և Սուրբ և Սուրբ Հոգին : Երկրորդ թէ մենք իրեն երկրպագութիւն ընելու ենք ան կերպով՝ ինչպէս որ կը վայել խիստ մեծ և փառաւորեալ ու բարի Հոգիի մը՝ որ թէպէտ մեղի անտեսանելի է, բայց ամեն տեղ ներկայ է : Երրորդ թէ մեր երկրպագութեան մէջը մեր իր վրայ ունեցած բոլոր խորհուրդներուն՝ զգացումներուն և գործքերուն մէջը, խոնարհ՝ անկեղծ և երկեղած ըլլալու ենք : Եւ չորրորդ թէ գաւու չուրթեամբ և հաւատարմութեամբ սուրբ պահելու ենք ժամանակին ատ բաժինը՝ այսինքն Կիրակի օրը, որն որ Երբը հաճեցաւ բոլորովն Իր պաշտօնին համար զատել ու սրբել :

Հինգերորդ Պատուիրանքը

բ Ը Ի Ե Դ Ե Գ Ե Ը 1-33 :

Հ . Ո՞րն է հինգերորդ Պատուիրանքը :

Պ . « Պատուէ՛ր ինձ չայլոր ու Մայրդ՝ որ ինձ օրերդ էր ինք ըլլան ան երբեք վեց » որն որ ինձ Տէր Երեսուցիդ ինձ փայ ինքն » :

Հ . Սեր կեանքը որոնցմը՞ կախում ունի աս աշխարհիս մէջ :

Պ . « Կախ Մտուածէ կախում ունի, և ապա մեր ճնողքներէն » :

Հ . Ո՞վ ևն անոնք՝ որ երբոր մենք տակաւին պզտի տղաքներ ըլլալով՝ ու չընալով իրենիքներնուս մեզի հոգ

տանիլ՝ մեզ կը հողան՝ և մեր կանչուըտեղուն և յիմա-
րու թիւններուն ու չարութիւններուն ալ կը համբերեն :

Պ . Մեր Հայրը և Մայրը :

Հ . Եւ թիւ են անոնք՝ որ կը սիրեն մեզ խանդակաթ-
սիրով , կը դարմանեն մեզ՝ երբոր մենք հիւանդ ըլլանք ,
կը պահպանեն մեզ կորստեան վտանգէն , և կը պատրաս-
տեն կերակուր ու հանդերձ մեզի համար , և բարի կերպով
կը կրթեն մեզ՝ աղօթելով մեզի համար և կը ջանան իմաս-
տուն ու բարի տղանքեր ընելու մեզ :

Պ . Մեր Հայրն ու Մայրը :

Հ . Ուրեմն ի՞նչ պէտք է որ ընենք մեր ծնողացը ,
իրենց մեզի ըրած մեծամեծ խնամքներուն փոխարէն :

Պ . Պարտինք խիստ մեծ սէր ունենալ անոնց վրայ :
Ղ Լ Գ . ԺԹ . 3 :

Հ . Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիւրգը ասոր վայրով :

Պ . “ Ենիճեալ ըլլայ ան որ իր հօրը կամ մօրը դէմ
հայհոյութիւն կ'ընէ ” : Ե՛ Օրէն . ԻԷ . 16 :

Հ . Չաւկըններն ամէն բանի մէջ պարտինք իրենց
ծնողացը նազանդիլ :

Պ . Եւր , անոնց ամէն հրամանին պարտին նազան-
դիլ՝ ան հրամաններէն 'ի զատ որոնք Ստուծոյ դէմ են :

Որդիք՝ ձեր ծնողացը նազանդ եղիք Տերովնով որ ան է
արժանը : Ե՛ Գ . 1 : Սող . Գ . 20 :

Հ . Սողոմոն ի՞նչ կ'ըսէ ծնողաց նազանդելու վրա-
յով :

Պ . “ Որդեակ իմ՝ քու հօրդ խրատը մտիկ ըրէ , ու
քու մօրդ օրէնքը մի մերժեր ” : Ե՛ Գ . 1 : 8 : “ Որ-
դեակ իմ՝ քու հօրդ պատուիրանքը պահէ , և քու մօրդ
օրէնքը մի մերժեր ” : Ե՛ Գ . 20 : “ Հնազանդու-
թիւն ըրէ հօրդ՝ որ քեզ ծնէր է , ու մի՛ անարդէր քու
մայրդ՝ երբոր կը պատուի ” : Ե՛ Գ . 1 : 22 :

Հ . Եւ մեր ծնողացը հետ արհամարհանօք կամ
խաբէութեամբ վարուելի՛ւ ենք :

Պ . Չէ , ոչ իրենց երեսին և ոչ իրենց ետէն :

Հ . Ստուած Հրէից ի՞նչ պատուիրեց ընել կամա-
կոր ու ապտտամբ դաւակի մը՝ որ իր հօրն ու մօրը չէր նա-
զանդէր :

Պ . Պատուիրեց որ մինչև մեռնելը քարկոծեն : Ե՛ Լ Ե
Ի Կ . 15-17 : Ղ Լ Գ . Ի . 9 : Ե՛ Օրէն . Ի Կ . 18-21 :
Ե՛ Գ . Ի . 20 : Ե՛ Ե . 24 :

Հ . Եւ ի՞նչ պիտի ըլլայ անոր աչքը՝ որ ծաղը կ'ընէ
իր հայրը , և իր մօրը նազանդիլը կ'անարդէ :

Պ . “ Չորերուն ազուաները պիտի փորեն , ու զանի-
կայ արծիւներուն ձագերը պիտի ուտեն ” : Ե՛ Գ . 17 :

Հ . Որքո՞ւնք ենք ու խրատի կարօտ եղած ատեննիս
որձեն երթալու ենք :

Պ . Մեր Հօրը և Մօրը :

Հ . Պէտք չի՞ մեզի որ երախտագէտ ըլլանք մեր ծնո-
ղացը՝ մեզի համար բոլոր իրենց ըրածնուն ու քաջած նե-
ղութիւններուն համար :

Պ . Եւր , ու երբոր անոնք ծերանան , կամ կոյր ,
կամ կաղ , կամ հիւանդ ըլլան , և չկրնան ինքզինքներ-
նին հողալ , կամ աղքատութեան և թշուառութեան
մէջ ըլլան , պարտինք հող տանիլ անոնց՝ մեր բոլոր կա-
րողութիւնովը : Օ՛ննք . ԻԷ . 12 : Ե՛ Ե . 1 : Սողոմ .
ԺԵ . 4-6 :

Հ . Ո՞ր տղան իր Հայրը և Մայրը մեծապէս կ'ուրա-
խացունէ :

Պ . Եւրի տղան : Ե՛ Գ . Ժ . 1 , 2 :

Հ . Ո՞ր տղան Հայրը և Մայրը խիստ կը տրտմե-
ցունէ :

Պ . Չար տղան :

Հ. Ո՞ր տղան ատելի է բոլոր բարի մարդիկներուն , ու կորսուելու ճամբուն մէջ է :

Պ. Չար տղան :

Հ. Երբոր դուք կը տեսնէք անանկ տղաքներ՝ որոնք ոչ կը սիրեն իրենց ծնողքը ոչ ալ կը չնազանդին անոնց , ի՞նչ պարտիք ընել :

Պ. Պարտիք անոնց ընկերութենէն ետ կենալ :

Իմաստուններուն հետ բարձր իմաստուն կ'ըլլայ . բայց անմիտներուն հետ ընկերացողը չար կ'ըլլայ : Եւր. 1 . ԺԳ . 20 :

Հ. Սէր Տէրը Յիսուս երբոր տղայ էր , իր ծնողքները սիրեց ու անոնց նազանդեցաւ :

Պ. Հրամներս :

Եւ ի՛նչու անոնց հետ՝ ու գնաց 'Եզրաթէթ' , և անոնց նազանդ էր : Դ. 1 . Ժ . 51 :

Հ. Ես հինգերորդ պատուիրանքին մէջ Ետուած ի՞նչ խոստացաւ բոլոր բարի տղաքներուն՝ որ կը պատուեն իրենց ծնողքը :

Պ. Երկար կեանք :

Հինգերորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզէ՝ մեր ծնողքներուն ունեցած պարտքերնիս , որ Ետուածմէ ետքը անոնցմէ կ'ընդունինք կեանք՝ կերակուր՝ հանդերձ՝ պահպանութիւն և կրթութիւն :

Ե. Ուրեմն պատուելու ենք մեր Հայրը և մեր Մայրը : 'Եսիս' մենք սիրելու ենք անոնք անկեղծ՝ հաստատուն ու ջերմեռանդ սիրով՝ ինչպէս որ արժան է : Երկրորդ՝ նազանդելու ենք անոնց ուրախութեամբ , կատարելով աւանդ հրամաններուն բոլորը : Երբորդ՝ յարգ՝ պատիւ ու մեծարանք ցուցունելու ենք անոնց թէ՛ առանձին՝ և թէ՛ հրապարակաւ : Եւ այսպէս ամէն մարդ տեսնելով մեր անոնց տուած յարգը՝ դիտանա թէ՛ անոնք մեր ծնողքն են :

Մենք անոնցմէ բան մը պահելու չենք , ոչ ալ ինքզինքնիս անոնցմէ իմաստուն կարծելու ենք . հասցա անոնց երթճարու ենք մեր ամենալաւ և բարերար բարեկամներուն պէս՝ խրատի ու խորհուրդի համար : Չորրորդ՝ միշտ յիշելու ենք մեր անոնց կրախտապարտ ըլլալն իրենց բոլոր բարերարութիւններուն և մեզի համար կրած նեղութիւններուն , և բնաւ բռնու չենք որ բաւական հատուցում՝ ըրած ենք անոնց : Երբոր անոնք ծերանան , կամ հիւանդանան կամ տկարանան և անօգնական մնան , կամ աղքատութեան ու նեղութեան մէջ ըլլան , ան ատեն բնաւ անտես թողելու չենք անոնք , հասցա աւելի ականջ դնելու ու հոգ տանելու ենք անոնց՝ որչափ որ կրնանք , պաշտպանելով անոնք ամէն նախատիքներէ ու անիրաւութիւններէ :

Ի : Մենք կ'անարգենք աս պատուիրանքը՝ երբոր չենք կատարել աս վերջ յիշուած պարտաւորութիւններուն մէկը կամ ամենը :

Ո՛վ տղաքներ՝ աս ձեր պարտաւորութիւնները կատարելու հոգ կը տանի՛ք , նազանդ տղաքներ էք : Ինչու որ աննազանդ տղայ մը բնաւ բարեկամորդութիւն պիտի չըրանէ . ինք ամօթ ու սրտի ցաւ է իր ծնողացը . ինքը բուն իր համբաւոյն վրայ նախատինք կը բերէ , իր բարի անունը կը կորսնցունէ աշխարհի մէջ , Ետուածոյ օրհնութենէն կը զզկուի , և դուցէ իր ունեցած օրերուն կէսին չափ պիտի չապրի . բայց նազանդ տղայ մը՝ որ կը պատուէ իր Հայրն ու Մայրը , միշտ սիրելի է : Ինք օրինալ Փրկչին օրինակին կը հետեի , որ անիկայ երբոր երկրի վրայ էր՝ պատուեց իր Հայրն ու Մայրը : Եսանկ տղայ մը կատարեալ յարգութիւն պիտի գտնէ . մենք կրնանք յուսալ որ ինք երջանիկ պիտի ըլլայ թէ՛ աս աշխարհի մէջ , և թէ՛ զաւու աշխարհին մէջ :

Գ. Հինգերորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի որ մենք պատուելու ենք մեր մեծերը , նաև ան ամէն ալ որ կ'իշխեն մեր վրայ : Ես պատուիրանքը միայն ծնողաց համար կը խօսի , ինչու որ յարգութեան պատուոյ՝ նազանդութեան և քաղաքաւորութեան հիմը՝ ընտանեաց մէջն էր սկիւ : Թէ՛ որ տղայ մը իր ծնողացը նազանդի՛ և իրենց

Հետ յարդու թեամբ ու քաղաքավարութեամբ վարուի՝ ան տղան բոլոր մարդոց հետ ալ պարկեշտ ու քաղաքավար կ'ըլլայ • բայց թէ որ իր ճնորդաց տունը շտկի ֆազանդութիւն ու պարկեշտութիւն սորվիլ, գուցէ բնաւ ուրիշ տեղ մը պիտի շտրվի անոնք գործածելը • Եւ այսպէս ան տղան երբոր մեծնայ, անորն մարդ մը պիտի ըլլայ • Ուստի ծնողքները և վարժապետները՝ պէտք չէ որ մոռնան աս բանը :

Վէցերորդ Պատուիրանքը :

Օձնոր • Գ • 1-16 :

- Հ • Ո՞րն է վէցերորդ Պատուիրանքը :
- Պ • “ Սպանութեան մի ընէր ” :
- Հ • Ես պատուիրանքովը ի՞նչ կը հասկընանք :
- Պ • Ար հասկընանք թէ բնաւ մարդ մը սպաննելու չենք :
- Հ • Արնանք սպաննել անասուններն ու թռչունները :
- Պ • Հրամարես, Եստուած մեզի հրաման տուաւ առնոր սպաննելու : Օձնոր • թ • 1-4 : ԿՍՏ • Գ • 3-5, և այլն :
- Հ • Բայց ինչո՞ւ համար մեռցունելու ենք անոնք, մեր դրօսանքի՞ն համար՝ թէ մեր օղուտի՞ն համար :
- Պ • Միայն մեր օղուտին համար :
- Հ • Հողիին փրկութեանէն ետք ի՞նչ է մարդու խիստ պատուական բանը :
- Պ • Իր կեանքը : Յովբ • Թ • 4 :
- Հ • Մենք որ չենք կրնար կեանք տալ, իրաւունք ունենք առնել անիկայ :
- Պ • Չէ, ան որ չենք կրնար տալ, չենք կրնար վերջունել անիկայ : Օձնոր • Ը • 2 : Գ թափ • Ե • 7 :

- Հ • Բնաւ իրաւունք ունի՞ մեկը իր կեանքը կորսնցունելու :
- Պ • Չէ, անձնասպանութիւնը մեծ մեղք է : ԿՍՏ • 4 : Մարտ • Ի • 3-5 : Պարթ • Կ • 16-25 :
- Հ • Եւ ո՞վ միայն իրաւունք ունի կեանքը վերցունելու :
- Պ • Միայն Եստուած՝ որ ինքն է կեանք տուողը : Օձնոր • Թ • 7 : թ • 5, 6 : Թաոս • Ժ • 22 :
- Հ • Թե՛ որ մարդ մը դիպուածով ուրիշ մը մեռցունէ, երբոր ինքը բնաւ ամենեկին չէր ուզէր ընել ան մեղքը, աս պատուիրանքին տակը ինկած յանցաւոր է :
- Պ • Չէ • միայն ան որ դիտաւորութեամբ թշնամութեան կամ նախանձու կամ ուրիշ գէշ կիրքի մը դրօսելովը կը մեռցունէ իրեն գոյակիցը յանցաւոր է աս պատուիրանքին : Թաոս • Ը • 22-25 :
- Հ • Եստուած ի՞նչ օրէնք տուաւ Հրէից՝ մարդասպաններուն վրայով :
- Պ • “ Այն՝ որ մարդ մը կը սպաննէ, անուշտ պիտի մեռցուի ” : Եւ “ Ով որ մարդու արիւն կը թափէ, իր արիւնն ալ մարդէ պիտի թափուի ” : Աւար • Ի • 17 : Օձնոր • թ • 6 :
- Հ • Տէրը մեր դրացին սպաննելը կ'արդիւն • բայց կրնանք իրեն բարկանալ, կամ զինքը ատել, կամ ծեծել, կամ իրեն հետ չարաւար վարուիլ և կամ զինքը մեռցունելու սիրտ մը ունենալ :
- Պ • Չէ, բնաւ ամենեկին չենք կրնար :
- Քու դրացիդ անպատճառ պիտի յանդիմանես, որ անոր համար մեղք չկրես : Արե՛տ պիտի շարնես, և բուժողութեանդ որդւոցը ռի պիտի չպահես, հապա բուժնկերդ բուժանձիդ պէս պիտի սիրես : Աւար • Ժ • 17, 18 : Լսեր էք որ ըստեցաւ առաջիններուն • Սպանուլ թիւն մի՛ ընէր, և ո՞վ որ սպանութիւն ընէ, դատաս

տանի պարտաւոր պիտի ըլլայ : Բայց ես ձեզի կ'ըսեմ . Ո՛վ որ իր եղբօրը պարտադ տեղը սրդողի , դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ . և ո՛վ որ իր եղբօրը յիմար ըտէ , ատենանի պարտաւոր պիտի ըլլայ . և ո՛վ որ իր Էդէօրը անմիտ ըտէ , դէհննի կրակին պարտաւոր պիտի ըլլայ : Սաղմ . Է . 21 , 22 :

Հ . Սուրբ Գիրքին մէջը ի՞նչ կ'ըսուի ան մարդուն վրայով , որ իր եղբայրը կ'ատէ :

Պ . « Ո՛վ որ իր եղբայրը կ'ատէ , մարդասպան է » : Թոմ . Գ . 15 :

Հ . Որո՞նչ ծոցը բարկութիւնը կը հանդէլ :

Պ . « Հիմարներուն ծոցը » : Դադ . Է . 9 : Հիմ . Թ . 19 , 20 :

Հ . Հրաման կայ երկար ժամանակ մեր ընկերին հետ խոսիլ կենալու :

Պ . Չէ՛ , բանզի այսպէս կը կարդանք . « Արեւ ձեր բարկութեանը վրայ մարդ զմանէ » : Եդ . Գ . 26 :

Հ . Բայց դիցուք թէ մեր դբացին թշամի է մեզի և իր բոլոր զօրութիւնովը կ'աղաատի մեզ միասնելու ու մինչև անգամ կ'ուզէ մեր կենանքը վերցունել , անոր ի՞նչ պարտինք ընել :

Պ . Պարտինք սիրել անիկայ , ու բարի ընել իրեն : Չարութեան փոխարէն մեկուն չարութիւն մի՛ հատուցանէք , ամէն մարդոց առջև բարի բաներ ընելու հոգ տարէք : Հոմ . Ժ . 17 : Եդ . Գ . 4 , 5 :

Հ . Սեր վերկէր ի՞նչ կը պատուիրէ մեր թշամիները սիրելու վրայով :

Պ . « Սերեցէք ձեր թշամիները , օրնկցէք ձեզ անիւ ծողները , բարի ըտէք անոնց՝ որ ձեզ կ'ատեն , և աղօթք ըտէք անոնց համար՝ որ ձեզ կը չարութիւն ու կը հալածեն » : Սաղմ . Ժ . 44 : Հոմ . Ժ . 14 :

Հ . Ըսէ՛ նայիմ ի՞նչ կ'ըտէ Պօղոս Առաքեալ վրէժ-խնդրութիւն ընելու վրայով :

Պ . « Սիրեկէք՝ վրէժխնդրութիւն մի ընէք ձեր անձերուն համար , հասցա բարկութեան տեղ տուէք . ինչու որ զրուած է . Վրէժխնդրութիւնը իմն է , ես պիտի հատուցանեմ » , կ'ըտէ Տէրը : Հոմ . Ժ . 19 :

Հ . Ըսէ՛ նայիմ աս խօսքէն ետքը ի՞նչ կը հետեցունէ :

Պ . « Ուստի թէ որ քու թշամիդ անօթեցեր է՝ հայտուր անոր , և թէ որ ծարաւի է՝ ջուր տուր անոր . քանզի աս ընկողմ՝ անոր դիտուն վրայ կրակի կայծեր պիտի դիզես : Չարէն մի յաղթուիր , հասցա բարիով յաղթէ՛ չարին » : Հոմ . Ժ . 20 , 21 :

Հ . Ի՞նչ կ'ընէր Հիսուս երբոր կը նախատուէր :

Պ . « Ինքը փոխարէնը չէր նախատեր » : Թոմ . Գ . 23 :

Հ . Ինք որո՞նց համար մեռաւ , և որո՞նց համար աղօթեց խաչին վրայ :

Պ . Իր թշամիներուն համար : Վոմ . Ժ . ԻԳ . 34 : Վոմ . Է . 59 : Հոմ . Է . 6-8 :

Հ . Ի՞նչ կ'ըսուի ամենուն հետ խաղաղութիւն ընելու վրայով :

Պ . « Որչափ որ կարելի է ձեզի՝ ամէն մարդոց հետ խաղաղութիւն ունեցէք » : Հոմ . Ժ . Ժ . 18 : Սաղմ . ԼԳ . 14 :

Հ . Սեր ընկերը ամէն միասնաբար և մահէն ազատելը , և անոր ու ուրիշներուն մէջը խոսիլութիւն եղած ատենը խաղաղութիւն ընելը՝ մեր պարտքը չէ՞ :

Պ . Հրամարես : Վոմ . Ժ . 18 : Վոմ . Գ . 36 , 37 :

Հ. 1^Տնչ կ'ըսէ մեր Փրկիչը խաղաղութիւն ընողնե-
րուն համար :

Պ. «Լըբանի խաղաղութիւն ընողներուն, ինչու որ
անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին» : Սաութ. .
Է. 9 :

Հ. Ո՞վ էր առաջին մարդասպանը, որ իր եղբայրը
մեռցուց :

Պ. Ապէն . Նոնոր . Գ. 1-8 :

Հ. Բարկացող, սխալալ և մարդասպան մարդը եր-
ջանիկ կ'ըլլայ արդեօք :

Պ. Չէ :

Հ. Մարդասպանութիւնը դիւրին կերպով կը ծած-
կուի՞ :

Պ. Չէ :

Տէրոջ աչքերը ամէն տեղ չարերը ու բարիները կը
դիտեն : Աստ. . ԺԷ. 3 : Նոնոր . Գ. 8-10 : Թաոոյ
ԼԷ. 23 : Աստ. . Ը. 21 :

Հ. Մարդասպանութիւնը խիստ սոսկալի յանցանք մը
ըլլալով, անոնք՝ որ աս յանցանքը կը գործեն, հէր պիտի
ունենան իրենց բաժինը, թէ որ չսպալաբան :

Պ. Արակի լիճին մէջը : Պառ. Ե. 21 : ա Յօհ . Գ .
15 : Յայտ . Լա . 8 : ԻԷ . 15 :

Հ. Բնականաբար ատելութեամբ, բարկութեամբ,
չարութեամբ և վրէժխնդրութեամբ լեցուն սիրտեր չու-
նի՞նք մանաւանդ անոնց վրայ՝ որ կը վնասեն մեզի :

Պ. Հրամարես :

Ինչու որ՝ սրտէն կ'ելլեն չար խորհուրդներ՝ սպանու-
թիւններ, շուռթիւններ, պոռնկութիւններ, գողու-
թիւններ, սուտ վկայութիւններ, հայհոյութիւններ :
Սաութ. . ԺԵ. 18, 19 :

Հ. Ուրեմն աս պատուիրանքը պահելու համար ի՞նչ
տեսակ սիրտերու կը կարօտինք :

Պ. Նոր սիրտերու : Յօհ . Գ. 3-6 :

Վեցերորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի մեր
պարտաւորութիւնը թէ՛ ուրիշներուն կեանքին՝ և թէ՛ մեր
կեանքին նայելով :

Մ. Սնը չէ՛ թէ միայն մեր ընկերը պիտի շնորհու-
նենք, և չէ՛ թէ բարկութեան՝ թշնամութեան՝ կամ սխա-
կալութեան զգացումներ պիտի չունենանք անոր վրայ,
հասա նաև սիրելու ու պաշտպանելու ենք իր անձը և
կեանքը բուն մերինն պէս : Սնը անոր հետ խաղաղու-
թիւնով վարուելու ենք, և ջնալու ենք որ ուրիշներն
ալ այնպէս վարուին իրեն հետ . մինչև անգամ ինքը մեզի
թշնամի ըլլայ ալ : Աս մասին պէտք է ըլլայ որ Յիսուս
Քրիստոսը մեզի օրինակ առնենք :

Մ. Սնը կ'անարգէնք աս պատուիրանքը նախ երբոր
կ'ատենք մեր ընկերը ծածուկ մեր սրտին մէջը . քանզի
ասանկ ատելութիւնը սրտի մէջ մարդասպանութիւն է :
Լըկորդ՝ ալ աւելի կ'անարգէնք աս պատուիրանքը,
երբոր մեր բարկութիւնը և ատելութիւնը յայտնի ընենք
իրեն հետ չխօսելով . կամ անէճքնելով ու գէշ անուննե-
րով զինքը նախատենք, կամ իր պատուին ու իր օգուտին
վնաս ընենք, թէ՛ ծածուկ և թէ՛ յայտնի կերպով : Լը-
բորդ՝ աւելի մեծադոյն աստիճանով կ'անարգէնք աս պա-
տուիրանքը, երբոր այնպէս բարկանանք՝ որ անոր վրան
մտազրկով՝ ձեծենք ջախջախենք և կամ մեռցունենք զինքը :
Չորբորդ՝ երբոր մեր ընկերին բան մը տանք ուտելու կամ
խմելու, որն որ մենք գիտենք թէ պիտի կորսնցունէ անոր
ատողութիւնը և կեանքը, կամ թէ միայն վտանգի մէջ
պիտի ձգէ զինքը : Հինգերորդ՝ երբոր զուր տեղը մեր
հաճութեանը կամ մեր օգուտին համար՝ մեր ընկերին
կեանքը վտանգի մէջ ձգենք, կամ գորութիւն ունենալով
պահանջներ իրմէն անանկ բան մը ընել՝ որն որ իր կրօն-
տեսան պատճառը պիտի ըլլայ : Վեցերորդ՝ երբոր մեր

զբօսանքին համար զըզուներ ուրիշներն իրարու դէմ բարկանալու և ձեճկուէլու : Եօթներորդ՝ երբոր բուն մեր կեանքը կորսնցունենք, թէ՛ հրացանով՝ թէ՛ կախուելով՝ թէ՛ խեղդուելով՝ թէ՛ անատակութեամբ ուտելով և խմելով և թէ՛ ուրիշ անժուժկալութեան գործքերով :

Պ . Ես պատուիրանքը պահելու համար պէտք է որ նախ՝ մեճ բան սեպենք մարդկային կեանքը որ Եստուծոմէ մարդուս արուած ամենապատուական պարզէն է, հոգիին փրկութենէն ՚ի զատ : Երբորդ՝ պէտք է որ սիրներ ամէն մարդ և դէժ՝ կենանք ու յաղթենք մեր բարկութեանը՝ երբոր սկսի բորբոքիլ : Երբորդ՝ պէտք է որ փախենք բարկահարս ու սխալալ մարդոց ընկերութենէն, որոնք մեճ ու պատուական բան մը կը սեպեն նախատինքի չհամբերելով՝ վրէժ առնելը : Չորրորդ՝ պէտք է որ խոնարհ ու հանդարտ հոգի մը ստանալու ջանանք . հպարտութիւնը, բարկութիւնը և ինքնահաւանութիւնը՝ իրենցմէ ետքը հակառակութիւն ու մահ կը բերեն : Հինգերորդ՝ պէտք է որ արթներք Եստուծոյ որ մեզի խաղաղասէր բնաւորութիւն մը տայ, բանգի անով կը նմանինք Վրիստոսի . և անանկ բնաւորութիւն մը խիստ ցանկալի ու քաղցր բան մըն է, որ նաև երջանկութիւն և հանդարտութիւն կը պատճառէ . բայց բարկութեան ու վրէժխնդրութեան հոգին՝ թշուառութիւն է ինքրիմէն, որն որ Չարին հոգին է :

Դ . Իարկացող ու վրէժխնդիր մարդիկ պարտին ապաշխարել և Եստուծոմէ նոր սիրտ մը խնդրել . թէ՛ չէ՛ բնաւ չեն կրնար պատրաստուիլ երկինց թաղաւորութեանը համար, որն որ արդարութիւն և խաղաղութիւն է : Անք փրկիլը խաղաղութեան թաղաւոր է :

Եօթներորդ Պատուիրանքը :

Եւր . Է . 27 :

- ▲ . Ո՞րն է Եօթներորդ Պատուիրանքը :
- Պ . “ Եւնաբէն Զ Ընէր ” :
- ▲ . Երանին կարգուող մարդիկը որո՞նք էին :
- Պ . Երամ ու Եւան :
- ▲ . Որի՞ն ձեռքովը կարգուեցան :
- Պ . Տէր Եստուծոյ ձեռքովը : Ծանօր . ք . 18-25 :
- ▲ . Մարդիկ ի՞նչ կերպով պարտին կարգուիլ, յայտնել թէ ծածուկ :
- Պ . Յայտնի կերպով :
- ▲ . Եստուած իսկապէս ներկայ է ամուսնութեան ատենը՝ վկայ ըլլալու համար :
- Պ . Հրամարես :
- ▲ . Սարգուէլէն ետքը որ ատեն որ ուղեն, էրիկը կամ կնիկը կրնան իրարմէ զատուիլ :
- Պ . Չէ՛ : Մարք . ԺԹ . 9 :
- ▲ . Ուրիշ մէկը բնաւ զբրութիւն ունի՞ր անոնք իրարմէ զատուիլ :
- Պ . Չէ՛ . “ Ուրեմն ան որ Եստուած միաւորեց՝ մարդ թող չզատէ ” : Մարք . ԺԹ . 6 :
- ▲ . Ուստի բնաւ չէ՞ն կրնար իրարմէ զատուիլ :
- Պ . Միայն երկու կերպով կրնան զատուիլ :
- ▲ . Ե՞նչ է առջինը :
- Պ . Երբոր անոնցմէ մէկը շուրթիւն շնէ : Մարք . Է . 32 :
- ▲ . Ե՞նչ է երկրորդը :
- Պ . Երբոր անոնցմէ մէկը մեռնի : Հովով . Է . 2, 3 : ան կորնի . Է . 39 :

Հ. Շնութիւնով բռնուած մարդիկը Մատուած ի՞նչ պէս պատժելու հրաման տուաւ Հրէից :

Պ . Սահով :

Շնացողն ալ շնացեալն ալ պիտի Բռնուին : Ղ Լ . Գ . 10 : Թե որ մէկը երկի ունեցող կնկան մը հետ պառկած դանուի , ան ատենը երկուքն ալ մեռնին , Թէ ան կնկանը հետ պառկող մարդը և Թէ ան կնիկը : Բ Գրէն . ԻԲ . 22 :

Հ . Որո՞նք կը վերաբերին մեր մարմինները , և որո՞նք համար անարատ պահելու ենք զանոնք :

Պ . Մտուածոյ համար :

Չէ՞ք դիտեր որ Մտուածոյ տաճար էք դուք և Մտուածոյ Հոգին ձեր մէջը բնակած է : Թե որ մէկը Մտուածոյ տաճարը կ'ապականէ , Մտուած անիկայ պիտի ապականէ . Ինչու որ Մտուածոյ տաճարը սուրբ է , որ դուք էք : Կ Կորնթ . Գ . 16 , 17 : Կ . 13-20 : Կ Թեա . Գ . 3-7 : Կ Կոր . Էթ . 9 :

Հ . Ի՞նչ կ'ըսուի շնացող կնկան տանը վրայով :

Պ . " Ենոր տունը դժոխքին ճամբաներն է . անոնք մահուան շտեմարանները կ'իջնեն " : Մատ . Է . 27 : Է . 5 :

Հ . Արկնէ՛ նայիմ Սողոմոնին ըսածը :

Պ . " Ենոր զացողները ընաւ շին դառնար , և կենաց ճամբաներուն շին հասնիր : Մատ . Է . 19 : Է . 20-23 :

Հ . Ուրեմն անկից դառնալուն վրայով ի՞նչ պատուէր կայ :

Պ . " Են կնիկէն ճամբադ հեռացուր , ու անոր տանը դրանը մի մտնեալ " : Մատ . Է . 8 :

Հ . Պարտի՞նք պատուել կամ ընկերութիւն ընել անոնց հետ՝ որ աս պատուիրանքը չեն պահեր :

Պ . Չէ :

Մարդիշններուն ճամբան մի երթար , ու չարերուն ճամբուն մէջ մի քալեր : Ենկէ զգուշացիր . անոր քովէն մի անցնիր , անկէ խոտորէ , ու անցիր : Մատ . Գ . 14 , 15 : Կ Կորնթ . Է . 9-13 :

Հ . Մտուած կը պահանջէ՞ մեզմէ աս պատուիրանքը պահել մեր բոլոր սրտովը , և բուն մեր սրտին մէջ ալ :

Պ . Հրամներս :

Լսեր էք որ ըսուեցաւ . Շնութիւն մի ըներ . Բաց ես ձեզի կ'ըսեմ . Ով որ կնիկ մարդու կը նայի անոր ցանկանալու համար , ալ անիկայ իր սրտին մէջ շնութիւն ըրաւ անոր հետ : Մատ . Է . 27 , 28 : Մատ . Գ . 25 :

Հ . Եռջի ժամանակուան մարդիկը թր պատուիրանքն անարգեցին , և շարժեցին Մտուածոյ բարկութիւնը՝ որ ջրհեղեղով կորսնցուց անոնք :

Պ . Եթե՞ներորդ պատուիրանքը : Կ Կոր . Գ . 1 , 2 : Կայն :

Հ . Եւ Սողոմոնացիք ու Գամբայցիք որ պատուիրանքն անարգեցին ու շարժեցին Մտուածոյ բարկութիւնը՝ որ այրեց անոնք կրակով ու ծծումով :

Պ . Կամանապէս եթե՞ներորդը : Կ Կոր . Գ . 4-28 : Կոր . 7 :

Հ . Մտուած թրախի Խորայեւացիներ կորսնցուց մէկ օրուան մէջ , աս պատուիրանքն անարգելուն համար :

Պ . " Կասնուչորս հազար " : Թուոց իԷ . 1-9 : Կ Կորնթ . Ժ . 8 :

Հ . Մտուած գալու աշխարհին մէջ ի՞նչպէս պիտի պատժէ պոռնիկներն ու շնացողները :

Պ . Հաւիտենական կրակով :

Սրդ՝ մարմինին գործքերը յայտնի են , որ ատոնք են , շնութիւն , պոռնկութիւն , պղծութիւն , գիծութիւն , . . . որ ասանկ բաներ գործողները Մտուածոյ արքայու-

Թիւնը պիտի չժառանգեն : Գառ . Է . 19-21 : (Բայց պրոնկուլթեան և ամէն կերպ պղծութեան՝ կամ ազահուլթեան անունը անգամ չիլուրի ձեր մէջը , (ինչպէս որ կը վայլէ սուրբերուն ,) և զարշէլի բաներ կամ յիմարական խօսքեր՝ կամ խեղդատակութիւն , որ չվայլեր , այլ մանաւանդ զոհութիւն : Եւ իմանալով զիտնաք , որ ամէն պրոնիկ՝ կամ պիղծ՝ կամ աղահ՝ որ կուսարշտ է , Բը-րիտոսի ու Մատուծոյ Թաղաւորութեանը մէջ ժառանգութիւն չունի : Իդէտ . Է . 3-5 : Իւ վախկոտներուն՝ ու անհաւատներուն՝ ու պրոնիկներուն՝ և կախարչներուն՝ ու կրապաշաներուն՝ և պիղծերուն՝ ու մարդասպաններուն և բոլոր ստախօսներուն բաժինը՝ կրակով ու ծծուխով վառած լիճին մէջը պիտի ըլլայ , որ է երկրորդ մահը : Հայտ . իմ . 8 :

Եթեաներորդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի մեր պարտաւորութիւնը՝ ուրիշներուն որդախոհութեանը վրայ . յով . ու նաև մեր մարմինները ինտոր գործածեն ու սրբելը :

Մ . Մանուկութիւնը Մատուծէ հաստատուեցաւ . և երբոր երկու յարմար անձանց մէջ՝ յարմար կանոնով կ'ըլլայ , շատ աղէկ ու երջանիկ վիճակ մըն է . և Մատուծոյ դիտաւորութիւնն ան էր՝ որ ասանկ ըլլայ : Մատուծ կառարեց առաջին ամուսնութիւնը մեր առաջին ծնողքու մէջ . և ան ամուսնութիւնը՝ բոլոր ետքը դալու ուրիշ ամուսնութիւններուն օրինակ էր : Օրինաւոր ամուսնութիւնը միայն մէկ էրիկ մարդու և մէկ կնկան մը մէջ անդը կը կայանայ . ու հրապարակաւ կատարուելու է ան հանգէտ , անանկ մարդիկներով՝ որ օրինաւոր իշխանութիւն ունին ան բանին վրայ : Ստ ազգայանի հետ ամուսնութիւն ասորինաւոր է : Մանուսնապէն ետքը երկու կերպով միայն զատուիլ կրնայ ըլլալ . մէյ մը՝ երբոր էրիկը

կամ կնիկը շութիւն ընելու ըլլայ , մէյ մըն ալ՝ երբոր երկուքին մէկը մեռնելու ըլլայ :

Բ . Հրաժարելու ենք շութիւն ու պրոնկութիւն ընելէն . և պիղծ խորհուրդներուն կամ խօսակցութիւններուն հաճնելու չենք , որ պիղծ գործերուն արմատներն են : Մեր մեր ընկերներուն կնկանը կատարաւ սրբութիւնով պիտի նայինք . և պիտի պաշտպանենք ամէն պղծութիւններէն , ինչպէս որ կ'ուղենք Թէ բուն մերինը պաշտպանուի . Մեր մարմիններն ալ պատուոյ մէջ պահելու ենք Մատուծոյ պաշտօնին համար՝ իբրև Սուրբ Հոգին բնակելու տաճար մը :

Գ . Մենք աս պատուիրանքը կ'անարգենք նախ՝ երբոր շութիւն կամ պրոնկութիւն կ'ընենք , կամ պիղծ խորհուրդներուն ու ցանկութիւններուն և անպարկեշտ վարքերուն կամ խօսակցութիւններուն հաճնելու կը ցուցնենք : Երկրորդ՝ երբոր ուրիշներն ալ կը բաշխուենք որ աս մեղքերը գործեն , ու չենք աշխատիր անոնք արգելելու :

Դ . Հնութիւնն ու պրոնկութիւնը սոսկալի մեղքեր են , և Մատուծոյ բարկութիւնը կը բերեն բոլոր ան մարդիկներուն վրայ՝ որ աս մեղքերը կը գործեն :

Ե . Մտնք անանկ մեղքեր են՝ որ չեն կրնար պահուիլ . քանզի պրոնիկներուն ու նաողներուն մէջը՝ հաւատք չկայ . անոնք որ ինքզինքնին կը ստեն , բնաւ չեն կրնար հաւատարիմ ըլլալ ձեզի . ու Թէպէտև անոնց մեղքերը զաղտուկ մնան մարդոցմէ , բայց չկրնար ծածկուիլ Մատուծմէ , որուն առջևը ամենածածուկ մեղքերը ևս յայտնի են : Օճար . Ժբ . 17 : Ի . 2-9 : Մատու . Է . 20-21 :

Զ . Մտնք անանկ մեղքեր են՝ որ գործողներուն վրայ՝ ուրիշ մեղքերէն աւելի շուտով ու աւելի շատ ախտ՝ Թըշուատութիւն և կորուստ կը բերեն : Մտնք՝ որ աս մեղքերը կը գործեն՝ կը կորսնցունեն բուն իրենց պատիւը և ուրիշներուն պատիւն ալ , Մատուծոյ իշխանութիւնն ու կարգադրութիւնը , մարդուս ինիտ երջանիկ վիճակը , ընկերութեան ամենալու բարիքը , իրենց զաւկին բարի համբաւը . և բուն իրենց հոգիին փրկութեան յոյսը : Մտնք իրենց ցանկութիւններուն ծառայ են , անոնց սիրտը

պինդ է, անոնց միտքը խաւար է, անոնց խիղճը թմրած է, անոնց բարքը ապականած է, անոնց բնաւորութիւնն անողորմ է: Կանոք ենթակայ են խիստ զգուշի ու տառապնդուցիչ հիւանդութիւններու՝ յանկարծահաս իջուածքներու ու մահուան: և անոնց պատժապարտ հաճութիւններուն մէջ տեղը՝ շատ անգամ կորուստը շուտով կը հասնի: Կանոց ընթացքն անոնք դժոխք կը տանի:

12. Ես մեղքերը արգիլուելու համար նախ թող տղաք զգուշութեամբ կրթութիւն բոլոր մարբութիւններով, պաշտպանութիւն դէշ ընկերներէն, վտանգաւոր տեղերէն և բարքերնին ապականող զբօսանքներէն: Երկրորդ թող ամէն մէկը բարեխառն ըլլայ իր կենացը մէջ, աղէկ մարդիկներ ընտրէ իր ընկերութեանը համար, հետու կենաց թատրոններէն, զինտուններէն ու անմարտը գիրքերէն: Երրորդ իր պառկելու ու Լըկուտ ատենը կանուխ ու կանուշաւոր ըլլայ: Չորրորդ՝ ամէն բանէն աւելի Եստուծոյ՝ օգնութիւն խնդրենք և հսկենք ու աղօթենք՝ որ փորձուածեան մէջ չէյնանք:

Ութերորդ Պատուիրանքը:

Յետո՛ւ . Է . 1-26 :

Հ. Ո՞րն է ութերորդ Պատուիրանքը:

Պ. «Վարդութեան մ'ընէր»:

Հ. Թո՛ւ որ բան մը առնեմ որ իմն չէ, ի՞նչ ըրած կ'ըլլամ:

Պ. Վարդութիւն:

Վա՛ւ դրացիիդ զրկանք մի՛ ընէր, և յափշտակութիւն մի՛ ընէր. քեզի վարձքով բանողին օրալուծ վարձքը՝ մէկ դիշեր մինչև առտու քու քովչ չմնայ: Վ. Կ. Ժ. 13:

Հ. Թո՛ւ որ բան մը գտնեմ ու տիրոջը չտամ, ի՞նչ ըրած կ'ըլլամ:

Պ. Վարդութիւն: Վ. Կ. Ժ. 1-7:

Հ. Թո՛ւ որ բան մը առնեմ կամ ծախեմ՝ և շիտակ ու ըման չափով ու զինով չընեմ իմ առուտուքս, ի՞նչ ըրած կ'ըլլամ:

Պ. Վարդութիւն:

Վատաստանի մէջ անիրաւութիւն պիտի չընէք, կանգունի մէջ՝ կշեռքի մէջ ու չափի մէջ ալ: Չեք կշեռքները ըման՝ ձեր իշխութեանը ըման՝ ձեր արդուն ըման ու հիմներ ըման պիտի ըլլայ, և այլն: Վ. Կ. Ժ. 35, 36:

Հ. Թո՛ւ որ իմ դրացիիս իրաւամբ պարտք ունենամ, և կարողութիւն ունենալով՝ չուզեմ հատուցանել, ի՞նչ ըրած կ'ըլլամ:

Պ. Վարդութիւն: Երբ՝ . Ի. 13: Հ. Կ. Ժ. 7, 8: Կ. Տ. 10:

Հ. Թո՛ւ որ բան մը փոխ առնեմ՝ որն որ բնաւ ևս տալու միտք չունենամ, կամ անոր ասոր պարտք ընեմ՝ որ անոնք հատուցանելու բնաւ գիտաւորութիւն մը չունենամ, կամ աղէկ գիտնամ թէ բնաւ պիտի չկրնամ հատուցանել, ի՞նչ ըրած կ'ըլլամ:

Պ. Վարդութիւն:

Եմբարիշտը փոխ կ'առնէ ու չվճարեր. սակայն արդարը կ'ողորմի ու կու տայ: Ստով. Ի. 21: Գ. Թ. Ժ. 1-7:

Հ. Թո՛ւ որ ինչ և իցէ կերպով իմ դրացիս խաբեմ և իր ունեցածը ձեռքէն առնեմ, ի՞նչ ըրած կ'ըլլամ:

Պ. Վարդութիւն: Ի. Օրին. Ի. 17: Ե. Կ. Ժ. 8:

Հ. Թո՛ւ որ ես գիտնամ թէ ուրիշները կ'ուզին իմ դրացիէս գողութիւն ընել, ու չեմացունեմ իրեն ան բանը, և կամ անոնց գողացածունն բաժին առնելու համուզուիմ, գողութիւն ըրած պիտի չըլլամ:

Պ . Հրամարես . Գողին հաղորդ եղողը գողին պէս դէշ է :

Եւ թէ որ անձ մը մեղանչէ , ու երդումի ձայնը լսելով՝ վիտյ ըլլայ , կամ Բահը տեսած ըլլայ կամ դիտցած , թէ որ չմանցունէ , յանցանքը ինքը պիտի կրէ : Վեպ . Ե . 1 : Գող տեսնելով՝ անոր հետ միաբանեցար , ու շնացողներուն հետ բաժին ունեցար : Սաղ . Ծ . 18 : Գողին ընկեր եղողը իր հողին կ'ատէ . անիկայ երդումը կը լսէ , ու իր գիտցածը չչայտներ : Աստ . Ի թ . 24 :

Հ . Ի՞նչ էր Աքարի յանցանքն ու անոր պատիժը : Պ . Աս էր որ ոսկի լեզու մը ու գեղեցիկ վերաբերու մը ու երկու հարիւր սիկղ արծաթ գողցաւ Երիբովի մէջ , և քարկոծուեցաւ իր բոլոր ընտանիքովը : Յե . Ե . 1-26 :

Հ . Ի՞նչ էր Աքարի և Յեղարէլի յանցանքը : Պ . Աս էր որ Յեղարէլ մտոցունել տուաւ Աքարովթը , ու ետքը Աքարը անիրաւութեամբ անոր այդին իրեն առաւ : Գ թաճ . Իմ . 1-21 :

Հ . Եւ ի՞նչ եղան Աքարու ու Յեղարէլը : Պ . Կորոտեցան : Գ թաճ . Իմ . 34 , 35 :

Հ . Ո՞ր ծառան էր որ գողութիւն ըրաւ ու պահէց իր գողցածը՝ սուտ խօսելով , և բորոտութիւնով պատժուեցաւ : Պ . Գէկեղէ , Եղիակ մարգարէին ծառան : Գ թաճ . Ե . 20-27 :

Հ . Ո՞վ էր ան գողը՝ որ իր Տէրը մատնեց ու ետքը ինքինքը խղիւղեց : Պ . Յուդա Իսկարիովտային : Աստ . Ի թ . 3-8 : Յե . Ժ ք . 6 : Գործ . Իմ . 18-25 :

Հ . Թե՛ որ մէկը բան մը գողնայ ու ետքը սուտ զրուցէ իր գողցածը պէհելու համար , անիկայ մէկ օգուտ մը կ'ըլլայ իրեն :

Պ . Չէ , անով միայն իր մեղքը կը մեծցունէ : Հ . Որո՞նք էին Առաքելաց ատենը գողութեան ու ստախօսութեան համար մեռնողները :

Պ . Անանիա ու իր կնիկը Սափիրա : Գործ . Ե . 1-10 :

Հ . Ասոր վրայով ի՞նչ կ'ըլլէ Սուրբ Գիրքը : Պ . « Ան որ գողութիւն կ'ընէր , ալ թող չգողնայ , այլ մանաւանդ աղէկ գործի մը պարսպելով՝ իր ձեռքովը աշխատի , որ կարող ըլլայ սալ կարօտ եղողին » : Ագգ . Գ . 28 :

Հ . Վերիտոնեաներն ի՞նչպէս քալելու են աշխարհիկ մարդոց առջևը :

Պ . « Արդարութեամբ » : Իմ թե . Գ . 11 , 12 :

Հ . Ի՞նչպէս պիտի պահենք ինքզինքնիս գողութիւն ընելէն :

Պ . Ատուծամէ վաննալով ու Իրեն սպախնելով :

Հ . Գողերը և սուտղուցները բնաւ Աստուծոյ արքայութիւնը կ'ընան մոնսլ :

Պ . Չէ : Ոչ գողերը՝ ոչ աղանչերը՝ ոչ զինմները՝ ոչ նախատողները ու ոչ յափշտակողները՝ Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն : Կորն . Գ . 10 : Յայր . Իմ . 8 , և այլն :

Ութերորդ պատուիրանքը մեզի կը սորվեցունէ մեր պարտաւորութիւնը , թէ մեր ստացուածքին , և թէ մեր ընկերին ստացուածքին վրայ : Ա . Աս աշխարհիս մէջ մենք ու մեր ընտանիքները՝ զանազան բաներու կը կարօտինք՝ միսթարութեան ու հանգստութեան համար . զոր օրինակ՝ տունի , հանդերձի , կէրակուրի , և այլն : Ուստի ամեն մարդ պարտի ժիր ըլլալ

որ կարող ըլլայ օրինաւոր սպարաւոր գտնել իրեն՝ և իր ընտանիքին համար : ‘Կաւ կը պահանջուի մեզմէ՝ որ մեր ընկերը թողունք որ իր ունեցեացը վայելէ . ոչ իրմէն զոգուած ինչ ընենք , ոչ ալ զինքը զրկելու և ոչ ո՛ր և իցէ կերպով մին ալ անիրաւութիւն մը ընենք իրեն . հասկա արդարութեամբ վարուինք իր հետը , միշտ պաշտպանենք իր ստացուածքը , և անոր առաջ երթալուն ու բարի վեճակին վրայ ուրախանանք , իբր թէ ան ամէնը ճիշդ մեր անձին եղած համարելով :

Գ . Մենք կ’անարգենք աս պատուիրանքը նախ՝ երբ որ մեր ձեռքը գողութիւն ընելու երկնցունենք : Արբորդ՝ երբոր ծածուկ կամ յայտնի խաբէնք մեր ընկերը ինչ և իցէ կերպով . կամ երբոր ուրանանք կամ զանց ընենք պարտաբերին հատուցանել . կամ երբոր փոխ առնենք գիտնալով որ պիտի շիրմանք հատուցանել , կամ բնաւ հատուցանելու դիտաւորութիւն չունենանք . կամ երբոր պատահի որ բան մը գտնենք ու տիրոջը չտանք : Արբորդ՝ երբոր բան մը գողցած ըլլանք կամ մեր ընկերը զրկած ըլլանք , և նո չդարձունենք ինչ որ իրմէն ատէր ենք : Չարբորդ՝ երբոր մեր ընկերը զրկողներուն հետ բաժանորդ ըլլանք , կամ գիտնանք անոնց չարութիւնն ու չիմացունենք իրեն ան բանը : Հինգերորդ՝ երբոր խտուածեմբն ու բռնութեամբ վարուինք անոնց հետ՝ որ մեզի համար կ’աշխատին ու մեզմէ կախում ունին . և անոնց պէտք եղածը առատապէս չհոգալէն զաս իրենց արդար վարձքն ալ չհատուցանենք , և այնպէս զրկել անոնք գողութիւն ընելու ստիպենք . կամ երբոր տեսնենք աղքատը մեկէ մը չարչարուած ու զրկուած , և չօգնենք անոր : Աղեկերդ՝ երբոր մենք անհոգ ըլլանք մեր գործին , պարսպ կեցող կամ ծոյլ ըլլալով , և չաշխատիր ինքրիկնս և մեր ընտանիքը կեբակրելու : Թե՛ որ ասանկ ընենք՝ իրաւունք չունինք մեր զբաղինքն կերակուր կամ օդնութիւն մը խնդրելու (ւ) :

ւ . Ս անպի երբոր մենք ձեր բոլն էինք՝ աս ձեզի կը պատուիրէինք , թէ ան որ չուզէր գործ գործել , Հոյ ալ թող չուտէ : Բ Թե՛ս . Գ . 10 :

Գ . Բ մէն մարդու պարտքն է պահել աս պատուիրանքը՝ ինչ և իցէ վեճակի մէջ որ ըլլայ : Արբեմն կը խորհի ծառան՝ թէ մեղք չէ իր տիրոջմէն գողութիւն ընելը , աղքատն իր հարուստ զբաղին , ազգին զխաւորներն իրենց ազգէն , զաւակն իր ծնողքէն , կայլն : Բռնատուրի մէջ ալ կը խորհին մարդիկ՝ որ կրնան գողնալ իրենց հետ առուստուր ընողներէն . բայց ասոնց ամէնն ալ գէշ են , ու ՄԻ՛ գործարար պատուիրանքին դէմ : Աստի թէ որ բանի մը կարօտութիւն ունենանք՝ զօղանք , հասկա իր տիրոջմէն խնդրենք ինչ որ պէտք է մեզի : Թե՛ որ կ’ուզես յաջողութիւն գտնել , վարպետութիւն բանեցունելու տեղը պէտք է որ կատարեալ արդարութիւն ընես ամենուն հետ :

Գ . Գողութիւնը զզուելի՛ նախատալից ու հոգեկորուստ մեղք մըն է : Գողին խղճմանքն իրեն դէմ է . ինքը շարունակ կը վախնայ թէ զուցէ իր ըրած խնացուի , և զրկելէ միշտ այնպէս կ’ըլլայ , ու իր գողցած բաներէն բիւշ բերկուրութիւն կ’ունենայ . ամէն բարի մարդ անոր վրայ նախատինքով ու անարդուութիւնով կը նայի , և ոչ ալ մեկը անոր վրայ վտանահոլութիւն կ’ունենայ : Բատուած ալ կը զզուի անիկ ու իր երկնաւոր թագաւորութիւնէն դուրս կը վաճակէ :

Բ . Ես մեղքն արդիւնու համար՝ պէտք է որ գողութեան առաջին անգամին՝ տղաքները պատժուին , և աս մեղքին անարգութիւնը , անթիւր և չարութիւնը յայտնի ցուցուի անոնց : Սորվեցնոր անոնց՝ բարեբար , ազնուամիտ ու ժիր ըլլալ . իրենց ունեցած բաներով բաւակաւ նանալ , Բատուածի վախնալ և Հիսուսի ոսկեղէն կանոնը յիշել , այսինքն՝ Բ մէն ինչ որ կ’ուզէր որ մարդիկ ձեզի ընեն , դուք ալ անոնց անանկ ըրէք : Մտաբ . Է . 12 :

Իններորդ Պատուիրանքը :

ա Սորեն . Ժ Գ . 1-13 :

▲ . Ո՞րն է իններորդ Պատուիրանքը :

Պ . “ Բնո- քրայելիք Գեմ սո- ք Վլայու- թի- ան Գե- ր ” :

▲ . Թե՛ որ քու վրայ ձգեմ ան յանցանքը՝ որն որ ուրիշ մեկը ըրեր է , ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Սուտ վկայութիւն :

▲ . Թե՛ որ քու վրայովք գէշ բաներ ըսեմ սուտ տեղը , ու ջանամ ուրիշներն ալ գէշ խորհել տալ քու վրայովք , և այնպէս կորսնցնենեմ քու բարի անունդ ու պատիւդ , անատենը ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Սուտ վկայութիւն :

▲ . Թե՛ որ Մտուած վկայ բռնեմ իմ սուտ խոսքերս հաստատելու համար , իմ մեղքս ալ աւելն մեծ չիլլար :

Պ . ▲րամբն :

▲ . Թե՛ որ քու վրայովք սուտ տեղը ուրիշներուն գէշ խօսիլն ու ամբաստանութիւն ընելը լսեմ , և գիտնամ թէ դուն անմեղ ես , և անոնց հետ մեկ ըլլալով՝ իրենք յօժարեցնենեմ ատ բանին մէջը յառաջանալու , անատենը ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Սուտ վկայութիւն :

▲ . Թե՛ որ դատաւորին ատենը կամ ուրիշ ո՞ր և իցէ տեղ մը կանչուելու ըլլանք մեր ընկերին համար կամ անոր գէժ վկայութիւն ընելու , ի՞նչ պարտինք խօսիլ :

Պ . Ն՞յմարտութիւն :

Սուտ լուր պիտի չտարածես . անօրէնի հետ ձեռքդ պիտի չզնես անիրաւ վկայ ըլլալով : Չարութիւն ընելու համար բազմութեանը պիտի չհետեւի . ու դատաստանի մէջ

իրաւունքը ծուրու համար շատերուն ետեւն խոտորելով՝ խօսք պիտի չխօսիս : Եղև ի Գ . 1 , 2 :

▲ . Ուստի ի՞նչ կ'արդիլէ աս պատուիրանքը :

Պ . Կ'արդիլէ ամէն տեսակ բանասարկութիւնը , զըրպարտութիւնը և բամբասանքը :

▲ . Ետք վրայով ի՞նչ կ'ըլլէ Սուրբ Գիւրբը :

Պ . “ Բնո ժողովուրդիդ մէջը չարախօսութիւն ընելու չպարտիս ” : Գ . Ե . Ժ Թ . 16 :

▲ . Ի՞նչ տեսակ մարդիկ են բանասարկուները , զըրպարտիչները և բամբասողները :

Պ . Խռովարար ու վնասակար անձինք են .

▲ . Սեք ընկերներուն ի՞նչ կ'ըրպով պարտինք խօսիլ ճշմարտութիւնը :

Պ . “ Սիրով ” :

▲ . Ի՞նչ կ'ըլլէ Սուրբ Գիւրբն ստոր վրայով :

Պ . “ Եմն դառնութիւն և բարկութիւն՝ ու սրամտութիւն և աղաղակ՝ ու հայհոյութիւն վերցուի ձեզմէ ամէն չարութիւններով մէկտեղ ” : Եղև . Գ . 31 :

▲ . Արկնէ՛ նայիմ , ուրիշ ի՞նչ կ'ըլլէ Սուրբ Գիւրբը :

Պ . “ Թե՛ որ մեկը զինքը կրծասէր կը սեպէ՝ ու իր լեզուին սանձ չդնէր , հասցա իր սիրտը կը խարէ , անանկին կրծասիրութիւնը փուճ է ” : Եղև . Գ . 26 :

▲ . Ի՞նչպէս վարուելու ենք սուտըրուցներուն հետը :

Պ . Պարտինք ատել սուտըրուցներն ու սուտ վկաները , և անոնց հետ ընկերութիւն ընելէն հրաժարել :

Իմաստուններուն հետ քաղովք իմաստուն կ'ըլլայ . բայց անմիտներուն հետ ընկերացողը չար կ'ըլլայ : Եղև . Ժ Գ . 20 :

▲ . ▲րէաներն ի՞նչ վկայութիւն ըրին մեր Փրկչին գէժ :

Պ . Սուտ վկայութիւն : Ստոր . Իբ . 59-61 :

Հ . Ըտտ հարստութենէն մննաւանդ կեանքէն ալ ի՞նչ թանկագին բան ունի մարդ :

Պ . « Բարի անուն » : Ստոր . Իբ . 1 :

Հ . Բարի անուն վաստդէլու համար ի՞նչպէս ջանալու ենք :

Պ . Բարի ըլլալով ու աղէկութիւն ընելով :

Հ . Սենք որ մեծ բան կը սեպենք մեր աղէկ անունը , չի՞նք պարտաւորիր պաշտպանել նաև մեր ընկերինն ալ :

Պ . Հրամներս , կը պարտաւորիրք :

Հ . Սուտ խօսողներն ու սուտ վկայութիւն ընողները կրնան անպատիժ մնալ :

Պ . Չէ :

Սուտ վկան անպատիժ պիտի չմնայ , ու ստութիւնները խօսողը պիտի չազատի : Ստոր . ԺԹ . 5 , 9 :

Իններորդ պատուիրանքը մեղէ կը սորվեցունէ մեր պարտաւորութիւնը՝ մեր ընկերին բարի անունին ու մեր բարի անունին վրայով :

Մ . Մշակարհի մէջ մեր հանգստութիւնն ու երջանկութիւնը , մեր յաջողութիւնը և մեր օգուտը՝ մեր ունեցած անունէն ու համբաւէն շատ կախում ունի : Ուստի մեր պարտաւորութիւնն է բարի գործերով աղէկ անուն վաստրդէլու ջանալ , ու երբոր կը ստանանք՝ մեր պարտաւորութիւնն է պաշտպանել անիկայ : Կան մեր ընկերին ալ աղէկ անունն ու պատիւը պաշտպանելու ենք՝ իր վրայ ճըլճմարտը խորհելով ու խօսելով , առանց շողորթութելու , զրպարտելու , կամ անոր վրայ անիրաւ կասկած մը ունենալու . որդրմութեամբ ու զթութեամբ յանդիմանելով անոր յանցանքները , ու անոնք ծածկելով ուրիշներէն՝ որչափ որ պէտք է ծածկել . պաշտպանելով զներք ան թըլճնամիտներէն՝ որոնք անոր աղէկ անունն աւերել կ'ուզեն . և վերջապէս թէ՛ իրեն համար է եղեր և թէ իրեն դէմ՝ ճըլճ

մարտ վկայութիւն ընելով՝ վկայութիւն տալու կանչուած ասուննիս :

Ի . Սենք աս պատուիրանքը կ'անարդենք նախ՝ երբոր բանասրկու , շատխօս , խոռվարար կամ բամբաստող ըլլանք մեր հասարակ խօսակցութեանը մէջ : Երկրորդ՝ երբոր ասոր հակառակ մեր ընկերին չունեցած աղէկութիւններն իրեն տալով՝ շողորթութիւն ընենք : Երրորդ՝ երբոր դատաւորին առջև մեր ընկերին համար սուտ վկայութիւն ընելով՝ զրպարտութիւն մը վրան գնենք , որով դուցէ իր պատիւը կորսնցունենք , կամ իր ընտանեացը , իր ստացուածքին և կամ իր կեանքին ալ վնաս մը հասցոյունենք :

Կ . Մարդիկ չարին հակամիտեալ ըլլալով՝ ընդհանրապէս կը սիրեն իրենց ընկերին վրայով գէշ խօսիր . նմանապէս անոնց համար ըսուած գէշ խօսքերը լսելը : Սակեց է որ կը ծագի վիճարանութիւն , հակառակութիւն , նախանձ , ատելութիւն , վրէժխնդրութիւն ու կռիւ : Ստոր . Զոր . Գ . 1-18 :

Կ . Թող ամէն մէկը Մտուծմէ շորհք ու գորութիւն ինդրէ՝ աս պատուիրանքը պահելու համար : Ասիկ գատ միշտ բու տկարութիւնը յիշէ . բու գործքերդ քեզի բաւական զբաղմունք թող ըլլաս , որ ուրիշն գործքին խառնուելու ժամանակ չունենաս . աղէկ մտիկ քրէ երկու կողմն ալ՝ թէ որ մէկը դատելու ըլլաս , ու նայ՝ որ մէկու մը վրայ՝ մարդոց վճիռը չընդունիս միշտ , բայց դուն բու խղճմաննորով դատէ՛ ամէն բան . որչափ որ կրնաս , միայն աղէկը պատմէ՛ . բու ընկերիդ համար : Ստոր . Ստոր . Գործք . Գործք . Գործք շատ անգամ կարգն ու մտածէ՛ անոր վրայ . բամբաստողներուն ընկերութենէն հեռու կեցիր . և թէ որ անոնց հետը գանուիս ու ուրիշ բան մը չկրնաս ընել անոնց բանասրկութիւնները խախտելու , բու իրութիւնը թող յանդիմանէ անոնք : Վերջապէս Մտուծմէ ինդրէ՛ եղբայրսիրութեան շորհքը :

Ի . Ընաւ մի ցանկար գէշութիւն ընելով չար մարդոց մէջ անուն ստանալու . աշխարհ ինչ որ ընելու ըլլայ բու վրայով՝ դուն անմիջ խղճմանք մը ունեցիր Մտուծոյ ու մարդոց առջև . համբերէ՛ երբոր քեզի զրպարտութիւն

ընեն ու անիրաւութեամբ դատեն . Եստուծոյ ձգէ քու դատաստանդ . յօժարութեամբ դէպի ան դատաստանին նայէ՛ , երբոր ամէն մարդ իր գործքին համեմատ զովոր- թիւն պիտի առնէ Եստուծմէ : Սաղմ . Ե . 11 : ւն Սործն . Դ . 3-5 :

Օ . Վրիստոնեաները յատկապէս իրենց բարի անունն ու իրենց եղբայրներուն բարի անունը պարտութեամբ պա- հեցու են , որ անօգուտ չըլլան աշխարհի մէջ , և վնաս չընեն Եւետարանին պատուոյն ու Վրիստոսի փառքին :

Տասներորդ Պատուիրանքը :

Կ թմաֆ . իււ . 1-16 :

Հ . Ո՞րն է տասներորդ Պատուիրանքը :

Պ . « Վրոս դրացիներ որուն մ' ցանխոր . Իոս դրացիներ ինխոր՝ իմ անոր ծառային՝ իմ անոր աղբիւնին՝ իմ անոր էզին՝ իմ անոր իլուն՝ և Իոս դրացիներ աղբիւնին մէ՛ Բանին մ' ցանխոր » :

Հ . Եստուած ի՞նչպէս կը պահանջէ ինծմէ որ իմ ըն- կերս սիրեմ :

Պ . Եւմ անձիս պէս : Սաղմ . իւ . 35-40 : Հաղմ . ԺԿ . 9 , 10 :

Հ . Ուրեմն պարտաւոր լի՞մ ուրախանալու , երբոր տեսնեմ զինքը որ ամէն բարիքներով լեցուն է ու անոնք կը վայելէ :

Պ . Հրամարես :

Հ . Ինչո՞ւ գիցուք թէ ևս անոր ունեցած պատուական բաներուն վրայ նախանձիմ , ցանկալով որ անոնք ինն ըլ- լան , ան ատենն ի՞նչ ըրած կ'ըլլամ :

Պ . Եւչք անկած կ'ըլլաս , որ աս տասներորդ պատուի- րանքին դէմ է :

Հ . Ես չի՞մ իմ պարտաւորութիւնս , որ իմ ունեցած բաներովս զո՞հ ըլլամ , առանց իմ ընկերիս ունեցածին նախանձելու :

Պ . Հրամարես :

Հ . Ի՞նչ կ'ընէ Պողոս առաքեալ իր բաւականութիւն սորվելուն վրայով :

Պ . « Ես սորվեցայ զո՞հ ըլլալ իմ գանուած վիճակիս մէջ : Վիտեմ չբաւարութիւն քաշելը . զիտեմ շատր ունենալը . ամէն բանի մէջ ամէն կերպով աղէկ սորվեր եմ թէ՛ կշտանալը , թէ՛ անօթեանալը , թէ՛ շատ ունենալը , և թէ՛ պահութիւն քաշելը » : Պիլիպ . Դ . 11 , 12 : Վարդ . Ե . 33 :

Հ . Ուրիշ ի՞նչ կ'ընէ :

Պ . « Եստուածպաշտութիւնը բաւականութիւնով մէկտեղ՝ մեծ շահավաճառութիւն մըն է : Եւչու որ բան մը չըրերիք աշխարհ , ու յայտնի է որ չէք կընար անկէ բան մը տանիլ : Հապա կերակուր ու հանդերձ ունենալով , անոնցմով բաւականանանք » : ւն Տիմ . Կ . 6-8 :

Հ . Ո՞րմէն կ'իջնեն ամէն բարի պարգևները և ամէն բարի շնորհները :

Պ . Եստուծմէ : Յաղմ . ւն . 17 :

Հ . Թե՛ որ մէկը ժրջանն ըլլայ ու աշխատի և միշտ արդարութիւն գործէ Եստուծոյ անջեւը , արդեօք Եստուած թող կուտայ որ ան մարդուն պէտք եղած բան մը պակսի իրմէն :

Պ . Չէ՛ :

Վանգի Տէր Եստուած արև ու վահան է . Տէրը շնորհք ու փառք պիտի տայ . բարութիւն մը պիտի չպակսեցունէ ուղղութեամբ քարոզներէն : Սաղմ . ձԻ . 11 :

Հ . Ես պատուիրանքը կ'արդիլի՞մ մեզ՝ մեր ընկերին դէմ մինչև անգամ չար խորհուրդ մը ունենալէն :

Պ . Հրամարես : թնոսոյ ժի . 22 : Եւսալ . ծի . 2 :
իք . 9 :

Հ . Մարուր սիրտ մը ունենալու համար ի՞նչպէս արգ-
թելու ենք Մատուծոյ :

Պ . « Ո՛վ Մատուած՝ իմ մէջ մնալու սիրտ ստեղծէ՛ ,
և իմ ներսի դիս ուղղել հոգի նորոգէ՛ » : Սաղմ . ծն . 10 :

Հ . Եւ ի՞նչպէս արգթելու ենք Մատուծոյ՝ մեր սիրտերը
փորձելու համար :

Պ . « Փորձէ՛ դիս՝ ո՛վ Մատուած , ու գիտցի՛ր իմ
սիրտս . իս քննէ՛ ու գիտցի՛ր իմ մտածմունքներս , և նայէ
թէ արդեօք չար ճամբու մէջ եմ՝ , և դիս դէպ 'ի յաւի-
տնական ճամբան առաջնորդէ՛ » : Սաղմ . շլթ . 23 ,
24 :

Հ . Ի՞նչպէս է առաջին չորս պատուիրանքներուն բռ-
վանդակութիւնը :

Պ . « Բու Տէր Մատուած՝ բոլոր սրտովք , բոլոր
հոգիովք ու բոլոր զօրութիւնովք սիրես՛ » : Թ Օրէն . ք .
5 : Սաղմ . իթ . 37 :

Հ . Եւ ի՞նչ է մնացած վեց պատուիրանքներուն բռ-
վանդակութիւնը :

Պ . « Բու ընկերդ սիրես բու անձիդ պէս՛ » : Սաղմ .
իթ . 39 :

Հ . Պարտաւոր ենք բոլոր պատուիրանքները կատա-
րելապէս պահելու :

Պ . Հրամարես . և մեր պարտաւորութեան անփոփո-
խելի կանոնն են անոնք :

Հ . Ի՞նչ պիտի ըլլան անոնք՝ որ աս պատուիրանքնե-
րուն կատարելապէս չեն նազանդիր :

Պ . Պիտի պատժուին յաւիտենական կորուստով :
Վարդ . ք . 10 :

Հ . Ի՞նչպէս մենք որ նազանդած չենք աս պատուիրանք-

ներուն , ի՞նչպէս ուրեմն պիտի փրկուինք յաւիտենական
կորուստէն :

Պ . Տէր Յիսուս Բրիտանոսին հաւատալով :

Հաւատան Տէր Յիսուս Բրիտանոսին , ու պիտի փրկ-
ուիս դուն՝ և բու տունդ : Վարդ . ժի . 31 : Սաղմ .
ժի . 16

Տանկերդ պատուիրանքը կը սորվեցունէ մեզի թէ
մենք այնչափ սիրելու ու պատուելու ենք մեր ընկերը՝ որ
սիրտերուն մէջն անգամ ցանկալու չենք իր ունեցած բա-
ներուն մէկին :

Ե . Ինքն ունենալու և վայելելու է բոլոր իր ստացուած-
ները . ու մենք թէ՛ գործբով և թէ՛ սրտով՝ անիրաւու-
թիւն մը ընելու չենք իրեն : Արբոր ինքը յաջողութիւն
ունենայ , մենք ուրախանալու ենք . և իր գործքերուն հոգ
տանելու ենք . ու երբոր բանի մը կարտուութիւն ունե-
նայ , իրեն օգնելու ենք : Սենք ալ գոհ ըլլալու ենք մեր
վիճակէն , ինչպէս որ սահմանէր է անիկայ մեր երկնաւոր
Հայրը :

Ե . Սենք աս պատուիրանքը կ'անարդեօք նախ՝ երբոր
սոքոհ ըլլանք Մատուծ մեզ գանդաւորով , որ մեզ մեր
ընկերին պէս իմաստուն , աղէկ , զօրաւոր , հարուստ ,
պատուելի , կամ անոր պէս երանիկ չըբաւ : Արկորդ՝
երբոր մենք նախանձինք մեր ընկերին , և ցանկանք որ ինքը
զելուի իր ստացած բանին մէկին , և մենք ունենանք ու
վայելենք անիկայ : Արբոր՝ երբոր զենքը կամ իր կինը
կամ իր զաւակները կամ իր անասունը նեղութեան մէջ
տեսնենք ու չօգնենք իրեն , այլ մնանաւոր վրան խն-
դանք :

Պ . Ինչպիսեալբար ամեն մարդ ինքզինքը իր ընկերէն
աւելի աղէկ կը սիրէ . անոր համար մէկը մէկալին ունե-
ցածին՝ կամ անոր յաջողութեանը նախանձելով՝ անոր
աղէկ բաներուն ցանկացող ու անոր երբանկութեանը հոգ
չաւանդ եղած կ'ըլլայ . բայց սասանկ անձնասիրութիւնը՝
բոլորովին դէշ բան է . ուստի անոր վրայ պայաւարելու

ենք, և նոր սիրտ մը խնդրելու ենք որ կարենանք սիրել
մեր ընկերը մեր անձին պէս :

Վ. Աղօթենք որ կարող ըլլանք միշտ շնորհակալ ըլ-
լալ ինչ որ ըլլայ մեր վիճակը : “ Ես աշխարհիս մեծու-
թիւնը անցաւ որ է ” : Տփղոհ ու ցանկացող մարդը միշտ
նեղութեան մէջ է : Պաւիթ՝ ցանկացաւ Ուրիային կնոջը .
Աբաբաբ՝ Կարովթին պղծիւն : Պէկեղ՝ “ Ելեմանին արձա-
թիւն ու հանդերձին . Յուզա՝ Սարիսիսն ծանրազգին իւ-
ղին . Բայց ասոնք ամենքս ալ իրենց ցանկութենէն թշուա-
նեղան : Հանկացող մարդը ոչ իր ներսիդին խաղաղութիւն
ունի, ոչ ալ իր ընկերներուն հետ : Թե՛ որ մեզի բաժին
Աստուած ունենանք՝ բաւական է :

Աս վեց պատուիրանքները՝ որոնք որ
հիմա քննեցինք, Աբրահոյ Գոթիայի իւր իրւոյն, և մեզի
կը սորվեցունեն մեր պարտաւորութիւնը դէպի մարդիկ .
այսինքն . նախ թէ մեր սիրով ու խրատութիւնով ձա-
ղանդելու ենք ան ամենուն՝ որոնք որ իշխանութիւն ունին
մեր վրայ : Աբրահոյ թէ մեր ընկերին կեանքին միաս մը
պիտի չհասցունենք : Աբրահոյ թէ անոր ընտանեացը
սրբութիւնն ու մաքրութիւնը պահելու և պաշտպանելու
ենք : Չորրորդ թէ իր ստացուածքը յախշտակելու չենք :
Հինգերորդ թէ իր բարի անունը պիտի չաւրենք : Վեց-
երորդ թէ իր յաջողութեանն ու հարստութեանը վրայ
ուրբասանալու ենք, և չարութեան դաշտուկ խորհուրդ մը
անդամ սիրտերնուս մէջ ունենալու չենք իրեն դէմ :

Ահա ասանկ են տասը պատուիրանքները, որոնք
տուաւ մեզի ամենակարող Աստուած, մեր Ստեղծիչն ու
Թաղաւորը :

Անոնք են մեր օրէնքը, մեր պարտաւորութեան կա-
նոնք, որուն պարտաւոր ենք հետեւելու սրտով ու գործ-
քով կատարելապէս, ապա թէ ոչ՝ դատապարտութեան
տակ կ'իյնանք :

Անք ամենքս ալ աս օրէնքին կատարեալ չնաղանդու-
թիւն ընելուս մէջ պակաս գտնուեցանք, ինչպէս որ մեր
խղճմտանքն ալ ասանկ կը վկայէ . և անոր համար դատա-
պարտուած ենք :

Անք մեզմէ բան մը չենք կրնար ընել, որ Աստուծոյ

հաստցում ըլլայ՝ իրեն դէմ մեր գործած մեղքերուն հա-
մար :

Իսկ ինքն իր մեծ ողորմութեամբը մեզի համար Փրկիչ
մը նախանամեց, Հիսուս Քրիստոս իր Որդին . որ մեզի
համար Օրէնքին անէծքը կրեց : Ուստի փրկուելու համար
պարտինք անոր հաւատալ ու անոր ապաւինիլ, ապաշ-
խարհելով ու մեր մեղքերը մէկ դի ձգելով :

Օրէնքը մեզի վարժապետ կ'ըլլայ՝ մեզ Քրիստոսին
բերելու համար : Անք մեր սիրտերն ու մեր կեանքը օրէն-
քին հետ բաղդատելով կը սորվենք մեր անթիւ յանցանք-
ներն ու մեղքերը . կը սորվենք ան սոսկալի պատիժը որ
դալու է . ան ատենը կը դողանք, ու կը հարցունենք թէ
ի՞նչ պարտինք ընել : Չայն մը կու դայ որ մեզի կ'ըտէ
թէ՛ “ Եհն Աստուծոյ Պատը որ աշխարհի մեղքը կը մըր-
ցունէ ” . և թէ՛ “ Են որ հաւատայ պիտի փրկուի, ան
որ հաւատայ, պիտի դատապարտուի ” : Ուստի ան
երկնաւոր ձայնին հաւատալով՝ մեր հոգին կատարեալ ու-
րախութիւն կ'ունենայ :

Գ. ՄԵՍՆԵՒՈՐ ՊԵՏՏԵՒՈՐՈՒԹԻՒՆԵՆԵՐՈՒ
ՎՐԵՅ :

1. Լըրիկներուն պարտաւորութիւնը :

Ի 41 . է . 22-33 :

Հ. Լըրիկան իր կնկանը վրայ ունեցած իշխանութեանը
համար Թնչ կը սորվեցունէ Աւետարանը :

Պ. “ Լըրիկը կնկանը դուռն է, ինչպէս որ Քրիստոս
ալ եկեղեցիին դուռն է ” : Ի 41 . է . 23-25 : ն Սորթ .
ժն . 3 : ն Տի . ք . 12 , 13 :

Հ. ԼՕնչ է երկանը պարտը :

Պ. Ես է՝ իր կնիքը սիրել ու անոր հոգ տանիլ : ն
Տի . է . 8 :

“ Լըրիկներ , սիրեցէք ձեր կնիկները , ինչպէս որ Վըրիստոս ալ սիրեց Եկեղեցին , ու իր անձը մատնեց անոր համար ” : Եփե . Է . 25 :

Ս . Լըրիկն իշխանութիւն ունի՞ր իր կնիկը ծեծելու կամ անոր հետ չարաչար կերպով վարուելու :

Պ . Չէ . քանզի հրամայուած է էրիկներուն որ իրենց կնիկներուն “ դառն չըլլան ” : Աղ . Գ . 19 :

Ն . Պետրոս Մարտիանը ի՞նչ կը հրամայէ էրիկներուն :

Պ . “ Դմանապէս էրիկները խոհեմութիւնով անոնց հետը բնակին . տկար անօթի պէս պատիւ տալով կնիկներուն , իբրև կենաց շնորհքին ժառանգակիցներ , որ ձեր աղօթքներուն արգելք չըլլայ ” : Ի՞նչ է Պիտ . Գ . 7 :

Ս . Ի՞նչ որ բարեպաշտ էրիկ մը աշխարհասէր կնիկ ունենայ , ի՞նչ պիտի ընէ անոր համար :

Պ . Եղօթք ընելու է , և ձեռքէն եկածին չափ Վըրիստոսի դարձունելու է անիկայ : Ի՞նչ է Աղ . Է . 14-16 :

Ն . Ենհաւատարիմ , անգութ ու իրենց կնկանը հոգ չտանող էրիկները պիտի փրկուի՞ն :

Պ . Չէ :

Մ . Եւտարանը կը սորվեցունէ որ էրիկներն իրենց կնիկներուն գրուին են : Իայց անոնք թող զգուշանան իրենց իշխանութիւնն ու զօրութիւնը չարաչար գործածելն . ու նային որ բարկացող , անգութ , դաժան կամ անհամբոյր չըլլան : Իսկ ան էրիկը որ ասանկ կերպով կը վարուի իր տկար ու անօգնական կնկանը հետ , անիկայ նուաաս ու թշուառ հոգւոյ տէր մարդ մըն է :

Ը . Լըրիկները պարտին սիրել իրենց կնիկները , երկրի վրայ ունեցած իրենց խիստ մտերիմ ու սիրելի բարեկամները սեպելով անոնք :

Պ . Լըրիկները ինամելու են իրենց կնիկները : Պէտր

է որ ժրաջան , զգաստ ու ինչպիսիք ըլլան , որ կարողանան իրենց կնիկներուն պիտոյքներն ու մխիթարութիւնները հոգալու :

Պ . Լըրիկները պատուելու են իրենց կնիկները : Եւ պէտք է որ յարգութիւն ու պատիւ ցուցնեն անոնց թէ տան մէջ ու թէ՛ տնէն դուրս . մանաւանդ անոնց հիւանդութեան ժամանակը քաղցութեամբ և մարդասիրութեամբ վարուին , համբերելով անոնց տկարութեանը , ճեռու կենալով նախանձոտ բնութենէ , և մանաւանդ զգուշանալով որ պատճառ չտան կնիկներուն՝ իրենց հաւատարմութեանը վրայ կասկածելու :

Ն . Լըրիկները հոգ տանելու են իրենց կնկանը փրկութեանը համար : Եւ հոս էրկանն ամենէն մեծ պարտաւորութիւնը՝ որ ունի իր կնկանը վրայ : Սատի էրիկ մը թող միշտ միտքը բերէ որ ինքը պիտի կայնի Եստուծոյ ատեանին առջեւ , ու հաշիւ պիտի տայ կնկանը հետ ունեցած իր ամէն վարմունքին համար , և անոր վրայ ունեցած իր բոլոր ազդեցութիւններուն համար : Ի՞նչ է Աղ . Է . 16 , 29-34 :

2. Անիկներուն պարտաւորութիւնը

Եւս . Է . 10-31 :

Ս . Ի՞նչ է կնիկներուն յատուկ պարտաւորութիւնը :

Պ . Սիրել ու նազանդել իրենց էրկանը :

Անիկները իրենց էրիկներուն նազանդ ըլլան՝ որպէս թէ Տէրօք : Եփե . Է . 22 : Աղ . Գ . 18 : Ի՞նչ է Պիտ . Գ . 1 : Ի՞նչ է Տէր . Բ . 11-15 : Տէր . Բ . 4 , 5 :

Ս . Պէտք է որ կնիկները զարդարանք սիրեն , աշխարհի գաւարձութիւն վնասեն , ու անէ տուն պտրտելով ամէն օր այցելութեան երթան :

Պ . Չէ : Ի՞նչ է Տէր . Բ . 9 , 10 : Ի՞նչ է Պիտ . Գ . 3 , 4 :

Ս . Ի՞նչ սեասկ հոգի ունենալու են անոնք :

Պ . « Էկ ու հանդարտ հոգի մը » : ԿՊԵԿ . Գ . 4 :
 Է . Եւ ան կնիկները՝ որոնք ստուգաբանութեանը յանձնառու կ'ըլլան , խնորհ կը վայել որ զարդարուին :

Պ . Աը վայլէ որ բարի գործքերով զարդարուին » : ԿՍԷ . Թ . 9 , 10 :

Է . Ո՞րն է կնիկներուն սեպական տեղը , և թուր կը կայանայ իրենց զխաւոր հոգն ու պարտաւորութիւնը :

Պ . Իրենց ընտանիքին մէջ : ԿՍԷ . ԸՄ . 10-31 :

Է . Լքիկներն իրենց ընտանիքին հոգ տանիլը , ու ժրուժեամբ և խնայողութեամբ ամէն բան մտքոր և 'ի կարգի պահելը՝ որոնցմէ՞ կը յուսան

Պ . Իրենց կնիկներն :

« Որ խրատեն նորահասակ կնիկները՝ էրիկներն սիրող , զաւակներն սիրող ըլլալ , խոհեմ , ողջխտհ , տնայէն , բարեգործ , իրենց էրիկներուն նազանդ . որ չըլլայ թէ Եստուծոյ խօսքը հայհոյուի » : ՏԷԿ . Թ . 4 , 5 :

Է . Բարեպաշտ կնիկները՝ որ աշխարհասէր էրիկներ ունին , ի՞նչպէս պիտի աշխատին անոնք Վրիստոսի դարձունելու :

Պ . Իրենց բարի վարքովը : ԿՊԵԿ . Է . 16 : ԿՊԵԿ . Գ . 1 , 2 :

Է . Լքիկներուն և կնիկներուն ընտանեկան հոգևոր պարտաւորութիւնն ի՞նչ է :

Պ . Իրարու համար և իրարու հետ աղօթք ընել , և իրենց ընտանիքին հետ ալ , և իրարու երջանիկ ըլլալուն աշխատիլ , թէ՛ աս աշխարհիս և թէ՛ հանդերձեալ աշխարհին համար :

Ն . Կնիկները՝ Եստուծմէ ետք իրենց էրիկներուն վրայ սէր ունենալու են :

Բ . Փոխանակ՝ բարկացող , անձասէր ու հակառակող

ըլլալու , կնիկները պիտի նազանդին իրենց էրիկներուն ամէն բանի մէջ , բայց 'ի անոնցմէ՞ որ օրինաւոր չեն :

Պ . Իրենց ամենէն մեծ հոգն ու զխաւոր պարտաւորութիւնը կը կայանայ բուն իրենց ընտանիքին մէջ : Ուստի հարկաւոր է որ տնայէն , ժրջան , կանուխ արթնցող , մարբասէր , խնայող , զգուշաւոր , խաղաղաբար և ծանրաբարոյ ըլլան . ու նաև աղէկ կառավարեն իրենց զաւակներն ու ծառաները , առանց ստեպ տուտուալու , սպանալու , ու ամեն ատեն զանգատ ընելու : Կնիկները՝ որ չափազանց զարդարանք կը սիրեն , ու միշտ անէ տուն կը պտտոին , շաղակրատութիւն կ'ընեն , ու ընչներուն բերնէն կը ջանան լուրեր առնել՝ որ ետք բամբասանք ընեն ու խոտութիւն հանեն , անանկները թըշուառութեան մէջ կը ձգեն իրենց էրիկներն ու ընտանիքը , ու իրենց անձինքը փորձութեան ու դժբախտութեան կը տանին :

Պ . Բարեպաշտ կնիկները՝ որ աշխարհասէր էրիկներ ունին , պարտին զոյշ ըլլալ իրենց վարմունքին ու խօսակցութեանը մէջ , որ չըլլայ թէ նախապաշարմունքի տակ ձգեն իրենց էրիկները . այլ ընդ հակառակն պէտք է որ ամէն միջոցով համոզեն անոնք որ դարձի դան , ապաշխարեն ու հաւատան :

Ն . Լքիկներն ու կնիկներն պէտք է որ միշտ մտքերը նին բերն իրենց խոստմունքները և իրենց պարտաւորութիւնները մէկզմէկու վրայ , իրենց զաւակներուն և ծառաներուն վրայ , ու մանաւանդ դէպ'ի Եստուած ալ . ու ամէն բանի մէջ պէտք է որ ջանան Եստուծոյ օրէութիւնը ձեռք բերելու : ՍՄԷ . ՃԻԷ . 1 :

3 . Նշողքներուն պարտաւորութիւնը :

Է . Ի՞նչ է բարեպաշտ ծնողաց առաջին պարտաւորութիւնը և արտօնութիւնը , իրենց զաւակներուն վրայով :

Պ . Ենոնց պարտաւորութիւնը և արտօնութիւնն է՝

անոնք Մկրտութեամբ ընծայել Տէրոջը՝ որմէ որ ընդունել-
ցին անոնք : Ծանօր . ԺԷ . 7-14 : Հոսի . Է . 28 , 29 :
Կ . 11 : Առ . Է . 9-12 : Վարժ . Է . 38 , 39 : ԺԿ .
14 , 15 , 26-34 : Սարբ . ԺԺ . 13-15 : Է . Օրէն . Կ .
7 : ԼԷ . 46 : Է . ՏԷ . Կ . 5 : Կ . 15 : ՅԵ . ԻԿ . 15 :
Սոս . Կ . 4-8 : Ա . Կ . Է . 21 :

Հ . Ի՞նչ ըսաւ մեր Փրկիչը պղտիկ տղոց իրեն զա-
լուն համար :

Պ . « Թող տուէք ասի մանր տղոց որ ինծի զանս , և մի
արդիւնէք ատոնք : Ինչու որ Աստուծոյ թագաւորութիւնը
ատանկերունն է : » Սարբ . Ժ . 14-16 : Սարբ . ԺԺ .
14 , 15 :

Հ . Օգտակրները ի՞նչպէս կրթելու հրամայուեցաւ
ծնողքներուն :

Պ . « Տէրոջը վարժութիւնովը ու խրատովը : » Եփե .
Կ . 4 :

Հ . Ծնողքներն ամէն բանէն աւելի՝ ի՞նչ բանի պէտք
է որ փափարին իրենց զաւկրներուն համար :

Պ . Հոգիներուն փրկութեանը : Սարբ . Կ . 33 :

Հ . Եւ ծնողքներն ի՞նչ պարտք պիտի պահանջեն
իրենց զաւկրներէն :

Պ . Շարունակ և կատարելա շնագանդութիւն :

Հ . Ի՞նչ պէտք է որ սորվեցունեն անոնց՝ որ ամէն
իբրիուն ու առտու անպատճառ կատարեն :

Պ . Աղօթք ընել Աստուծոյ :

Հ . Ծնողքներն ի՞նչ զիրք պիտի կարգացունեն իրենց
զաւկրներուն , և միշտ անկէ սորվեցունեն անոնց :

Պ . Աստուածաշունչ Վիբրքը :

Հ . Ծնողքներուն պարտաւորութիւնն է որ իրենց
զաւկրներուն հետ՝ և իրենց զաւկրներուն համար՝ ամէն օր
աղօթք ընեն :

Պ . Հրամարնս :

Հ . Ի՞նչ տեսակ խօսակցութիւն պէտք է որ ընեն ա-
նոնք՝ իրենց զաւկրներուն առջևը :

Պ . Իարի և օգտակար խօսակցութիւններ :

Հ . Եւ ի՞նչ տեսակ օրինակներ տալու են անոնց :

Պ . Իարի և գովելի օրինակներ :

Հ . Արժան է որ ծնողքները բարկութեան զրգուն
իրենց զաւկրները , զօսանքի համար :

Պ . ՂԷ . բանդի զրուած է . « Հայրեր՝ ձեր որդի-
ները մի բարկացունէք » : Եփե . Կ . 4 : Առ . Կ .
21 :

Հ . Ծնողաց պարտքն է որ զաւկրներին չար ընկե-
րութենէ զզուշացընեն ու անկէ հեռու պահեն :

Պ . Հրամարնս : Առ . Կ . 10-15 : ԺԿ . 20 : Կ
Արբ . ԺԵ . 33 :

Հ . Երբոր տղաք չար ու կամակոր ըլլալով չնազան-
դին իրենց ծնողացը , անատն ի՞նչ է ծնողաց պարտքը :

Պ . Պէտք է որ պատժելով խրատեն անոնք : Առ .
ԺԿ . 24 : ԺԺ . 18 : ԻԷ . 15 : ԻԺ . 15 , 17 :

Հ . Ի՞նչ խրատ տուաւ Եսայիս անոր վրայով :

Պ . « Տղայէն խրատը մի՛ կտրեր . վասն զի թէ որ
զանիկայ զաւազանով ծեծես , չմեռնիր : Դուս անիկայ
զաւազանով կը ծեծես , բայց անոր հոգին դժոխքէն կ'ա-
զատես » : Առ . Կ . 13 , 14 :

Հ . Եւ ի՞նչ ըսաւ անիկայ , զաւկի մը կրթութեանը
համար :

Պ . « Արթի մանուկը իր ճամբան սկսած ատենը , որ
իր ծերութեան ատենն ալ անկէ չխոտորի » : Առ .
ԻԷ . 6 :

Հ . Հաւատարիմ և արդար ծնողքներուն զաւկրները
յատուկ պիտի օրջուիին :

Պ . Հրամներն : Օճնդ . Ժը . 19 : ԷՕրն . Է . 40 : Է . 9 :

Հ . Իճնչ կ'ըսէ Դաւիթ ստոր վրայով :

Պ . « Տղայ էի ու ծերացայ . բայց արդարը անտես եղած չտեսայ , կամ անոր զաւակը հաց մուրացող : ՄԱճն օր կ'ողորմի ու փոխ կու տայ , և անոր սերունդը օրձուած է : Սուրճ . ԼԷ . 25 , 26 :

Հ . Չար ծնողաց պատիժը՝ իրենց զաւկներուն կը հատուցանէ՞ Մտուած :

Պ . Հրամներն : Լնչ ի . 5 : ԼԷ . 7 : Թոսոց ԺԷ . 18 : Սուրճ . ԼԷ . 28 :

Մ . Իարեպաշտ ծնողաց առաջին պարտաւորութիւնը և արծնութիւնը՝ իրենց զաւկները մկրտութեան բերելն է . քանզի ասանկով իրենց զաւկներուն համար ուխտ մը բրած կ'ըլլան Մտուածոյ հետ՝ որ Մտուած իրենց զաւկներուն Մտուած ըլլայ , և ան զաւակներն Մտուածոյ ծառաներ ըլլան : Ուտաի ան զաւկներն հասկնայու կարող ըլլալուն պէս , պէտք է որ ծնողքերը պատմեն անոնց աս ուխտը , բերելով թէ անոնք՝ Մտուածոյ բնծայուած են , ու իր եկեղեցիին մէջ մկրտուած են , և թէ իրենց պարտաւորութիւնն է որ ապաշխարեն ու հաւատան Հիսուս Կրօնաբխաստի , և ինքզինքնին Մտուածոյ յանձնեն . և թէ այնուհետեւ խոստովանելով զիրենք Մտուածոյ զաւակները՝ պէտք է որ ընդունին ու յանձն առնեն ան ամէնը՝ որ ծնողքներն իրենց մանկութեան ատենն ըրին իրենց համար՝ Մտուածոյ հրամանին պէս :

Ի . Օճնողքները պէտք է որ հոգ տանին զաւակներուն , համբերող ըլլան անոց տկարութիւններուն ու պակասութիւններուն . հոգան անոնց պէտք եղածը , պահպանեն անոնք վստահութեամբ , ախտաստեր ըլլալ սորվեցունեն անոնց , ու անոնք աղէկ վարեցունեն զխտութեան մէջ , որ տուներէն ու կարուածքներէն աւելի աղէկ բան է :

Պէտք է նաև սորվեցունեն անոնց աղօթք ընել , ու ստեպ աղօթք ընեն անոնց հետ . և անոնց համար : Մտնը տակախ կարգալ չսորված՝ սորվեցունեն անոնց Սուրբ Գիրքին մէջէն : Պատիկուց տանին անոնք Մտուածոյ ստեպ , ու մեծ պատիւ մատուցանել տան Մտուածոյ սուրբ օրուան՝ այսինքն Արարիին . զգուշացունեն ու հեռու պահեն անոնք չար ընկերներէ . յանդիմանեն անոնց յանցանքը՝ զաւագանին ալ չնայելով : Թող ծնողքները չբարկացունեն զաւկներնին . հապա արմատացունեն անոնց ներսը՝ նազանդ , հեզ , խաղաղ , զոհ , ողորմած և ուրախ բնավորութիւն մը : Հոգ տանին որ անոնք սիրեն եղբայրնին ու քոյրերնին . բարեբար և ախնաճու ըլլան ամէն մարդու , մանաւանդ ծերերուն . միշտ անոնց միտքը ձգեն՝ որ երջանիկ ըլլալու համար , անոնք պարտին օգտակար գործի մը մէջ ըլլալ . մանաւանդ պարտին նոր սիրտ մը ունենալ , սիրել Մտուած ամէն բանէն աւելի , և իրենց դրացին ալ իրենց անձին պէս : Եւ թող ծնողքները միշտ յիշեն՝ որ անօգուտ կ'ըլլան իրենց բոլոր խրատները , քանի՜ որ բարի օրինակ չտան իրենց զաւկներուն :

Գ . Մտուած՝ մանաւոր խոստմունքներ կ'ընէ հաւատարիմ ու բարեպաշտ ծնողքներուն , թէ անոնց սերունդը պիտի օրձուէ : Բայց ասանկ խոստմունքներ չկան՝ անհաւատարիմ ու անբարեպաշտ ծնողքներուն . ասոնք Մտուածոյ անէճքը պիտի բերեն իրենց զաւկներուն վրայ : Ուտաի պէտք է որ՝ առաջ իրենք սկսին Մտուածոյ ծառայել , ու ան ատեն Մտուած անոնց՝ և զաւկներնուն Մտուած պիտի ըլլայ :

4 • Տղայոց պարտաւորութիւնը :

(Տէ՛ս հինգերորդ պարտութիւնն է :

5 • Տէրերուն պարտաւորութիւնը :

Ղ ԿԻ • է • 1-10

▲ • Աստուած ի՞նչ պատուէր տուաւ տէրերուն :

Պ • “Կո՛ւ ալ տէրեր՝ նոյնը ըրէք անոնց , ու սպառնալիքք թող տուէք , զխոնարով որ անոնց ալ ձեր ալ Տէրը երկինքն է . ու անոր քով աչառութիւն չկայ : ԼԾ փե՛ս • Կ • 9 : Տէրեր՝ ձեր ծառաներուն իրաւունք ու հաւասարութիւն տուէք , զխոնարով որ դուք ալ Տէր ունիք երկինքը” : Ա՞ռ • Կ • 1 :

▲ • Ո՞վ է մեր ամենու Տէրը երկինքին մէջ :

Պ • Աստուած է :

▲ • Ուստի տէրքն ու ծառաները՝ ամէնքն ալ հաւասար են Աստուծոյ առջևը :

Պ • Այո՛ , քանզի անիկայ աչառութիւն չընէր : Յ՞ռԷ • ԼԿ • 13-15 :

▲ • Ի՞նչպէս պիտի վարուին տէրերը իրենց ծառաներուն հետ :

Պ • Արդար ու մարդասէր վարմունքով :

▲ • Ի՞նչպէս կրնան տէրերը անիրաւութիւն ընել իրենց ծառաներուն :

Պ • Անոնց բաւական ու աղէկ կերակուր տալը զանց ընելով , կամ անոնցմէ չափազանց աշխատութիւն պահանջելով , կամ իրենց ծառայութեանը փոխարէն արժանաւոր վարձք չտալով , կամ իրենց խոստացած վարձքին

մէկ մասը կտրելով , կամ վճարումը երկնցունելով՝ և ուշ հատուցանելով :

▲ • Ի՞նչ պատուէր տուաւ Սոփեստին օրէնքը , ծառաներուն վարձքը ժամանակին վճարելու համար :

Պ • “Ի՛նչեք վարձքով բանողին օրափոխ վարձքը մէկ զիւր մինչև առաու քու քովք շինայ” : Ղ ԿԻ • ԺԹ • 13 :

▲ • Երեմիա մարգարէին ըրնովը՝ Աստուած որ՞ու դէ՞մ կը զրուցէ :

Պ • Անոր դէ՞մ՝ որ կը շինէ իր տունը անարգարութեամբ , ու իր վերնատունն անիրաւութեամբ . իր դրացին ձրի կ'աշխատցունէ , ու անոր վարձքը հատուցանէր : ԼԻԷԴ • ԻԷ • 13 :

▲ • Որ՞ու դէ՞մ Աստուած պիտի դայ դատաստան ընէ , կ'ըսէ Սաղարիա մարգարէն :

Պ • Անոնց դէ՞մ՝ որոնք կը չարչարեն վարձկանները իրենց վարձուցը համար : Սաղար • Կ • 5 :

▲ • Ի՞նչպէս կրնան տէրերը անմարդասէր ըլլալ իրենց ծառաներուն :

Պ • Խիտ և դաժան կամ տըռտուացող վարմունք մը ունենալով անոնց հետ :

▲ • Տէրերը իրենց ծառաներուն հոգիներուն համար պարտաւորութիւն մը ունե՞ն :

Պ • Հրամարտ . պարտական են կրթել իրենց ծառաները , Սուրբ Գիորգն անոնց սորվեցունելով , և ամէն պատահութիւն ու քաջալերութիւնը տալով՝ որ իրենց հոգիներուն փրկութեանը հոգ տանին :

Աստուած արդար Աստուած մըն է , ու վերջին օրը պիտի պատժէ ան ամէն անիրաւութիւնը՝ որ մարդիկ տկար և անօգնական անձանց կ'ընեն : Ան ատենն ամենուն Տէրը

Ճշգրտ պիտի քննէ բոլոր մեր ունեցած վարմունքներն ան մարդոց հետ՝ որ ինքը դրաւ մեր իշխանութեանը տակը : Բնդհանրապէս ծառաներուն վիճակն անարգ ու թշուառ է : Իարի տեր մը՝ բոլոր իր ջանքը պիտի թփփէ , արդար ու բաղդը վարմունքով հաճելի ընելու անոնց վիճակը՝ աս կեանքին մէջ . նաև իր կրցածին չափ պիտի աշխատի խրատով ու օրինակով անանկ ընթացք մը բռնել տալ անոնց՝ որ երջանիկ ու կատարեալ ըլլան հանդերձեալ կեանքին մէջ :

6 . Ծառաներուն պարտաւորութիւնը :

Օճոր . ԻԴ . 1-67 :

▲ . Ծառաներուն ԲՆՆ պատուէր տուաւ Մատուած՝ իրենց տէրերուն նազանդելու վրայով :

Պ . “ Ծառաներ՝ ամէն բանի մէջ նազանդ եղիք ձեր մարմնաւոր տէրերուն . չէ թէ աչքի առջև ծառայելով՝ մարդահաճոններու պէս , հապա սրտի միամտութեամբ՝ Տէրոջմէ վախնալով ” : ԱՊ . Գ . 22 :

▲ . “ Աչքի առջև ծառայել ” ԲՆՆ ըսել է :

Պ . Ես խօսքը կը վերաբերի ան ծառաներուն վարմունքին՝ որոնք միայն իրենց տիրոջը աչքին առջևը աղէկ կը ծառայեն :

▲ . Են ծառան՝ որ իր երկրաւոր տիրոջը աչքին առջևը միայն կը ծառայէ , իր երկնաւոր Տէրոջը առջևն ալ նոյնպէս պիտի վարուի :

Պ . Հրամարես :

▲ . Ուրեմն ծառաներն ԲՆՆ պէս պիտի ծառայեն իրենց տէրերուն :

Պ . “ Յօժարութեամբ պիտի ծառայեն որպէս թէ Տէրոջը , ու չէ թէ մարդոց ” : ԼԳԻ . Գ . 7 :

▲ . Իրենց տէրերուն ԲՆՆ բանի մէջ հաճելի ըլլալու պիտի ջանան :

Պ . “ Եմէն բանի մէջ հաճելի պիտի ըլլան , ոչ հակառակասունք ” : ՏԻ . Թ . 9 : ԽՊԻ . Թ . 18-21 :

▲ . “ Ոչ հակառակասու ” ըսելով ԲՆՆ ըսել կ'ուզէ :

Պ . Բնէ կ'ուզէ որ՝ պէտք չէ սննդհամեմութեամբ դիմադարձութիւն ընել՝ երբոր կը յանդիմանուի յանցանքի մը համար :

▲ . Ծառայի մը ներուամ է որ իր տիրոջմէն գողութիւն ընէ , սուտ խօսի անոր , կամ խարէութիւն բանեցունէ՝ անոր համար բան մը ծախու առած ատենը :

Պ . Զ . ման զի իր պարտաւորութիւնն է , “ բոլորովին բարի հաւատարմութիւն ցուցնել ” : ՏԻ . Թ . 10 :

▲ . Թէ որ ծառաներն իրենց պարտաւորութիւնը հաւատարմութեամբ կատարեն , ու իրենց ծառայական վեճակին մէջ Մատուոյ ծառայեն , ան ատենը յարգելի պիտի չըլլա՞ն մարդոց .բով , ու օրնեալ և պատուելի Մատուոյ առջևը ուրիշներուն պէս :

Պ . Եր պիտի ըլլան . որովհետև “ Եմն մէկը ԲՆՆ բարիք որ ընէ , նոյնը Տէրոջմէն պիտի ընդունի , թէ ծառայ ըլլայ և թէ աղատ ” : ԼԳԻ . Գ . 8

Ե . Թնող ծառաները հաւատարմութեամբ ծառայեն իրենց տէրերուն՝ նաև անոնց ետեւն ալ , ինչպէս որ անոնց առջևը : Մատուած միշտ կը տեսնէ , թէ և տէրերը հոն չըլլան :

Ի . Ծառաները երբեմն անանկ կը կարծեն , որ անոնց Մատուած բարկացունելու՝ կրնան իրենց տիրոջը

սուա խօսիլ ու խարէութիւն ընել, և անկից զողնաւ. բայց ասանկ չէ. ինչու որ Մատուած չհաճիր ասանկ բանին. անիկայ կը պահանջէ արդարութիւն ու հաւատարմութիւն ամէն մարդոյմէ և ամէն պարագայի մէջ :

7. Իշխաններուն պարտաւորութիւնը :

Գ Թառփ . Գ . 1-28 : Դաս . Գ . 1-37 :

Ա . Պէտք է որ ամէն երկիր և ամէն ժողովուրդ օրէնք ունենայ , և հասարակութիւնը ան օրէնքին նազանդեցունելու համար ալ՝ իշխաններ և կառավարիչներ ըլլան :

Պ . Արամերես :

Ա . Թէ որ քաղաքներնուս մէջ ոչ օրէնք ունենանք ու ոչ ալ կառավարիչ , կրնանք սպահով կամ երջանիկ ըլլալ :

Պ . Չէ . քանզի ան ատեն ամէն մարդ իր ուզածը կ'ընէ : Դաս . ԺԷ . 6 : Տէս նաև ժը և ժի՞ զլուխները :

Ա . Պէտք է որ ամէն կառավարիչ Մատուածէ կարգուած՝ և Մտով մեզ կառավարելու դրուած սեպկնք :

Պ . Արամերես . " Վասն զի չկայ իշխանութիւն մը որ Մատուածէ չըլլայ . և անոնք որ կան՝ Մատուածէ կարգուած են " : Առով . ԺԳ . 1 :

Ա . Իշխաններն ի՞նչպէս մարդիկ ըլլալու են :

Պ . " Վարդը մարդիկ՝ Մատուածէ վախող՝ ճշմարտասէր ու ազահոլութիւնը ատող մարդիկ " : Եւնց ժը . 21 :

Ա . Ենոնք որոնք վախով ժողովուրդը կառավարելու են :

Պ . Մատուոյ վախով : Թ Օրէն . ԺԷ . 14-20 : Հիտ . Թ . 8 : Թ Թառփ . ԻԳ . 3 : Թ Սնայ . ԺԹ . 4-11 :

Ա . Իշխանները երկու մարդոց դատը ի՞նչպէս պիտի տեսնեն :

Պ . Սրդար դատաստանով : Թ Օրէն . ԺԳ . 18 , 19 : ԺԷ . 6 : Եռափ . ԻԹ . 12-14 : Երէմ . ԻԹ . 2-4 :

Ե . Բոլոր երկրիս վրայ եղած ամէն ազգի և ժողովուրդոց անուշտ հարկաւոր է օրէնքներ և իշխաններ ունենալ : Մարդս բնականաբար անօրէն էակ մըն է . ուստի պէտք է որ միշտ իշխանութեան տակ ըլլայ :

Բ . Երբոր մէկը իշխան կ'ըլլայ , Մատուոյ ձեռքովը կ'ըլլայ . այսինքն՝ Մատուած կը կանչէ անիկայ ան պաշտօնին : Մատուած՝ իր նախախնամութեամբը թող կու տայ որ կառավարէ : Եւ անիկայ Մատուոյ սպասաւորն է , և պէտք է որ ան պաշտօնովը ծառայէ Մատուոյ : Եւ ժողովուրդն ալ պէտք է որ իբրև " Մատուոյ սպասաւոր " համարին անիկայ : Առով . ԺԳ . 4 :

Պ . Իշխանները բարձր պաշտօնի կանչուած են . և որովհետև կրնան ժողովուրդին շատ բարիք կամ չարիք ընել , անոր համար պէտք է որ " կարող մարդիկ՝ Մատուածէ վախող՝ ճշմարտասէր ու ազահոլութիւնը ատող մարդիկ " ըլլան . բարեմիտ և բարեխիտ մարդիկ . որ մէկուն՝ մէկայն աւելի աչառութիւն չունեն , որ մէկու մը երեսպաշտութիւն չունեն , որ ծուռ դատաստան կտրելու համար կաշտք չուտեն :

Պ . Ենոնք պէտք է վարձատրեն արդարները և պատժեն չարերը , ամէն մարդոց իրաւունքը և արարները պաշտպանելով , անանկ որ չարութիւն ընողներն իրենցմէ վախնան , և բարիները քաջալերութիւն առնեն . որ այսպէս իրենց երկիրը բարեհամբաւ ըլլայ ու յաջողութեամբ յառաջ երթայ . և ժողովուրդը հանգիստ և ուրախ ըլլայ :

8. Ժողովուրդին պարտաւորութիւնը :

Հոով. ԺԷ. 1-14 :

Հ. Որովհետեւ իշխանները մեր աղէկութեանը համար դրուած Մտուծոյ պաշտօնեաներն են , ուստի պէտք չէ՞ որ պատուենք և յարգենք անոնք :

Պ. Հրամարես : Ին ԳԷԹ. Է. 17 : Եւր. ԻԷ. 21 :

Հ. Հրաման ունի՞նք մեր իշխանները վար զարնելու կամ անոնց դէմ խօսելու :

Պ. Չէ՞. Ինչու որ դրուած է , թէ « Դատաւորները մի հայհոյեր , և քու Ժողովուրդիդ իշխանը մի անիծեր » : Եւնց ԻԷ. 28 : Եւ դարձեալ՝ « Ուստի հատուցէք պէտք եղածը ամենուն . որուն որ տուրք պարտուի՝ տուրքը , որուն որ մարս՝ մարսը , որուն որ վախ՝ վախնալը , որուն որ պատիւ՝ պատիւը » : Հոով. ԺԷ. 7 : Սոթ. ԻԷ. 21 : ԺԷ. 24-26 :

Հ. Իարի քաղաքացին ինչով կը ճանչցուի :

Պ. Իշխաններուն նազանդելովն ու քաղաքին ամէն օրէնքները բռնելովը :

Հ. Մենք օրէնքին նազանդելէն ՚ի զատ՝ ուրիշներն ալ համոզելու պարտաւոր ենք :

Պ. Հրամարես :

Հ. Են որ օրէնքը կ'աւրէ՞ շնագանդիբ՝ մարդասպանութիւն ու զողութիւն կ'ընէ , արժան չէ՞ որ բռնուի և օրէնքին հրամայածին պէս պատժուի :

Պ. Հրամարես : Է Օրէն. Ին. 1-3 :

Հ. Ուստի աղէկ բան է որ զող մը կամ մարդասպան մը ազատենք , ծածկելով իր եղած տեղը և իր վախճելուն օրէնքով :

Պ. Չէ՞ . քանզի այսպէս՝ քաղաքին սպահովութեանը կը վնասենք :

Հ. Մենք իշխաններուն համար աղօթելու յատուկ հրաման մը եղած կայ մեզի :

Պ. Հրամարես : « Երդ՝ կ'աղաչեմ . ամէն բանէն առաջ՝ աղօթք ընել , խնդրուածք , աղաչանք , զոհութիւն՝ ամէն մարդոց համար , Խոնարանք թագաւորներուն և բոլոր իշխանաւորներուն համար . որ խաղաղ ու հանդարտ կեանք վարենք՝ բոլորովն աստուածպաշտութիւնով ու պարկեշտութիւնով : Ինչու որ ան է աղէկը ու ընդունելին մեր Փրկիչ Մտուծոյն առջևը » : Ին ՏԷ՛. Է. 1-3 :

Ե. Ժողովուրդին պարտաւորութիւնն է իրենց իշխանները պատուել և յարգել . անոնք Մտուծոյ սպասաւորներն են . ուստի պէտք է որ Ժողովուրդը իշխաններուն պատիւն ու յարգը ճանչնայ , արժանաւոր գովութիւն տալով իրենց պաշտօնին մէջ ցըրուցած աղէկ վարքերուն համար . ու իրենց երբեմն ըրած պակասութիւններն և մտաւոր պաշարմունքներն ունենալէն և դէշ լուրեր լսելէն՝ պէտք է վախճիլ , և ամէն ինչ որ կ'ընեն կամ կ'ըսեն , զգուշանան իրենց իշխաններուն պատուոյն դպելէն :

Բ. Պէտք է որ Ժողովուրդը երկիւղածութիւնով և կատարելապէս նազանդի քաղաքին օրէնքին և իշխաններուն : Են որ իշխանները վար կը դարնէ և օրէնքը կ'աւարդէ , բոլոր իր քաղաքակից Ժողովուրդին դէմ կը մեղանէ . նաև կը մեղանէ մեր Տէր Հիսուսին կրօնքին դէմ՝ որ կը սորվեցունէ մեզի նազանդ ըլլալ ամէն անոնց՝ որոնք մեզ կատարելու իշխանութիւն ունին :

Գ. Մենք չէ՞ թէ միայն օրէնքին նազանդելու ենք , հասցնաւ նաև զանք ընելու ենք բոլոր մեր քաղաքակիցներն ալ մեզի պէս նազանդեցունելու : Ու երբ մէկը օրէնքն անարդէ՝ զողութիւն , սպանութիւն կամ ինչ և իցէ չա-

ՎՐԻՍՏՈՆԵՆԿԱՆ

բազործութիւն ընկելով, պէտք չէ որ մենք մեր օգնութիւն
նոյն անիկայ պաշտպաններ կամ փախցուններ, քանզի
ասանկով քաղաքին ապահովութիւնը և համբար կ'աւ-
րուի :

Վ. Մտուած կ'ուզէ մեզմէ որ, չէ թէ միայն յար-
դութիւն տանք և նազանդինք իշխաններուն, հապա նաև
աղօթք ընենք անոնց համար, որ Մտուած օրնէ անոնք,
և անոնց ընտանիքները • որ բարի իշխաններ ըլլան, աս-
տուածավախ, իրենց պաշտօնը հաւատարմութիւնով կա-
տարող, ժողովրդոց աղէկութիւնը փնտրող, անանկ որ
ամէն խաղաղութիւնով մենք ալ մարդոց ու Մտուածոյ մեր
ունեցած պարտաւորութիւննիս աղէկ կատարենք :

Handwritten scribble

« Ազգային գրադարան



NL0030088

